ՄԱՏԱՂԱՅ

Է· ՅԱՒԱՐԻՍ ՌՈՑԵ Մ·

ՀՔԱՄԱԾՈՒ

Տ· Տ· ՄԿՐՏՉԻ Ա·

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆՈՒԹԱԿԱՆ – ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԱՄՍԱԳԻՐ

ԾԱԽՔ· ԻԸ· ՏԱՐԻ· ՀԱՅՔԱՅԻ ԵՕՔ ՆԵՔՈՒՔՔ ՅՈՒԼԻՍ 1895 Թ·

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԽՕՍՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԴՈՐՔ·

· Լինիջի՛ք առնելիք քանին եւ մի՛ լսելիք միայն համարեսջի՛ք զանձինս: Զի թէ ոք լսող միայն իցէ բանին՝ եւ ոչ առնելի, նման է նա մարդոյ, որ պաշուհեալ հայիցի յերեսս իւր, որ ծնանիցին ի հայելոջ· զի հայեցեալ ետես զինքն եւ զանց արար, եւ անդէն մոռացաւ թէ որպիսի ոք էր ։

Ցակ· Ա· 22 - 24·

Դժուար կլինէր աւելի զեղեցիկ օրինակ բերել այն զրոյթիւնը բացատրելու համար, որի մէջ գտնուում է մարդկանց մեծագոյն մասը, երբ նոցա ականջին կեանքի մի նոր քարոզ է լսուում, երբ հասարակական մի նոր շարժում իւր ալիքների միջն է առնում նոցա։— Մին աշխարհի փիլիսոփաները բնութիւնն ու մարդկային հոգին ուսումնասիրելուց յետոյ այն եղրակացութեանն էին եկել, որ ուղիղ ճանապարհով դէպի բարին ու կատարեալը յառաջադիմելու առաջին պահանջն ու ամենահիմնատուն օրէնքը ինքնաճանաչութիւնն է· բայց նոցա չէր յաջողուել գտնել այնպիսի մի ջինջ և անխարդախ հայելի, որի մէջ մարդիկ իրենց կատարեալ պատկերը տեսնել և ինքզինքը ճանաչել կարողանային։ Ա՛ւետարանը եղաւ այդ հայելին, և ամէն ոք, որ միանգամ նորա վերայ մի հայեացք է ձգել, չէր կարող կանգ չառնել և պշուցեալ չդիտել այն ատուգագոյն, այն բարձ-

բազոյն ճշմարտութեան համաձայն պատկերը, որ նորա մէջ նկարուած էր տեսնում։ Բայց ամէն անգամ երբ գործի ժամանակը եկել է, քչերն են գտնուել, որոնց մէջ տեսածի տպաւորութիւնը հաստատուն մնալով իրականութիւն դառնար։ Մեծամասնութիւնը իւր որպիսի ոք եղածը մոռանալով՝ կրկին հին ճանապարհն է շարունակել։

Ընտեսարանը շատ հետևողներ ունէր դեռ Փրկչի աշխարհիս վերայ ընթացած ժամանակ. նորա խօսքը գրեթէ ամէնքի վերայ ազդեցութիւն էր գործում, շատ շատերը հաւատում էին նորան՝ ցոյց էին տալիս գոնէ, որ հաւատում են. «Բայց ինքն Յիսուս ոչ հաւատայր զանձն նոցա ... զի ինքն իսկ գիտէր՝ զինչ կըրէր ի մարդն»։ Այո՛ նա, որ միակն է եղել մարդկանց որդիներից իւր բոլոր խօսքերի և գործերի մէջ կատարեալ ներդաշնակութիւն պահպանող՝ գիտէր, թէ մարդկային կրքերի բռնութիւնը, մտքի ծուլութիւնը, կամքի թուլութիւնը ինչպիսի խոչընդոտներ հանել կարող են ճանաչած ճշմարտութեան գործադրութիւնը արգելելու համար, և երբ մեծատուն պատանին պարզամտօրէն պնդում էր, թէ մանկութենէ ի վեր սրբութեամբ պահել է աստուածային բոլոր պատուիրանները՝ Նորա մի խօսքը բաւական եղաւ ցրելու այդ ամբարտաւան ցնորքը. Գնա՛, ծախի՛ր բոլոր ստացուածքդ և եկ իմ հետևից—աւելի հեշտ էր ըստ ձևի ամենածանր պատուիրանները պահել, իւր սէրն ու ամէն ինչ տեսականապէս Աստծուն և ընկերին նուէր բերել, քան իրօք այդ մի թեթև բանը կատարել՝ ակնկալեալ բարէբաղդն բարիքների համար զրկուել ներկայում նիւթական բարիքներից, մի կոյտ անօգուտ իրեղէններից։—Իսկ թէ ինչ պատկեր էր ներկայացնում Փրկչի հետևողների շրջանը, նորա իրենց միջից հեռանալուց ոչ շատ յետոյ՝ խիստ կենդանի գոյներով մեր առաջն է գնում այդ նոյն ինքն Յակոբոս, մեր յառաջ բերած բնաբանի հեղինակը։ Կեղծիք, ընչասիրութիւն, սորկական լռնարհութիւն հարուստների առաջ, արհամարհանք և ատելութիւն դէպի հաւատակից թշուառ եղբայրները, մեծամտութիւն, թերահաւատութիւն, լեզուագարութիւն, ևն. ևն., սովորական երևոյթներ են այդտեղ, ինչպէս և շրջապատող հասարակութեան մէջ. անունը, արտաքին յարաբերութիւնները փոխուել են, բայց ներքին տրամադրութիւնը, գործը նոյնն է մնացել շատերի համար։—Ահա այսպէս դժուար է եղել միշտ խօսքը գործի փոխել, մինչև իսկ այն խօսքը, որ «իրրև ըղհուր» էր և «իրրև զմուրճ, որ հատանէ զվէմ»։

Հասարակական կեանքի մէջ ամէն մի նոր շարժում խօսքով է սկսում։ Նախ քան կեանքի մէջ մի նոր փոփոխութիւն կընկնի, փոփոխութիւն է ընկնում մտքերի մէջ, արծարծուում և ընդունելութիւն է գտնում նոր գաղափարը. բայց այդ փոփոխութիւնները շատ աւելի հեշտութեամբ են կատարուում տեսական աշխարհում, քան թէ իրականութեան մէջ. մինչև որ գաղափարը մարմնանայ, խօսքը գործ դառնայ՝ շատ տարիներ, մինչև իսկ դարեր են պէտք։ Ընդհակ դարում երբ մտքի ազատութիւնը, լուսաւորութիւն ասածը, Եւրոպայի ժողովրդեան զանազան խաւերի մէջ մուտք գործել սկսեց, գնալով տարածուեցաւ և ծաւալ ընդունեց՝ խօսքն էր, գրաւոր թէ բերանացի, ամբողջ քաղաքակիրթ աշխարհը կառավարող ոյժը. խօսքով քանդում էին ու շինում, խօսքով ամէն ինչ կարելի դարձնում։ Բայց ահա մի ամբողջ դար անցել է, և դեռ շատ բան լոկ խօսք է մնացել, այն ժամանակ արծարծուող գաղափարների մի փոքրը մասը միայն գործադրութիւն է գտել։ Դորա փոխարէն մարդիկ աւելի լրջացել, իրերի իսկական արժէքը աւելի լաւ գնահատել են սովորել. այլ և այնպէս ամենաշատ յարգանքը նորան չեն ընծայում, որ հրապարակի վերայ ամենից աւելի է կանչում, իւր սենեակում նստած օդային ամրոցներ կառուցանում։ Խօսքի հետ գործ էլ են պահանջում, գրական համեստ աշխատանքը բարէբաղդ խոստումներից և աչք շլացնող արտաքին ցոյցերից վեր դասում։

Սակայն միաժամանակ իրերի նոյն դրութիւնը, որ մի դար առաջ քաղաքակրթութեան առաջնակարգ կեդրոններում տեղի ունէր, հետզհետէ մուտք է գործել աւելի և աւելի խուլ անկիւններ, պակաս քաղաքակիրթ աշխարհներ։ Ռուսաստանում աչքի էր ընկնում այդ երեւնական, վաթսունական թուականներին, թէև մինչև հիմա էլ իւր նշանակութիւնը չի կորցրել, իսկ մեզանում դեռ բոլորովին ծաղկեալ վիճակի մէջ է։ Այն գաղափարները, որ ուրիշ տեղեր վաղուց արդէն հնացել անցել են՝ մեր առաջ յաճախ իբրև գիտութեան վերջին խօսք, իբրև քաղաքակրթութեան ամենակատարեալ եղրակացութիւն քարոզուում են, և հարկաւոր է միայն այդ գաղափարներից մի քանիսը սեփականացրած լինել, որպէս զի ամէն մի նորատի պատանի և փողոցային թափառաշրջիկ ամենագարգացած մարդը համարէ իրեն աշխարհիս վերայ։ Հարկաւոր է մի կարգ խօսքեր սերտած լինել և ամէն տեղ, ամէնքի առաջ կրկնել, որպէս զի ամէն ոք կարողանայ ծանօթ անծանօթի ւօթա լուսամիա և յառաջադէմ եւլաւ։ Ինչպէս արդարև մենք նոյնպէս, հետեւելով ուրիշների օրինակին, գրծ ենք կանչում գործ պահանջում, բայց իրօք անչափ մեծ նշանակութիւն ենք տալիս խօսքին. և ինչով են ժամանակակից ժողովրդական հերոսներից շատերը իրենց ժողովրդականութիւնը ձեռք բերել, եթէ ոչ խօսքով, դատարկ խօսքով միայն։ Հարցրէք, թէ ինչու մարդկանց մի ամբողջ դասակարգ այս ինչ անձին փառաբանում հանճարի տէր, բարեգործ, ազգօգուտ մարդ է հռչակում անչուշտ ամէնքը միաբերան կպատասխանեն, թէ նա շատ երեւելի գործեր է կատարել, մինչդեռ ոչ ոք հաշիւ տալ չէ կարող, թէ որոնք են այդ գործերը, մինչդեռ փառաբանած անձի բոլոր արժանիքը միայն նրանում է, որ մի քանի լուսաւոր համարուած գաղափարներ է դաւանում, լուսաւոր խօսքերով և արտաքին շարժումներով ու ձեւերով միամիտների աչքը շլացնում։ Նը բաւական է, որ մէկը այս ճանապարհով հեղինակութիւն ձեռք բերած, ոչ ոք այլևս նորա դէմ բան ասել չէ կարող, փորձեցէք հաստատուն դրաւոր փաստերով ապացուցանել, որ նա կեղծում է, դաւաճանում է իր կոչման, ոտնակոխ է անում ամենանուիրական օրէնքներն ու սրբութիւններ, և ամէնքը միատեղ ձեզ վերայ կյարձակուին, կբղաւեն՝ դաւաճան, խաբեբայ ձեզ կանուանեն։ Պատճառն այն է, որ մեք լսելիք քանին եմք միայն եւ ոչ առնելիք, ուստի և դորա համապատասխան մարդկանց ենք սիրում ու յառաջ քաշում։ Այս այնպիսի ժամանակներ են, երբ պլուս են բարձրացնում մի կարգ անձնաւորութիւններ, որոնց համար կարելի է ասել, թէ իրենց կեանքում ոչինչ չեն սովորում և ամէն ինչ մոռանում են։ Ընձեռնական և անթիւ օտար օրինակներով նոքա գիտեն, որ ոչ մի ստութիւն, ոչ մի վատութիւն անպատիժ մնալ չէ կարող, արտաքին փառքն ու շուքը անցաւոր են, ամբոխի գովեստն ու համակրութեան ցոյցերը երբէք տեւական չեն եղել՝ բայց միւսները կրկին միշտ անխրատ։ Գուցէ երբեմն նոցա ևս պատահում է ճշմարտութեան հայելու մէջ իրենց դէմքը տեսնել և սարսափել. բայց կեանքի հոսանքը շուտով առնում տանում է և անարդար ճանապարհով ձեռք բերած նոր նոր գաւխինները մոռացնել են տալիս նոցա որպիսի ոք եղածը. բարդի փայլով կուրացած՝ շարունակում են նոքա ամէն մի հայելու մէջ իրենց տգեղ դէմքը գեղեցիկ տեսնել։

Այդպիսի կորստաբեր մոռացութիւնից ահա գգուշացնում է մեզ Ռաֆայէլի ազդարար ձայնը. «լինիջիք առնելիք բանին և մի՛ լսելիք միայն համարեսջիք զանձինս»։ Նը որպէս զի խօսքը գործ դառնայ, մենք ամէնքս մեր պարտքերը կատարած լինենք, դատարկապորտ անպատուղ մի սերունդ չհամարուինք, ունայն խօսքերի և վիճաբանութեանց փոխարէն գործական օգտաւէտ արդիւնք յառաջ բերենք՝ հարկաւոր է որ չափել իմանանք մեր կարողութիւնները, տեսնել և ուղղել մեր թերութիւնները՝ անցրած ամէն մի ժամի համար հաշիւ տանք մեզ, ոչինչ չմոռանանք, սովորենք ան-

դատար և սովորածը գործ դնելու աշխատենք։ Հարկաւոր է որ ճանաչենք մեզ և մեր շրջապատը։ Նե եթէ ամենաջինջ, հրաշակերտ հայելին, որի մէջ ոչ միայն մեզ մեր բոլոր պակասութիւններով տեսնել կարող ենք, այլ նա և այն կատարելատիպը, որի համաձայն մեր խօսքն ու գործը ուղղուած պէտք է լինի՝ սուտարանն է, սակայն պատմութիւնն ու ներկայ կեանքն էլ մեզ իրրև հայելի ծառայել կարող են։ Գործի ժամանակամիջոցում ենք ապրում և հարկաւոր չէ անպատճառ, որ այն բոլոր շրջաններն անցնենք, որոնցով անցել են մեզ համար ճանապարհ հարթող քաղաքակրթ ազգերը։ Մենք այն բազդաւոր վիճակի մէջ ենք, որ նոցա փորձերից և զոհաբերութիւններից խրատուել կարող ենք և այդ փորձերի միջոցով յղկուած կեանքի հայելու մէջ աւելի պարզ տեսնել մեր անելիքը, քան նոքա իրենց ժամանակին տեսնել կարող էին։ Հարկաւոր է միայն սիրտ ունենալ ամենայն համարձակութեամբ ճշմարտութեան աչքերի մէջ նայելու և մեր որպիսի որ եղածը տեսնելուց յետոյ՝ ոչ մի ջանք, ոչ մի զոհաբերութիւն չխնայելու, որպէս զի կատարելութեան հասնենք։

Կ. Վ.

ՄԻ ՆՈՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ.

Մայիսի 25-ին Բրեմեն քաղաքի թատրոնում մինչև այժմ չտեսնուած մի ներկայացում տեղի ունեցաւ—խօսքային մի կրօնական թատերերգութիւն (Oper) «Քրիստոս» անունով, որի բնաղիրը պատկանում է գեղարուեստագէտ (Aesthetiker) ուսուցչապետ Bulthaupt-ին, իսկ երաժշտութիւնը նորերս վախճանուած Բուբինշտայնին։ Նրա պայմանում թէ և նորութիւն չեն կրօնական բովանդակութեամբ ներկայացումները կամ երաժշտական հանդէսները, բայց միանգամայն նորութիւն էր կրօնական «օպերը»՝ այն էլ քաղաքային թատրոնի բեմի վերայ։ Օգտուելով գերմանական կրօնական և քաղաքական թերթերից՝ կաշխատենք համառօտ ներկայացնել այդ օպերայի թողած տպաւորութիւնն ու բովանդակութիւնը։

Առաջուց արդէն մեծամեծ պատրաստութիւններ էին տեսնուած ներկայացումը ըստ կարելոյն շքեղ և կատարեալ անելու համար, մի տիկին իւր դահլիճը յատկացրել էր հագուստները պատրաստելու, ուր գործում էին բազմաթիւ աշխատաւորներ. թատրոնը բոլորովին փոխել էր իւր տեսքը, տօնական, շքեղ կերպարանք ստացել. նկարիչ Հանդրիխը այդ ներկայացման համար յատուկ դեկորացիաներ էր պատրաստել. երկու սեռի 300 հոգուց երգեցիկ խումբ էր կազմած։ Ձէր խնայուած ոչինչ, ինչ որ կարող էր նպաստել գեղեցկութեան, արուեստի կատարելութեան։ Քաղաքի հարուստները խոստացել էին լրացնել ծախսի պակասը։ Հրաւիրուած էին Գերմանիայի յայտնի երգիչներն ու երգչուհիները։ Դա մի հասարակ ներկայացում չէր, նպատակը փող վաստակելը չէր, այլ արուեստը իւր կատարելութեամբ հանդէս բերել, և դա գեղարուեստական անհոման մի գործ կլինէր, եթէ չպակասէր, ինչպէս նկատում է Evang. kirchlicher Anzeiger-ը մի բան, որ այդ գործին իւր իսկական արժէքը պիտի տար—կրօնական ոգին։ Քրիստոսի դերը յանձնուած էր օրինակ մի հրեայի, Իրեսլաւի քաղաքային թատրոնի վերատեսչին, թէև ինչպէս ասում են կոմպոնիստի յատուկ ցանկութեամբ։ *

* Երաժշտութեան մասին կարծիքները տարբեր են։ Nat. Zeitung-ի լրատուն մեծ ոգեւորութեամբ գրում է։ «Ռուբինշտայնի երաժշտութիւնը միանգամայն համապատասխան է քնագրի վեհ բովանդակութեան եւ ողբերգական գործողութեան։ այստեղ այնտեղ կտորներ կան, որ աւելի պակաս են յաջողուած, բայց ընդհանրապէս վեհութիւնը գերակշռող է, այնպէս որ իւրաքանչիւր գործողութիւն խորին տպաւորութիւն է թողնում։ Ուրիշները ընդհակառակ գրում են, թէ պատկերները ցամաք, անհրապոյր են, երաժշտութիւնն առանց զգացմունքի, առանց մելոդիայի եւ ընդհատութեան։ Ցամաքն դէպս պէտք է յիշել, որ ընթերցը, Պիղատոսի պալատի առաջ կատարուող ողբերգական կենդանի տեսարանը եւ Գուդայի դերից երկու միջնադէպերը ամբողջութեան մէջ կըզգացած տեղ են գտնում։ Brem. kirchenblatt-ն էլ իւր կողմից շեշտում է, որ միանգամայն անյարմար էր մի այդպիսի նիւթ թատրոնական բեմի վերայ հանելը։ Սակայն ընդհանրապէս ամէնքն էլ մի գեղարուեստական գործ են

Թատրոնը իսկապէս արտաքուստ զարդարելու կարիք չկար՝ շինութիւնն ամբողջապէս թաղուած էր մայիսեան կանաչի մէջ, բայց և այնպէս չէին մոռացել զարդարել մուտքի դռները։ Պարտիզպանական արուեստը թափել էր իւր բոլոր ճարտարութիւնը և հարաւային բոյսերի մի պուրակ դարձրել նոցա։ Ներսը լուսաւորուած էր արշալուսի կիսամութ լուսաւորութեամբ, այնպէս որ դժուարութեամբ կարելի էր նկատել առարկաները՝ աղօտ, կարմրագոյն մի լուսաւորութիւն։ Պատերը նոյնպէս երկու կողմից լուսաւորուած էին եղեքարեան ջահերի կարմրավառ լուսով։ Պարագոյրը փոխուած էր, յարմարեցրած դեկորացիային, մութ գունով. մէջտեղը խաչելութիւն, երկու արմաւենու ոսկի հովհարներ աջ ու ձախ կողմից թեքուած դէպի խաչը։

Սկսուում է նախերգանքը։ Երաժշտութիւնը մի բեկբեկուող, վշտալի մեղեդի է նուագում։ Պերպաշնակութիւնը աքանչելի է. թրթռացող երաժշտութեան հետ թրթռում է և չէր սիրտը, յուզումը գնալով զօրանում է և վշտի զգացումը տիրում է ձեր հոգու վերայ։ Հետզհետէ խաղաղում է երաժշտութիւնը. բացուում է վարագոյրը։

Խորին գիշեր է. հեռու, մթութեան մէջ միայն մի աստղ է փայլում կանգնած մի խրճիթի վերայ։ Առաջին մասում հաւաքուած են հովիւները, արևելեան, նահապետական հագուստներով. ոմանք իրենց հովուական ցպի վերայ կրթնած, միւսները մատով հրաշքն են ցոյց տալիս՝ մթութեան մէջ փայլող աստղը։ Հա ձեղքուում են ամպերը և մի նոր հրաշք է բացուում նոցա աչքերի առաջ՝ երկինքը լի մանկական, քաղցրիկ դէմքերով. հրեշտակների դասերն են դոքա՝ սպիտակ և ոսկեգոյն հագուստներով, մազերի խոպոպիքների վերայ վարդի պսակներ։ Հրեշտակները փառաբանական երգ են երգում, նրանց երգակցում են հովիւները. ապա անհետանում է այս չքնաղ տեսարանը։ Հնչում է մի օտարոտի երաժշտութիւն։ Արևելեան, պերճ հագուստով, կախարդական փուշիներով (չալմայ) գլուխը փաթաթած երևում է երկիք թագաւորներից առաջինը իւր թիկնապահների հետ։ Նորան հետևում է հիւսիսային թագաւորը, գազանի մորթին կրծքի վերայ և պատերազմական նշաններով։ Երրորդ թագաւորը մի աւելազարդ ծերունի է, արտաքինը հնդկական մոդի։ Նորից հնչում է հովիւների երգը։ Խրճթի դուռը բացուում է և երևում է մսուրքը։ Յովսէփ յենուած իւր գաւազանի վերայ, Մարիամ խոնարհած դէպի Մանուկը, որից լոյս է արտացոլում։ Դա մի գիւթական, կախարդիչ պատկեր է։ Թագաւորները ծունկ են չոքում երկրպագելու... կարծես կամենում են փարել Փրկչի պատկերին։ Հովիւների փառաբանական երգերով վերջանում է նախերգանքը։

Առաջին տեսարանը անապատն է ներկայացնում. բեմի առաջին մասում ցցուած են ժայռեր, որոնք երկու կողմից գալով մի դուռ են կազմում։ Յիսուս երևում է ժայռերի մէջ սպիտակ հագուստով. նա առանձնութեան մէջ հշմարտութիւնն է փնտռում և գանում է... Ստուած է այդ ճշմարտութիւնը։ Յաւիտենական հաւատարմութիւն է ուխտում նա։ Հա նորա ետևի կողմից երևում է սատանան, լայն, սև հագուստով, սև թևերով՝ փորձելու նորան։ Յանկարծ, կարծես մի կախարդական շարժումով, անապատի տեղ բռնում է մի շքեղ, չնաշխարհիկ տեսարան, տարածութեան ամենահեռաւոր կէտերում երևում են քաղաքներ, աշտարակներ, ոսկեփայլ դղեակներ, ձոխ պարտէզներ։ Յիսուս ծունկ է չոքում աղօթելու՝ չքանում է կախարդական պատկերը. ծունկ է չոքում նորա հետ և փորձիչը։ Պարագոյրը ցած է իջնում՝ ծածկելով աղօթողներին։

Երկրորդ տեսարանը դեկորացիայի կողմից նոյնպէս աքանչելի է. դա ներկայացնում է Յորդանանի դեղածիծաղ հովիտը. Յորդանանի այն կողմը թափթփած ժայռեր, այս

Համարում այս թատերգութիւնը եւ մեծ ոգեւորութեամբ գրում հանդիսականների վերայ թողած տպաւորութեան մասին։

կողմը ձոխ, փարթամ դաշտավայր է ներկայացնում: արմաւենիները բարձրուղէշ կանգնած են բեմի երկու կողմից: Մէջ տեղ երևում է Յովհաննէս, ցուլը ձեռքին. նա ապաշխարութիւն է քարոզում իւր առաջ խըռնուող ամբոխին: Աբևելեան երփներանգ հագուստը, խռնուող ամբոխը խորին տպաւորութիւն են թողնում: Ամեն ինչ բնական, կարծես իրական լինի: Լերան գլխից յամրաքայլ իջնում է Յիսուս և մկրտուիլ ցանկանում: Նա իջնում է Յորդանանի մէջ. Յովհաննէս ջուրն ածում է նորա գլխի վերայ: Երկնքից իջնում է աղաւնին և մի պայծառ շող լուսաւորում է Յիսուսի դէմքը: Ընտեսանելի հրեշտակների գունդը երգում է. «Դա է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ»: Պշած ժողովրդի երգը խառնուում է հրեշտակների երգի հետ. սորանով վերջանում է և այս պատկերը:

Հետևեալ պատկերը լերան քարոզն է: Լերան ստորոտում դաշտավայրը տարածուում է հեռու, հեռու: Ըջ կողմից բարձրանում է մի ժայռ. նորա տակ կանգնած է Յիսուս, իսկ առաջը աշակերտներն ու ժողովուրդը: Ժողովրդի հագուստների տարբերութիւնը ցոյց է տալիս, թէ նորա առաջ կանգնած են ամեն տեսակի մարդիկ՝ հարուստ, աղքատ, իշխան, ռամիկ. ամէն ինչ բնական, անարուեստ կերպով: Հրաշալի պատկեր: Ձախ կողմը նստած են փարիսեցիք, իրենց պատմական հագուստներով. դէմքերից նկատելի է, որ նոքա ի ներքուստ միութիւն չեն կազմում այդ պատկերի հետ: Փրկչի բերանից լսուում է երանութեան քարոզը: Ժողովուրդը ալեկոծուում է, քաղցած է, և ահա հրաշք՝ հարիւրաւոր ձեռքեր հաց են սատնում. մի կին հերարձակ, անառակ կնոջ պէտ հագուստով՝ փարում է Փրկչի ոտքերին. Յիսուս ոտքի է կանգնեցնում նորան: Դա Մարիամ Մագթաղենացին է: Երաժշտութիւնը մի ողբ է նուագում սպիտակ հագուստով մի խումբ պատանիներ՝ բաղեղի պսակներ գլուխներին, մի բաց գագաղ են տանում որի մէջ մօր միակ զաւակն է հանգչում: Մայրը ողբում է իւր որդուն: Երփներանգ ժողովրդի մէջ խառնուում են սևազգեստ սգաւորները: Դագաղը դրուում է բեմի մէջ տեղ, Յիսուս կենդանութիւն է տալիս մեռած պատանուն: Մայրը ցնծութեան աղաղակներով գրկում է իւր սիրելուն: Դագաղակիրները դուրս են գնում հեռուում գտնուող բազմութեան պատմելու կատարուած հրաշքը: Մայրը ծնծղայի դաշնակցութեամբ գոհաբանական օրհներգ է երգում: Վերադառնում են սպիտակազգեստ պատանիները ժողովրդի ահագին բազմութեան հետ, որոնք ձեռքներին բռնած ուռնին երփներանգ ծաղիկներ, արմաւենու ոստեր: Վառ ոգևորութիւն է տիրում. ժողովուրդը երգեցիկ խմբի հետ «ովսաննա» է երգում, իսկ Յիսուս հեռանում է այդ ցնծութեան աղաղակների և օրհներգութեան ժամանակ:

Հորրորդ տեսարանը տեղի է ունենում Գեթսեմանէում, տաճարի պատում: Դեկորացիան շատ հքնդ է և գեղեցիկ: Գնական կերպով տուր և առ է կատարուում: Հասնում է ժողովուրդը ովսաննաներով, ձիթենու և արմաւենու ոստերով: Յիսուս խարազանը ձեռքին արտաքսում է վաճառականներին: Նրից հնչում է ովսաննան և ժողովուրդը առաջնորդում է Նրան տաճարից դուրս: Այս տեսարանին հետևում է Յուդայի մատնութիւնը, որ ժողովրդից բաժանուելով տաճար է շտապում իւր վարձատիրին վաճառելու: Ժողովրդի հեռուում նուագող ցնծութեան աղաղակների հետ խառնուում է այժմ քահանայապետների յաղթական երգը:

Հինգերորդ տեսարանը ներկայացնում է Գեթսեմանէի վերնատունը: Սենեակի մէջ տեղ երկար սեղանի վերայ պատրաստուած է ընթրիքը. աջ կողմը մի մեծ ջրաման: Սենեակի դրան յենուած է Յիսուսի մայրը՝ Մարիամ անգօթի, կանաչազոյն հագուստով. նա նայում է դուրսը, թախիծը սրտում, ինչ եղք պիտի ուենենայ այս ամէնը: Նա նկատում է իւր Որդու գալը և հեռանում է սենեակից: Յիսուս իւր աշակերտների հետ վերջին ընթրիքն է

կատարում. աշակերտների դասատրությունը այնպես չէ, ինչպես Լեոնարդո դը Վինչի նշանաւոր պատկերն է յոյց տալիս: Յուդան նըստած է սեղանի ձախ անկիւնում: Նա գայթակղում է, երբ Յիսուս տեսնում է նորա հոգու խորքում կատարուող խորհուրդները. նկրքին, կարճ մազառումից յետոյ դուրս է դնում նա աննկատելի կերպով: Յիսուս օրհնում է իւր աշակերտներին և յորդորում Ս. Սետարանը քարոզել աշխարհի չորս կողմերը: Տեսարանը փոխուում է: Արկին հրաշալի՝ գունեղ դեկորացիա: Գեթսեմանի պարտէզն է դա՝ մայր մանող արևի ճառագայթներով լուսաւորուած: Ձախ կողմը ձիթենիների բունբակը և աջ բարձրուղէշ արմաւենիներ: Պարսպի մի կողմից երևում է քահանայապետի պալատը: Յիսուս երկու անգամ աշակերտներին քնած է գտնում: Դռներից ներս են թափուում հռովմայեցի զինուորներ, նոցա հետից քահանայապետների և դպիրների խումբը: Յուդան՝ մոդ կարմիր հագուստով և դեղին վերարկուով, առաջնորդում է նրանց: Կայիափան հարցնում է Յիսուսին, թէ նա Աստուծոյ Որդի՞ն է: Դրական պատասխանի վերայ կապում են նորան և ամբոխով շրջապատած առաջ տանում:

Ս. Եղերորդ տեսարանը տեղի է ունենում Պիղատոսի պալատի առաջ: Դործողութիւնները կենդանի կերպով յաջորդում են միմեանց: Յիսուս շրջապատուած խաժամուժ ամբոխից՝ ներս է բերուում: Պիղատոս երևում է պատշգամբի վերայ, ոսկէ վարսակալը ձեռքին, հռովմէական հագուստով: Յողովուրդը խռնուում է պատշգամբի շուրջը և դատ է պահանջում: Յանկարծ բացուում է ամբոխի շրջանը և երևում է, Յիսուս, կարմիր քղամիդը վերան, գաւազանը ձեռքին և փշեայ պսակը գլխին: Պիղատոս փորձում է ազատել, բայց վերջապէս ժահուան է դատապարտում: Նորանք խաչը դնում են Յիսուսի ուսին և ստիպում նորան առաջ տանել: Մաքսիան որին Յիսուս Յովհաննէս առաքեալին է յանձնում, նուաղում է վերջնիս բազուկների մէջ. տեսարանը վերջանում է կատարած ամբոխի աղաղակներով:

Յանձնաժողովի որոշմամբ ամբողջապէս հանուած էր եօթներորդ տեսարանը, որպէս զի դա գեղասիրական տպաւորութիւնը չխանգարէր: Այս տեսարանը պիտի ներկայացնէր Գողգոթան՝ Յիսուս խաչի վերայ, մահախուղով և միգով պատած: Նորա վերջին խօսքերը պիտի երգուէին տեսարանի հետևի կողմից: Խաչի գլխին՝ ամպերի վերայ, պիտի երևային հրեշտակները, իսկ ներքև անդունդի մէջ սատանաները, որոնք կռուում են հրեշտակների հետ մարմնից զատուող հոգին ձեռք բերելու համար: Բոլոր քննադատները առանց բացառութեան շատ գոհ են յանձնաժողովի այս որոշման համար:

Վերջաբանը այլաբանական է. հեռու փռուում է կանաչազարդ տարածութիւն, որ լուսաւորուած է արևի ճառագայթներով. մէջ տեղ կանգնեցրած է խաչը, իսկ նորա առաջ ծունկ չոքած աղօթում է մի մեծ բազմութիւն ամէն տեսակ ազգերից բաղկացած: Դոցա մէջ նկատելի են Պետրոս, Յովհաննէս և Պօղոս առաքեալները: Պօղոս սիրոյ աւետարանն է քարոզում: Երբև վերչաբան երգեցիկ խումբը երգում է հաւատոյ հանգանակը:

Գ. Ս.

Մի յիշողութիւն անցեալից—Գիտեմ որչափ իրաւացի է եղել եւրոպացի քննադատների կարծիքը վերև նկարագրուած թատերգութեան մասին, որով խաչի տեսարանը բեմի վերայ անպատեհ է համարուել, բայց աւելորդ չեմ համարում մի քանի խօսք ասել հինգ տարի առաջ տեսած մի այդպիսի ներկայացման մասին, որ շատ խոր տպաւորութիւն է թողել իմ վերայ:—Յայտնի է, որ միջին դարերում կրօնական ներկայացումները, միստերիաները, շատ տարածուած էին Եւրոպայում, անցեալ դարու վերջերին նոքա խիստ եղծեալ բնաւորութիւն ստացած լինելով՝ արգելուեցան Գերմանիայում և միայն Հաւարիայի Օբեր—Ամերգաու գիւղը կարողացաւ արտօնութիւն ձեռք բերել 10 տարին մի անգամ հանրային ներկայացնելու, որի համար մի ժանտախտի ժամանակ ուխտ էր արել:

Վերջին ժամանակներս, երբ բեմական արուեստը իւր զանազան ճիւղերի մէջ առանձին սիրով նիւթ է վերցնում կրօնական — պատմական աղբիւրներից, Օքեր—Ամերդաուի ներկայացումներն էլ աշխարհահռչակ բնաւորութիւն են ստացել և հանդիսատեսներ են գրաւում գրեթէ ամբողջ աշխարհից: Վերջին ներկայացումները տեղի ունեցան 1890 թ.-ին, որոնք 5 ամիս շարունակ իւրաքանչիւր կիւրակէ և տօն օրեր կրկնուում էին: Ամէն մի ներկայացում տեւում է 8 ժամ, 4 ժ. ճաշից առաջ և 4 ժ. ճաշից յետոյ անընդհատ. ա. ը սկսուում է Յրուսաղէմի հանդիսաւոր մուտքով և խորհրդաւոր ընթրիքով վերջանում, երկրորդը վերջանում է յարութիւնով: Հանգամանքների բերմամբ ես միայն վերջին մասին կարողացայ ականատես լինել:

Ներկայացմանը, որի համար մօտ 2=300 անձի պէտք կայ, մասնակցում է գրեթէ ամբողջ գիւղը. դերասանական և երգչական խումբը էլ ամբողջապէս գիւղացիներից է բաղկացած, որոնք մեծ մասամբ ճախարակագործ են արհեստով: Գիւղապետը արդէն 4 րդ անգամ յայտնուում էր Պիլատոսի դերում, իսկ Յիսուսի դեր կատարողը 3 րդ անգամն էր բեմ բարձրանում՝ ուրեմն արդէն հասակով ոչ շատ համապատասխան իւր դերին. պէտք է ասած սակայն, որ երկուսն էլ, ինչպէս և միւս դերակատարներից շատերը, հիանալի կերպով կատարում էին իրենց դերերը: Գիւղի համար պատուոյ մի մեծ խնդիր է ի հարկէ այս ներկայացումն, որի նախապատրաստութիւնը ամիսներ է տեւում: Սկզբում կատարուում էր այդ պարզ, նախնական միջոցներով. վերջերս դիմում են արդէն արուեստի օգնութեան, որ սակայն ամէն դէպքում գործին ի նպաստ չէ ծառայում. որովհետև այս ներկայացման բոլոր գեղեցկութիւնը և կախարդիչ ազդեցութիւնը նորա պարզութեան, դերակատարների դէպի իրենց գործը ամենայն անկեղծութեամբ և ջերմեռանդ հաւատով վերաբերուելուն մէջն է: Պաղաքային բեմի վերայ ամենանշանաւոր դերասանների միջոցով և արուեստի բոլոր յարմարութիւններով ներկայացրած՝ դա արդարև հաւանականաբար ոչինչ տպաւորութիւն չէր գործի և կվիրաւորէր իսկ իւրաքանչիւրի կրօնական զգացումները: Բայց այսպէս, երբ բեմի վերայ դուրս են գալիս պարզ գիւղացիներ արևելեան հագուստով, առանց դերասանի սովորական շարժումների և ձևերի՝ ամէն ինչ մի տեսակ արտակարգ, խորհրդաւոր կերպարանք է ստանում: Տեսարանների մեծ մասը առնուած է աւետարանից և միայն մի քանի կաթոլիկական աւանդութիւններ ներս են մտցրած. իսկ իւրաքանչիւր աւետարանական մի դէպքից յետոյ ներկայացուում է հին կտակարանից համապատասխան նախատիպը՝ կենդանի պատկերներով, որոնց բացատրութիւնը տալիս է խմբերգի միջոցաւ գիւղացի երիտասարդներից և աղջիկներից կազմուած երգեցիկ խումբը: Հանդիսականների մեծ մասը բաց երկնքի տակ է նստած, բայց բեմի վերայ տեղի ունեցող խաղը (եթէ միայն այդ լուրջ, խորհրդաւոր գործողութիւնները խաղ անուանել կարելի է), այնպէս գրաւել էր ամենքիս ուշադրութիւնը, որ ես 4 ժամ շարունակ բարակ մաղող անձրևի տակ նստելուց յետոյ՝ վերջը միայն զգացի, թէ բոլոր անդամներս կարկամել, հագիւ էին շարժում:—Ու դեռ այսօր կարծես ինձ այնպէս է թուում, թէ այդ բոլորը երազի մէջ եմ տեսել, այնքան արտասովոր էր տեսածս և ընդհարհիկ: Աւետարանի մի քանի ճշմարտութիւնները երբէք այնպիսի կենդանի կերպով ինձ չէին ներկայացել, ինչպէս այդտեղ բեմի վերայ, և ահա՛ այժմ անձնական փորձով հաստատել կարող եմ, թէ ամէնից սուրբ խորհուրդները և մաքուր գաղափարները բեմի վերայ ներկայացրած՝ իրենց արժէքը չեն կորցնում և ոչ մի զգացում չեն վիրաւորում, այլ ընդհակառակն շատ խոր տպաւորութիւն թողնել կարող են, եթէ միայն ներկայացնողը խաղ չէ անում առարկայի հետ, այլ համապատասխան զգացումներ ունի և անկեղծութեամբ արտայայտում է: Աւօնական զգացումը, իբրև խորագոյնը և վեհագոյնը բոլոր զգացումներից, ոչ մի կեղծիք չէ վերցնում. դորա համար է, որ անպատեհ կերպով արտայայտած՝ անտանելի է նա մեզ համար և խիստ վիրաւորիչ. բայց մեղաւորն այդ դէպքում տեղն ու հանգամանքները չեն:

Կ. Վ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱԹՈԼԻԿ ՏԵՍՉԱՏԻ.

Բողոքական Chronik der Christlichen Welt թերթը այսպէս է ամփոփում այն գլխաւոր իրողութիւնները, որ տեղի են ունեցել Հռոմէական եկեղեցու տասմանեակում 1894 Հոկտեմբեր 1 ից սկսած մինչև 1895 մարտի վերջը.

Պապական քաղաքականութիւնը օրըստօրէ շատացնում է իւր ձեռքի տակ եղած միջոցները՝ հերձուածող եկեղեցիներին պապական

եկեղեցու հետ միացնելու գաղափարի համար։ Ինչքան և ցնորք լինի այդ գաղափարը, այնու ամենայնիւ հետաքրքրական է նա, իբրև արտայայտութիւն չափազանց աճեցող այժի զգացման։ Շատ աւելի նշանաւոր է այն հանգամանքը, որ մի քանի երկրներում, ուր Լևոն պապը իւր հաւատադարձութեան քաղաքականութիւնը առաջ տանելու փորձ է արել, գտնւում են յիրաւի խոհական մարդիկ և աչքի ընկնող ընկերութիւններ, որոնք այդ ձգտումների վերայ լուրջ ուշադրութիւն են դարձնում և կրկին կաթոլիկութիւն ընդունելը կարելի, այո՛ նոյն իսկ ցանկալի են համարում։

Անգլիայում լորդ Հալիֆաքս, Անգլիական Եկեղեցու Դո-Ընէն (English Church Union) նախագահը, որի հիմնադիրները եղել են 30 Անգլիական եպիսկոպոսներ և 3000 ից աւելի հոգևորականներ, պրոպագանդայ է յանձն առել պապի երազների համար, Նորա կարծիքով Հռոմէական և Անգլիական եկեղեցիների մէջ եղած տարբերութիւնները քաղաքական և աստուածաբանական բնաւորութիւն ունին, որոնց վերցնելը ինչպէս անգլիական, այնպէս և հռոմէական աստուածաբաններ կարելի են համարում։ Թէ ինքը լորդ Հալիֆաքս ինչպէս է ներկայացնում իրեն այդ կարելիութիւնը՝ պարզ երևում է նորա փորձից, անխաբականութեան դասանութիւնը անգլիականների համար ըմբռնելի կացուցանել։ Պապի անսխալական լինելը նորա խօսքով ուրիշ ոչինչ չէ նշանակում, բայց եթէ այն, որ նորա խօսքը պարզօրէն արտայայտում է ամբողջ եկեղեցու օրինական ճանապարհով հաստատած կարծիքը։ Թէ որքան համաձայն է նորա հետ այս և նման անմիտ բացատրութեանց մէջ Ս. Էդուարդեան Դո-Ընէ-Նը՝ որոշ յայտնի չէ դեռ. այսքանը կայ միայն, որ նորա դէմ որևէ եռանդուն բողոք տեղի չէ ունեցել։ Դորա փոխարէն նորա ծրագիրները և հայեացքները զայրոյթ են յառաջ բերել Ազատ եկեղեցեաց կողմնակիցների մէջ։ Կենտերբերի արքեպիսկոպոսն ևս վճռական դիմադրութիւնն է ցոյց տուել։ Այսպէս նաև Անգլիայում գտնուած Հռոմէական եպիսկոպոսներին պապի ծրագիրը չափազանց վտանգաւոր և համարձակ է երևացել։ Նոքա յատուկ կերպով խնդրել են, որ պապը այս խնդրի առթիւ մի առանձին թուղթ չուղղէ անգլիական եպիսկոպոսներին. պապն էլ վճռել է միայն մի շրջաբերական ուղարկել կաթոլիկ անգլիացիներին։ * Այլ և նորա անգլիականների ձեռնադրութիւնը վաւերական ճանաչելու ցանկութիւնը գործադրութիւն չէ գտել։ Ընդհակառակն Վօգան կարդինալը խնդիր է առաջարկել թոյլ տալու կաթոլիկներին, որ ուսանին (աստուածաբանութիւն ի հարկէ) բողոքական կոլլէջներում և համալսարաններում, մանաւանդ Օքսֆորդում և Բիրմինհամում, և այդ առաջարկութիւնը ընդունել է Պրոպագանդայի կողմից, թէպէտ և մեծ սահմանափակումներով։ Հետաքրքիր մի իրողութիւն, որ ցոյց է տալիս, թէ կաթոլիկները ինչքան ապահով են համարում իրենց, որ բողոքական գիտութեան հետ չփուելու մէջ ոչ մի վտանգ չեն տեսնում։

Խոլորովին ուրիշ դիրք է բռնում Պապը Ֆրանսիայի նկատմամբ։ Այստեղ նա գործ ունի ոչ թէ մի հերձեալ եկեղեցական համայնքի, այլ հեթանոսացած անկրօն մի ժողովրդի հետ։ Ուստի և նա փորձում է այստեղ ազդեցութիւն գործել, ոչ թէ պաշտօնական եկեղեցու միջոցով, այլ ժողովրդի տրամադրութիւններին համակերպելով։ Ժամանակը խիստ նպաստաւոր է դորա համար, որովհետև ամբողջ Ֆրանսիայի մէջ մի զօրեղ տենչ է զարթնում օր ըստօրէ դէպի մի որևէ կրօն, Խոր զգում են այստեղ շատերը, որ ոչ մի ժողովուրդ երկար ժամանակ առանց յատուկ կրօնական բարիքների պահանջ ունենալու կեանք վարել չի կարող, նամանաւանդ ուսման և կրթութեան մէջ կրօնական տարրը ոչ մի ձևով ֆոյերպախոտֆ փոխարինել չի կարելի։ Հռոմէացիները գործ գնում ահա այս հոսանքից օգուտ քաղելու. ինչպէս և Ֆրանսիայի բողոքականները վերջերս եռանդով գործել են սկսել այս ուղղութեամբ։ Սորբոնի ուսուցչապետ և աշխարհաճանաչ Revue des deux mondes ամսաթերթի խմբագիր Բրիւնետիերը թարգման է հանդիսանում պապական գաղափարների համար։ Նորա հայեացքով գիտութեանը չափազանց մեծ նշանակութիւն տուող ներկայ շրջանին պէտք է հետևէ մի ուրիշ շրջան, երբ կաթոլիկ եկեղեցին նորից գլուխ կբարձրացնէ։ Նա հակառակ ծայրահեղութեան մէջ ընկնելով՝ չափազանց պակաս գին է գնում գիտութեան համար, իսկ կաթոլիկութիւնը համարում է կրօնի այն ձևը, որ ամենից աւելի ընդունակ է բարոյականութիւնը պահպանելու և որևէ պետութեան կառավարութիւնը դիւրացնելու։ Սրովհետև, մինչդեռ բողոքականութիւնը իւր անգամների վերայ իշխանութիւն բանեցնել չի կարողանում՝ անհատական ընաւորութիւն ունի և բանականութեան չափից աւելի տեղ է տալիս՝ կաթոլիկութիւնը ամբողջապէս դիսցիպլինա է, հասարակական կողմով զօրեղ և հետևողական։—Թէ նորա կարծիքներին որքան նշանակութիւն պէտք է տալ, հետևեցնել կարելի է հէնց նորանից, որ Բրիւնետիէր իրեն յարգողների ահագին բազմութիւն ունի *։

* Տես Ընարատ, մայիսի համարը քրոնիկոնը։

* Անցեալ տարի ծմռան, երբ ես նորա մօտ Բոսսիւէյի մասին մի դասախօսութիւն էի լսում, Սորբոնի ամենամեծ

Պապի ոչ-էլեան եկեղեցիները Հռոմի հետ միացնելու ջանքերը շատ աննշան արդիւնք են ունեցել։ Պրոպագանդային պատուէրը տուած բազմացնելորքան կարելի է արևելեան հոգևորականութիւնը, կաթոլիկական կեանք և հաւատ զարգացնող հաստատութիւններ յառաջ բերել, կղերականներ պատրաստող սեմինարիաներ և գիմնազիոններ հիմնել, և վերջապէս լաւ գրուածներ հրատարակելով մտքերը մշակել։ Բայց այդ բոլորի համար դրամ պէտք է, շատ դրամ, և որովհետև արևելեան եկեղեցիները այդ դրամը իրենցից դուրս բերել չեն կարող, պէտք է այդ «առաքելական միսսիոնների» համար ժողոված դրամագլխից առնել, որ նոյնպէս շատ առատ չէ։ Ուրեմն «հաւատացեալների պարգևները նոյնչափ աւելի մեծ չափով պէտք է գան»։

Ա՜ոդէյա՜ է՝ Հռոմէական կազմակերպուել են կաթոլիկներից զօրեղ ժողովրդական կուսակցութիւններ՝ կառավարութեան բոլորովին հակառակ միտումներով։ Ա յսպիսով հարց ծագեց պապականութեան համար՝ քաջալերել, թէ անտես անել այս շարժումը։ Կառավարութիւնը, ինչպէս և, եթէ լրագրական յեղյեղուկ լուրերին հաւատալ պէտք է, մի քանի րարձրաստիճան եկեղեցականներ, որոնք կառավարչական շրջանների հետ կապուած են ազգակցական կամ խնամական կապերով, Պապին խնդրել են Աւստրիոյ քրիստոնեայ ~ համայնական կուսակցութեան դէմ միջոցներ ձեռք առնել։ Պապը ուղիղ գնահատելով եկեղեցական շահերը, Վիեննայի նախկին Նունցիուս * կարդինալ Գալեմբերտիի խորհրդին հետևելով, ինչպէս լսուում է, այդ խնդիրը ի կատար ածելուց հեռու է մնացել։ Նա բաւականացել է միայն քրիստոնեայ—համայնականներին չափաւորութեան և եպիսկոպոսների հետ համերաշխ գործելու յորդորելով։—Ուլտրամոնտան կուսակցութիւնը Հունգարիայում աւելի անսահմանափակ չափով է վայելում Կուրիայի** հովանաւորութիւնը և չափազանց կարճ միջոցում զօրեղ կազմակերպութիւն է ստացել։

Կաթոլիկ եկեղեցին յառաջադիմութիւն է առնում նաև Շուէդիայում՝ մի զուտ բողոքական երկրում։ Այդ յառաջադիմութիւնը գալի է 1873 թ.ից սկսած, երբ կատարեալ ազատութիւն շնորհուեցաւ կաթոլիկ եկեղեցուն։ Ոչ ժամանակուայ առաքելական վիկարը (փոխանորդ) գերմանացի քահանայ դոքտոր Բիտտերին իւր մօտ կանչեց և Գևստեբուրգի միսսիոնի դեկավար նշանակեց։ 1886 թ. Պապը սորան առաքելական վիկար հաստատեց, իսկ նորերս եպիսկոպոսական աստիճան շնորհեց։ Կրօնական յեղափոխութիւնից յետոյ սա Շուէդիայի առաջին և միակ կաթոլիկ եպիսկոպոսն է։

—

Գերմանիայում պապականութեան ունեցած յաջողութիւնները մեծ չենք բերում, որովհետև աւելի քաղաքական բնաւորութիւն ունեն։—Դանեմարքայում ևս հռոմէական եկեղեցին այնքան յառաջ է գնացել, որ մտածում են մի նոր եպիսկոպոսութիւն ևս հիմնել այդտեղ։

—

Եղուիտները կամենում են Ամստերդամում մի նոր կաթոլիկական համալսարան հիմնել՝ Լէօվենում և Զուեցերիոյ Ֆրայբուրգ քաղաքում գտնուածների օրինակով։

Սպանիոյ շատ նահանգներ խնդիր են ներկայացրել Պապին, որ Իգնատիոս Լոյոլային «եկեղեցւոյ վարդապետ» հռչակէ։ Սկզբում կաթոլիկ եկեղեցին միայն չորս եկեղեցական հայրերի այդ տիտղոսն է տուել, որք են Օգոստինոս, Ամբրոսիոս, Հիերոնիմոս և Գրիգոր (եպիսկոպոս, արքեպիսկոպոս, կարդինալ և պապ)՝ յետոյ նաև ուրիշներին։ Լոյոլայի համար այդպիսի մի պատիւ պահանջել նշան է, թէ ինչ ոյժ ունի այսօր Յիսուսեան կարգը։

ՌՈՒՍԱՍՏ ԵԿԵՂԵՑԻ

Պետերբուրգի Հոգևոր Ճեմարանի հարցաքննութիւնները շարունակուել են այս տարի մինչև յունիսի 10ը։ Այդ վերջին օրը երկու հարցաքննութիւններ պատուել է իւր ներկայութեամբ նորին Բարձր Սրբազնութիւն Մետրապոլիտ Պալլադիյ, Ճեմարանական խորհրդի վճռով փոխուում են այս տարի Բ. դասընթացք 57 ուսանող. Գ.—70 և Դ.—50 ուսանող. աւարտում են ընդ ամենը 61 հոգի, որոնցից 36ը ստանում են աստուածաբանութեան կանդիդատի տիտղոս՝ առանց բերանացի քննութեան մագիստրոսի աստիճան ձեռք բերելու արտօնութեամբ. 16ը աստուածաբանութեան կանդիդատ՝ առանց այդ արտօնութեան. 10 հոգի, որոնք շարադրութիւն չեն ներկայացրել, կամ ներկայացրածը բաւարար չէ եղել, ստանում են իսկական ուսանողի կոչում։ իսկ 5 ուսանողի համար վերջնական վճիռը յետաձգուել է մինչև յաջորդ ուսումնական տարուայ սկիզբը։ Իրրև առաջին մագիստրանտ ելեր են 5 ու-

---

դանվիճը, որ մի քանի հազար մարդ տեղաւորել կարող է, ամեն անգամ ծայրէ ի ծայր լիքն էր լինում՝ մեծ մասամբ բարձր դասակարգի երկսեռ բազմութեամբ։ Կ. Վ.

* Պապի ներկայացուցիչ կառավարութեան մօտ։

** Պապի կառավարութիւնը Հռոմում։

գի, որոնցից 2ը մնացել են Ճեմարանի մէջ ուսուցչական ասպարէզի համար պատրաստուելու։

Այս տարի Հոգեգալստեան տօնը Բերլինում ռուսական համայնքի մէջ չտեսնուած շուքով է կատարուել՝ չնորհիւ այն հանգամանքի, որ Ալէքսոտիայի և Ալեաստկայի եպիսկոպոս սրբազան Նիկոլայը պատահմամբ ներկայ լինելով, պատրաստ է մատուցել յաջորդաբար՝ դեսպանութեան եկեղեցիում և գերեզմանատան նորակառոյց եկեղեցիում։ Այս առթիւ Московскія Вѣдомости թերթի թղթակիցը առաջարկում է Եւրոպայի համար մի առանձին այցելու եպիսկոպոսի փոխանորդութեան պաշտօն հաստատել։

Ցունիսի 9ին Պետերբուրգում մեծ հանդիսով թաղուել է Կազանեան Մայր եկեղեցու աւագ երէց Սոկոլովը, որ ռուսաց Եկեղեցական համբաւաբերի վկայութեամբ ամենաարժանաւորներից էր մայրաքաղաքի հոգևորականութեան մէջ։ Հանգուցեալի գործունէութիւնը նշանաւոր է մանաւանդ նորանով, որ նա անդուլ աշխատանքով կարողացել է մայրաքաղաքում տարածուող հակակրօնական և հակաքարոյական հոսանքների դէմ մաքառող մի զօրեղ ընկերութիւն կազմակերպել հոգևորականներից (կրօնական—բարոյական լուսաւորութեան ընկերութիւն՝ Ուղղափառ եկեղեցու ոգով) և առ հասարակ իւր եռանդուն քարոզներով, կրօնուսուցչութեան միջոցով, իւր խօսքովն ու գործով՝ մեծապէս նպաստել է կրօնական ոգին զարգացնելու և վառ պահելու մայրաքաղաքի մէջ։ Բացի դորանից նա առաջին օրինակն է տուել ժողովրդական երգեցիկ խմբեր պատրաստելու եկեղեցիների համար, շինութիւններ է արել, մանակցել է վերջին տասնեակ տարիներում մայրաքաղաքի և նորա շրջակայքի մէջ ամէն մի նշանաւոր եկեղեցական կամ բարեգործական ձեռնարկութեան. Ճշմարիտ հոգևորականի տիպար է եղել իւր ամբողջ կեանքով։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ։

Բիրմինհամում ներկայ թուականի մարտ 12—16-ին կայացել է Անգլիական աւետ Եկեղեցիների համաժողովը, 1891-ին որոշ թուով Բապտիստներ, Կոնգրեգացիոնալիստներ, Մեթոդիստներ և Պրեսբիտերիաններ, այսինքն պետական եկեղեցուն չպատկանող զանազան դաւանութեանց քրիստոնեաներ, որոնք ընդհանուր անունով Նոնկոնֆորմիստ են կոչուում։ Ժողով են դումարել մի մանաւոր տան մէջ՝ ազատ կերպով խորհրդածելու զանազան խնդիրների վերայ, և այդտեղից յառաջ է եկել ներկայ համաժողովը։ Այս երրորդ անգամն է, որ նա հրապարակաւ հանդէս է գալիս, ընդունելով այս անգամ Անգլիական աւետ եկեղեցիների ազգային ժողով անունը։ Ժողովին մասնակցողները, որոնց թուում եղել են բացի վերոյիշեալներից նաև Կվեկերներ, իրրև իրենց միութեան յայտարար նշան՝ ժողովի առաջին կիւրակէ օրը փոխփոխել են քարոզչական ամբիոնները Բիրմինհամի մօտ 100 մատուռներում և բուն գործն սկսելուց առաջ բոլորը միատեղ ս. Հաղորդութեան խորհրդին մասնակցել։ Բանալով առաջին նիստը ժողովի նախագահը Դր. Բերրի ի միջի այլոց ասում է. «Այնպիսի բաժանումներ, ինչպես են Անգլիական ազատ եկեղեցիները, յառաջ են գալիս ճշմարտութեան որոշ, բարձր թողի արած կողմեր պարզօրէն և անձնուիրաբար ըմբռնելուց։ Միութիւնը կարելի է, իսկ եթէ կարելի՝ ապա ուրեմն պարտաւորեցուցիչ, երբ ճշմարտութեան այս զանազան կողմերը իրենց հանգոյն ունին մի բազմաբովանդակ հաւատի մէջ։ Այսօր, երբ մենք գտել ենք այն գերիշխող գաղափարը, որի ներքոյ զանազան հնչիւնները միանալով մի ընդհանուր ներդաշնակութիւն են կազմում, մեր միութիւնը նոյնչափ անխուսափելի է, որչափ ի ներքուստ պարտաւորեցուցիչ»։ Ապա նա խօսելով եկեղեցու և պետութեան իրար հետ ունեցած առընչութեան մասին՝ աւելացնում է. «Մի ժողովուրդ կրօնասէր լինել կարող է միայն այն ժամանակ, երբ նորա անդամներից իւրաքանչիւրը ղեկավարուում է Աստուծոյ Հոգուով այնպէս, որ նորա թէ անձնական և թէ ընկերական կեանքի մէջ գերիշխող են Հանդիսանում Յիսուս Քրիստոսի հոգին և Նորա քարոզած սկզբունքները ... Ազգային քրիստոնէութիւնը անհատների ներքին վերանորոգութեամբ է սկսում։ Եկեղեցու կոչումն է ընթացք տալ այս շարժման»։ Նորա ճառի երեք հիմնական կէտերը, որոնք ոգևորութեամբ ընդունուել են, սորա են. ա) Քրիստոս՝ մեր հաւատի և մեր կեանքի շունչն ու կեդրոնը. բ) Եկեղեցին՝ Նոր Կտակարանի ուսմունքը կեանքի մէջ գործադրող. գ) Մեր ժողովուրդը Քրիստոսի համար։

Օրուայ երկրորդ ճառախօսն է եղել Հայկական դատի ամենաջերմ պաշտպաններից մէկը՝ պրոֆեսսոր Ագար Բիտ, նիւթ ունենալով՝ «ս. Գրքի ժամանակակից ուսումնասիրութիւնը և նորա նշանակութիւնը քրիստոնէական մտածութեան և հաւատի համար»։ Խօսել է նաև ժողովի ամենաանուանի անդամներից մէկը Հուլ Պրայս—Հուլէս, որի նախագահութեամբ և որոշուել է յաջորդ տարուայ համաժողովը գումարել։

Յաջորդ շաբաթուայ օրը քննութեան է առնը-

ուել Հայկական Հարցը, որին աւելի կենդանութիւն է տուել իւր ներկայութեամբ պրոֆեսսոր Թումայեան, Անգլիական կառավարութեան միջամտութեամբ մահուան դատավճռից ազատուած և Տաճկաստանից աքսորուած Մարզուանի բողաքակատնաց դպրոցի յայտնի ուսուցիչը։ Ընդունուել է մի որոշում, որի հիման վերայ ժողովը, Բերլինի դաշնագրութիւնը ի նկատի առնելով, հրաւիրում է անգլիական կառավարութեան եռանդուն քայլեր անել ի պաշտպանութիւն տաճկահպատակ Հայերի։

Խօսել է վերջապէս տիկին Բրամուէլլ Բուտ, Արարատի անցեալ համարում յիշատակուած Գէնդրալ Հարսը, որ Փրկութեան Բանակի մէջ կանանց կատարած գերը օրինակ բերելով՝ պաշտպանել է նոցա ընդունակութիւնը կրօնական—բարոյական դաստիարակութեան մէջ և յոյս է յայտնել, ուր ժամանակ կգայ, երբ այր և կին հաւասար մաս կունենան եկեղեցւոյ սպասաւորութեան գործում։

Պէտք է նկատել, որ միայն այս ժողովում չէ Հայկական Հարցը ուշադրութեան առնուել, այլ ինչպէս Christian World և ուրիշ թերթեր հաղորդում են, ամիսներէ ի վեր գրեթէ բոլոր քրիստոնէական աշխարհը Անգլիայում զբաղուում է այդ Հարցով, որ և քննելով բազմաթիւ մեծ և փոքր ժողովներում, նոյնպիսի որոշումներ է կայացնում ինչպէս վերև յիշուածը, նոյն երևոյթը տեղի ունի նաև Ամերիկայում։ The Woman's Column թերթը, որի խմբագիրն է անուանի Հայասէր, Հայկական բանաստեղծութեանց թարգմանչուհի, օր. Ալիսէ Բլակուիլը, իւր 14-րդ համարը նուիրել է ամբողջապէս Հայերին. իսկ յառաջաբանի տեղ բերում է մի նշանաւոր անձի նամակը՝ ուղղուած ամէն դաւանութեանց և ամէն կարգի քրիստոնեայ հոգևորականներին, ուր նա Հայաստանում տեղի ունեցած սարսափները իբրև մի անժխտելի փաստերով ապացուցուած իրողութիւն ներկայացնելով՝ առաջարկում է, «որ իւրաքանչիւր քրիստոնեայ հոգևորական նուիրէ մի կիւրակնօրեայ ժողով քննադատելու Տաճկաստանում բնակուող քրիստոնեայ Հայերի վիճակը և մի որոշումով գիմէ Միացեալ Նահանգների կառավարութեան, հրաւիրելով նորան եւրոպական պետութիւնների հետ միացած իւր բոլոր ազդեցութիւնը գործ գնելու, որպէս զի այսպիսի սարսափների կրկնութիւնը անկարելի դառնայ»։ Մեր ունեցած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ այս հրաւէրը առանց արձագանգի չէ մնացել։

—

Բերլինում մայիս 8-ին (ապրել 26-ին) տեղի է ունեցել տեղական (Պրուսական) եկեղեցւոյ մի մեծ ժողով, որին մասնակցողների թիւը հազարից անցել է և որի նպատակն է եղել գերմանական հասարակաց ազատ ուղղութեան դէմ բողոքել և միջոցներ ձեռք առնել։ Պէտք է ի նկատի ունենալ, որ առհասարակ բողոքական աշխարհում և մանաւորապէս Գերմանիայում ամենածանրակշիռ խնդիրներից մէկն է, թէ արդեօք քրիստոնէութիւնը, քրիստոնէական աշխարհայեացողութիւնը ի՞նչ կերպ պէտք է հաշտուի գիտութեան, գիտական աշխարհայեացողութեան հետ։ Գերմանական աստուածաբանների մէջ նորագոյն և ամենից աւելի յառաջադէմ ու ազդեցիկ ուղղութեան հետևողները այն համոզմունքին են, որ աստուածաբանութիւնն էլ իրրև գիտութիւն ազատ պէտք է լինի ինչպէս և մնաւ գիտութիւնները. որ կրօնն ինքն ըստ ինքեան գիտութիւնից կախում չունի, բուն կրօնական ճշմարտութիւնները իրենց ոյժը չեն կորցնի նորանով, որ գիտական ճշմարտութիւնները աւելի և աւելի կպարզուին և որ ուրեմն մէկը ջերմ հաւատացեալ կարող է լինել և միևնոյն ժամանակ շատ ազատ քննադատ։ Սակայն եկեղեցական, պահպանողական տարրը այդ քննադատութեան մէջ, որ գլխաւորապէս ս. Գրքի վերայ է ուղղուած, շատ վտանգաւոր կողմեր է տեսնում։ Եւ ահա վերոյիշեալ ժողովը մի քանի նշանաւոր անձանց ճառերը լսելով և կարծիքներ փոխանակելով խնդրի պարզաբանութեան համար, որոշել է պետութեան դիմել, որ այսուհետև աստուածաբանութեան պրոֆեսսորներ ընտրելիս միայն գիտութիւնը ի նկատի չառնուի, այլ նաև ուղիղ դաւանութիւն պահանջուի, և առհասարակ հոգ տարուի [illegible] պահպանողական տարրը համալսարաններում գօրացնելու։ Այս նպատակը իրագործել տալու համար մի առանձին յանձնաժողով է ընտրուել։

—

Մայիսի 4-ին (ապրիլ 22) Այվենահոում կատարուել է Լուտերի մի նոր արձանի բացման հանդէսը՝ ներկայութեամբ Վայմարի մեծ դուքսի, դքսուհու և այլ բարձրաստիճան անձանց։ Այվենահոում, ինչպէս յայտնի է, իւր սկզբնական կրթութիւնն է ստացել Լուտեր և այդ գեղեցիկ քաղաքը այսօր Գերմանիոյ ամենից աւելի սիրուած և ճանապարհորդների համար գրաւիչ տեղ դարձնող Վարտբուրգ ամրոցում առժամանակ փախստականի կեանք վարել և ս. Գիրքը թարգմանել։ Այս պատճառով և օրուայ քարոզիչը իւր ոգևորուած ճառի մէջ բացականչում է. «Տիւրինգիայի և Գերմանիոյ մեծագոյն որդին մեր Այվենահին է պատկանում մի առանձին սրբազան իրաւունքով»։

—

Օգոստոսի 20-ին Բալէլում արբեցութեան դէմ մաքառելու միջազգային ժողով կգումարուի։ Ճանձնաժողովը հետեւեալ կանոնները է որոշել ժողովի ընթացքի վերաբերութեամբ. Ժողովի նպատակն է քաղաքական և կրօնական ձգտումներից միանգամայն չէզոք՝ մարդերի ազատ փոխանակութիւն ունենալ ոգելից խմիչքների չարաչար գործածութեան դէմ և այդ չարիքի դէմ մաքառելու միջոցներ գտնել։ Ոգելից խմիչքների չափաւոր գործածութեան կողմնակիցները և ժուժկալները հաւասարապէս իրաւունք ունին մասնակցելու ժողովին։ Վիճաբանութեան իրաւունքից զրկուած են այն անձնաւորութիւնները, որոնք շահամոլական դիտումներով խօսել կկամենան այդ արգիւնաբերութեան մասին։ Վիճաբանութիւնը կարող է գերմաներէն, անգղիերէն, ֆրանսերէն կամ իտալերէն լինել։

Արբեցութիւնը ճշմարիտ մի միջազգային ախտ է և միանգամայն նպատակայարմար է միջազգային խորհուրդներ կազմել այդ ախտի դէմ մաքառելու համար։ Գերմանիայում և Անգղիայում երկու տեսակ հաստատութիւններ կան դորա դէմ մաքառելու. ա) կոդդոյ խալչ ըհ|էբո-Իվ-Ն-ները և բ) արբեցութեան դէմ ապաստանարանները (Trinkasyl)։ Եկեղեցին մեծ մաս ունի այդ հաստատութիւնների մէջ և կարելի է ասել Գերմանիայում, համարեա առանց բացառութեան, այդ հաստատութիւններն ու ընկերութիւնները պաստօրների հովանաւորութեան ներքոյ են։ Շատ պաստորներ կամաւ հրաժարուում են խմիչքներ գործածելուց իրենց՝ համայնքին ժուժկալութեան օրինակ ընծայելու համար։

Հնախօս Բրուգշ փաշան Նեղոսի հովտում՝ Լուքսորի մօտ, նորերս մի սալաքար է գտել եգիպտական արձանագրութեամբ, ուր պատմուած է, թէ Նեղոսը եօթ տարի իւր ափերից չի դուրս եկել, դաշտերը անպտուղ են մնացել, որից և զարհուրելի սով է ծագել։ Արձանագրութեան մի քանի յուշմունքներից երեւում է, որ այս գրութիւնը 1900 թ. ք. ա. պիտի գրուած լինի, որով և միանգամայն համապատասխանում է Յակորի որդիների Եգիպտոս գաղթելու և Յովսէփի փոխարքայութեան ժամանակին։

ԴՐԱԿԱՆՈՒԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

Մովսէս կաղանկատուացւոյ Աղուանից պատմութեան Մայր Ամօտ մատենադարանում գտնուած ձեռագիր օրինակները։

(Առաջին խումբ։

Ա 1682

Հայոց ՉԼԸ = 1289 Փրկչական թ.-ից։

Անուն՝ Պատմութիւն եկեղեցական Սուրբ-տայ և պատմութիւն Աղուանից։ *Նիւթ՝* Թղթեայ, կազմ. տախտակեայ կաշիապատ, ներսից ներկած կտաւով պատած։ Հանգամանք. Լուսանցաթղթերից կտրտած, կարկատած. միջից և վերջից պակաս տեղերը նորոգած լրացրած։ Առանց մագաղաթեայ պահպանակի։ Դատարկ՝ թ. 86 երկրորդ երես 1 սիւնակի շատ կէսը և թ. 187 երկու երեսը։ Սկզբից չորս թուղթ պակաս, միջից մի՝ այն է 187 թ։ Մեծութիւն՝ 33×48 սմ։ Թուղթք 377։ Գրութիւն 12×39, երկսիւն խոշոր բոլորագիր, նման երկաթագրի։ Տողք՝ 31—32։

Վերնագիրք խոշոր երկաթագրով, սկզբնատառք նոյնպէս։ Ոչ մանրանկարք, ոչ լուսանցագարդք և ոչ էլ խորանազարդք ունի։ Ստացող՝ Տէր Համազասպ եպիսկոպոս առաջնորդ Յովհաննու վանց։ Գրիչ անյայտ։ Նորոգած թղթեր՝ 343, 351, 352, 374—377։ Ժամանակ ՉԼԲ—ՉԼԸ. 1288—1289 թ. տես թուղթ 306։

Կազմող և նորոգող՝ Ամանաս գրիչ Ռճ՚ԻԵ = 1676 թ.-ին։ Տեղ՝ Յովհաննու վանք Կարբու։

Կտրտած լուսանցագաթղթեր և նորից կարկատած թուղթք՝ 20, 22, 24, 25, 26, 29, 30, 31, 33, 45, 46, 56, 66, 68, 69, 84, 85, 89, 94, 95, 96, 97, 98, 104, 106, 108, 109, 110, 113, 118, 125, 128, 130, 142, 144, 145, 146, 158, 161, 163, 165, 166, 168, 169, 170, 171, 172, 173 195, 198, 204, 214, 223, 226, 234, 275, 289, 301, 312, 313, 244, 349, 353, 363։

Տեղեկութիւնք բովանդակութեան և յիշատակագրութիւնք մատենիս։

ԹՈՒՂԹ 1՝։

«Ամենայն քաղաքաց վատթար ևս լինէր չարըն...» Առաջին գրքից—Հատուածից կամ Հատորից,

չորս թերթ պակասում է մինչև «ամենայն քաղաքաց» ևն. ևն.։

ԹՈՒՂԹ. 32՝ սիւնեակ՝

«Եւ ունին գիրքս ժամանակաց ԼԱ։ Ջստացող գրոցս յիշեսջիք ի Քրիստոս»։

Սիւնեակ բ. Հատոր բ.

«Ռուփինոս որ Հռոմմանեցւոց լեզուովն գրեաց «զեկեղեցականն պատմութիւն՝ առ ժամանական մո«լորեցաւ»։

Թ. 72՝ սիւնեակ՝

«Եւ եկաց Կոստանդիոս ամս քառասուն և հինգ։ Թագաւորեաց ամս Լ. և ութ։ Ընդ Հարն Թագաւորեաց ամս ԺԹ. և Գ։ Իսկ յետ վախճանի նորա ամս Ի՛Ե։ Որքանեաց աղագաւ և գիրքս ունին ժամանակ»։

Սիւնեակ բ. Հատոր «գ»

«Կոստանդիոս Թագաւոր. ի սահմանն Կիւլիկոյ երից նոյեմբերի ամսոյ առ Հիւպատոսաւքն տաւռոսիւ և փղոռէնտիոսիւ կատարեր զվարն»։

Թ. 74բ.

Բղորագիր և այլ գրչով գրած. Ներքևի լուսանցքագիրը զգրիգոր՝ «աշակերտ Թոմկայ որ զգե«մըս գրեցի յաղաւթս յիշեցեք նայ և դուք ան«մոռաց լիցիք առաջի Ա՛յ.»։

Թ. 97՝՝

Ներքևի լուսանցքագիրը «եղուկ քունս նեղ«հաց՝ և վիշտս յաւելուլ կամի»։

97բ սիւնեակ բ

«Ունին գիրքս ժամանակաց երկուց՝ և ամ սոց երից և կիսոյ»։

Նոյն սիւնեակ Հատոր «գ»՝ «Թագաւորին յո բրիանոսի՝ ի գատաստանս որպէս ասացաք վաղճա նեալ յիւրում՝ Հիւպատոսջն՝ և բառիանու որդւոյ նորուն՝ տասն և ևթանն փետրուարի ամսոյ»։

Թ. 120՝՝

Ներքևի լուսանցքագիրը՝ «ԵՒաղ դառն ցա«ւիս որ դիպա և խափանեցաւ գիրսս՝ վասն զի ա«տամն ցաւեցաւ զաւուրս եւթն՝ նա և գլուխս՝ այլ «տէր կարողացոյց»։

Թ. 123բ՝ սիւնեակ՝՝

«Ունին գիրքս ժամանակաց ԺԲ։ Ջառաջնորդ «դրոցս զսրբազան եպիսկոպոսն զտէր Համազասպ «յիշեսջիք ի Քս.ն և զգրիգորէս կրաւնաւոր»։

Սիւնեակ բ՝ Հատոր «ե»

«Նախ քան զսկսանել մեզ զպատմութիւնս «հինգերորդի գրոցս՝ ասացուք առ Հանդերձ«եալսն ընթեռնուլ զմեր ստորագրութիւն. մի մե«զագրել մեզ եթէ նախկին եգեալ զեկեղեցական «պատմութիւն նշանագրել՝ խառնեցաք ի նա և «ըստ ժամանակին եղեալ պատերազմունսն»։

Թ. 131բ՝

Ներքևի լուսանցքագիր. «ԵՒաղ քունս նեղեաց զիս»։

Թ. 149՝՝ սիւնեակ՝՝

«Ունին գիրքս ժամանակաց ԺԶ. և ամսոց ութ»։ «Ջստանաւր յիշեսջիք զսրբազան Եպիսկո«պոսն զտէր Համազասպ՝ ընդ նմին և զգրիգորէս «կրաւնաւոր. և զիս զանարժան գրչողս ի Քս»։

Սիւնեակ բ՝

(Նոր գլուխ) «Ջհրամանդ քո քահանայդ Ջս տուծոյ այրդ Թէոդորէ՝ ի հնգեսին առաջարկեալ գիրսն՝ որպէս էր վարկանիլ՝ խորհրդիւ վաստակե«ցաք՝ զոր ի կոստանդն ի ժամանակացն եկեղեցական պատմութիւն շարագրեալք»։

Թ. 172՝՝ սիւնեակ՝՝

«Իսկ Թողեալ (Արկադիոսի) Թագաւորելով «զորդին Թէոդոսիոս Ը. ամեա Հանդիպելով վաղ«ճանեցաւ ի Հիւպատոսջն բասսոսի՝ և փիլիպպոսի՝ յառաջումն մայիս ամսոյ։ Իսկ այս էր ամ երկրորդ՝ ՄՂԻ. Ողիմպիատուժն. Թագաւորեալ ընդ Հարն ամս ԺԹ՝ Իսկ յետ վաղճանի Հարն ամս ԺԹ՝ կեցեալ ամս ԼԱ։ Ջառաջնորդ գրոց զսրբա«զան Եպիսկոպոսն զտէր Համ՛՛ և գրիգորէս կրաւ«նաւոր յիշեցէք ի Քս. և զմեզապարտ գրիչս՝ ա«ղաչեմք»։

Սիւնեակ բ՝

(Նոր գլուխ) «Թագաւորին Արկադիոսի վաղճա«նեալ յառաջնումն մայիս ամսոյ՝ ի հիւպատոսջն բասսոսի և փիլիպոսի՝ Ոնորիոս նորին եղբայրն զարևմտայինսն ուղղէր կողմունս»։

Թ. 205՝՝ սիւնեակ՝՝

«Ջեռն ի վերայ արկեալ Պրաւկղի՝ փոխանակ «Եպարքոսութեանն Եպիսկոպոս Կէսարու յայտն«եաց. այլ որ ինչ ըստ եկեղեցեացն՝ այսպէս յառա«ջադիմանայր յայնժամ»։

205. բ սիւնեակ՝՝բ՝

«Բայց մեր աստանաւր ուրեք պատմութիւնս դադարեցուցեալ՝ ի խաղաղութեան կեալ զորս ամե«նայն ուրեք եկեղեցիս և քաղաքս և ազգ ազա«թեսցուք՝ քանզի փրկչին մերոյ Ցեառնն Ցիսուսի Քրիստոսի խաղաղութեանն եղելոյ ոչ ունիցին

պատճառք, որք պատմութիւնս գրել կամելով. Զի եւ մեք, ոմք քահանայքդ Աստուծոյ մարդք Թէոդորէ, ջնրամանդ քո յեւթնեսեան դիրսն արտատարածելով, ոչ արդեւք տարակուսեալ էաք պատճառոյ, եթէ սիրաւղքն զհառովութիւնս լռել յաւժարէին, եւ ոչ գործ շարամանեալ. Ունի .Ի. պատմութիւնս ժամանակաց ԼԲ. Իսկ ամենայն էւթ տոմիս պատճառս ունի ժամանակ ամաց ՃԽ. սկըսեալ յառաջին ՃՀԱ. ողիմպիադացն, յորում յորջյորջեցաւ թագաւոր Կոստանտինոս. Իսկ գադարեալ յերկրորդ ամին ՅԵ. ողիմպիադումն. յորում ծն հիւպատին թագաւորին Թէոդոսի տուեալ լինէր։

«յիշեա Քրիստոս Աստուած զստացաւղ գրոցս եւ զառաջնորդ սորա և զգրչողս»։

Թ. 206ա. սիւնեակ ա.

«Ցառաջ քան զուխտատան ամի թարգմանելոյ Փիլովնի զգիրսդ զայդ Սոսկրատայ ղէկեղեցական պատմութիւն՝ թարգմանել էր Աբասուն Գրիգորի Զորոյիորեցւոյ թարգմանի, ընդ փառաւորս յիշելոյ, Ներսէհի վրաց իշխանին փեսային կամարարականաց, զգիրս պատմութեան վարուց սրբոյն Սեղբեստրոսի էպիկոպոսին հռովմայ, եւ կայր ի քարտիսի»։ Այժմ պատշաճ համարեցաք առդմին գրոց գրել։

«Եւսեբիոս Պամփիղեայն զեկեղեցականն հոմագրելով զպատմութիւն, կրկնակ զայս եթող ստուգել զորաւրինակ եւ յայդն հոմագրութիւն արտաճառեաց. ևլն»

Թ. 211բ.

Ներքևի լուսանց.քում նօտրագրով՝ «Ցիշեցէք զանարժան խաչիկս»։

Թ. 230բ. սիւնեակ բ.

«Ցայսմ հետէ սկսաւ մեծանալ ի կողմանն հռովմայեցւոց անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հաւր եւ սուրբ հոգւոյն փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից։ Ցիշատակութիւն . . . Այս պատմութիւն իմաստասիրական ոչ գոլով ի սուրբ մենաստանիս, ի վանս յովհաննու, ես տէր համառաստպս բաղում փափագանաւք ի խնդիր էի, զի յետ իմ մնասցէ ինձ ընձայ, ընդ մեծամեծս, ի սուրբս այս սիովն կաթուղիկէի։ Արդ աղաչեմ ըզձեզ մանգունք սուրբ առագաստի, հայցեալ ի Քրիստոսէ զթողութիւն յանցանաց մերոց, եւ ինձ եղկելի գրչիս»։ 1

Թ. 231ա. սիւնեակ ա.

«Նախերգան պատմութեան Աղուանից Առաջին հատուածն գլուխք Լ»։

Թ. 235բ. 236ա.

Սոյն երեսները դեղի՝ ներկ քսած և 236ա. սիւնեակ բ. ինն տող կեղծած. տողերի տակից քերուածքը նկատելի է։

Թ. 250ա.

Ներքևի լուսանց.քում «վայ քնոյս»։

Թ. 256բ

Տակի լուսանց.քագիրը «Սիալեցաւ միտքս պի նեղէին զմեզ այլակրանքս թողութիւն արայ, աւաղ ի վրացեաց. (նօտրագիր) ՃշմարիՏ»։

Թ. 264բ.

Տակի լուսանց.քում նօտրագիր «✠ յիշեցէք զանարժան խաչիկս».

Թ 265ա. սիւնեակ բ.

«Աստանաւր յիշեսջիք զորբազան էպիսկոպոսն զտէր Համազասպ, որ եղեւ ստացաւղ գրոցս. եւ զգրիգորէս կրաւնաւոր, թէ ճար կա և զմեղապարտ գրիչս»։

Թ. 273ա. սիւնեակ բ.

«Կատարեցան գիրք առաջին պատմութեանս աղուանից»։

«Ձստացող գրոցս ներջանիվ էպիսկոպոսն զտէր համազասպ, եւ զեղկելի գրիչս յիշեցէք ի Քրիստոս»։

---

1. Այստեղ վերջանում է Սոկրատի պատմութիւնը եւ տեղի է տալիս Աղուանից պատմութեան։

Շուտով Սոկրատի պատմութեան մի գիտնական հրատարակութիւն կունենանք շնորհիւ Արժանապատիւ Մեսրոպ վարդապետ Տէր Մովսէսեանցի։ Արդէն երկու տարի է, ինչ որ Հայր Մեսրոպը ուսումնասիրում է Սոկրատեան ձեռագրերը եւ ներկայումս տպագրում է Մայր Աթոռի Տպարանում։ Հրատարակութիւնից յետոյ գոր՝ի գիտնական արժէքը կգնահատուի՝ թէ որքան հմտութեամբ եւ բարեխղճութեամբ է կատարուած այն։

Որովհետեւ Հայր Մեսրոպի ուսումնասիրութեան առարկան եղած է Սոկրատը, ուստի եւ սոյն ձեռագրի մէջ միայն Սոկրատի երեսահամարներին էին մատիտով նշանակուած 1—458, իսկ ձեռագրի Աղուանից պատմութեան մասը բարձի թողի էր արուած։ Մի քանի նկատողութիւն։ Ինչպէս երեւում է Հայր Մեսրոպը շատ քեմեւ է վերաբերուել դէպի այս ձեռագրի ուսումնասիրութիւնը, քանի որ Արժանապատիւ Հայրը այս հազուագիւտ եւ թանգագին ձեռագիրը համարել է տասնեւեօթներորդ դարու վերջին քառորդի գործ, մինչդեռ տասներեքերորդ դարու վերջին քառորդին է պատկանում գրչութիւնը, իսկ նորոգութիւնը նորա համարած թուականին։ Ներեւի նորոգութիւն բառի վրայ նա ուշադրութիւն չի դարձրել։ Եւ որովհետեւ Հայր Մեսրոպը ստանձնած ունի մի ծանր եւ պատասխանատու գործ՝ այն է Մայր Աթոռի Մատենադարանի ձեռագիրների ցուցակը կազմել, ուստի բարեկամական խորհուրդ կտամ նորան, գոնէ այսուհետեւ մեծ բարեխղճութեամբ վերաբերուել դէպի ձեռագիրների ուսումնասիրութեան լուրջ եւ խստապահանջ գործը։

Թ. 273ը. սիւնեակ ա.

«Երկրորդ պատմութիւն արևելից Աղուանից նահանգիս»։

Թ. 306բ.

Ներքևի լուսանցքի յիշատակարանը՝ «Աւաղ մեծի աղետիս և անմխիթար սգոյս որ եհաս ասես վրաց և քրիստոնէից, զի սպանաւ թագաւորն դեմփտրէ յաղգէն նետողաց, ոչինչ մահու պարտական, ի սահմի ամոյ, և էր թիւն ՉԼԸ։ Եւ ահաւ ի մեծի վտանգի կանք, տէր փրկեա զմեզ . . . . . նեղութեանց ամէն. (այս տողը կտրած է միջից)։

Թ. 318բ. սիւնեակ բ.

«Աստանաւր յիշեսջիք զստացաւղս գրոցս զսրբասնեալ զերջանիկ էպիսկոպոսն զտէր Համազ. ընդ նմին և զիս զողորմելիս»։

Թ. 322.

Այս թղթի երկու երեսի տ-ղադարձութեան սըխալները թանաքով սևացրել են և փորձել են ուղղել։

Թ. 335.

Միջից ճղուած և կարկատած. ինչպէս և 92 և 93 թերթերը։

Թ. 343.

Այս թերթի առաջին երեսի առաջին սիւնեակը բոլորագիր է, իսկ մնացեալ երեք սիւնեակները նօտրագիր. պակասը լրացրել են։

Թ. 351 և 352.

Այս երկու թղթերի ութ սիւնեակներում բոլորագրով պակասը լրացրել են։

Թ. 353ա. սիւնեակ ա.

«Երկրորդ Հատուած պատմութեան աղուանից»։

Թ. 359բ. սիւնեակ ա և բ.

Այս երեսում մի տող առաջին սիւնեակից, եօթն տող երկրորդ սիւնակից քերել են և տեղը ուրիշ բան գրել։

Թ. 362.

Այս թերթի մէջ Ֆս բոլորագրով պակասը լրացրել են։

Թ. 364ա.

Ներքևի լուսանցքի գիրը՝ «Եղուկ ահս տըրդեաց, լռայեա յարարածս քրիստոս աստուած, և մի ըստ գործոց մերոց հատուսցես»։

Թ. 374, 375 և 376.

Այս թերթերի մէջ նմանապէս բոլորագրով պակասը լրացրել են. միայն 375 թ. երկրորդ երեսի բ. սիւնեակում ութն տող քերած և կեղծած է։

Թ. 377ա. սիւնեակ ա. և բ.

«Յիշատակագրութիւնք նորոգման գրոցս», որ են.

Ա. Սիւնեակի բոլորագիր յիշատակարանը՝ «Շնորհօք և ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ և սուրբ Հոգւոյն, եղև նորոգումն գրոցս, որ կոչի Սոկրատ և աղուանից պատմագիր. ի թվին (1676) ՌՃ և ԻԵ, յերկրիս Արարատու ի գաւառս Կարբու, ի գերահռչակ և հրաշափառ աստուածարնակ սուրբ մենաստանս յովհաննու վաներից, ընդ հովանեաւ սուրբ կարապետիս, և սուրբ կաթուղիկէիս, և այլ միայնեղին սրբոցն. ի բռնակալութեան պարսից Շահ սուլէմանին, և յիշխանութեան տանս Արարատեան Սահֆիղուլի խանին երկրորդի. Ի կաթուղիկոսութեան սուրբ էջմիածնի Տեառն Յակոբայ. և առաջնորդութեան սուրբ մենաստանիս Յովհաննէս վարդապետի կարբեցոյ, հոգարարձութեամբ և օժանդակութեամբ նորուն եղև նորոգեալ ըզգիրքս և առնդեցաւ ի գրուանս սուրբ կարապետիս. որք օգտիք ի սմանէ յիշեցէք յաղօթս ձեր զառաջնորդ Յովհաննէս բարուեպետն և զաթոռակալ զգրիգոր վարդապետն, և զնալիֆայ զաքարայն, աշխատող հնացեալ գրոցս. և զիս անարժան աթանաս գրիչս. և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ ամէն»։

Ա. Սիւնեակի խոշոր նօտրագիր յիշատակարանն է՝ (1733) թվին ՌՃԶԲ յուլիսի Ե. որն Եշղաթի. մեր սուրբ անապատիս Հայր յկնազկաց Յովանէս վարդապետ բերինք ի սուրբ ուխտս Տիրնք սուրբ կարապետի եկեղեցին. Եշղաթի երեկոյի լոյս մեծ ձագեաց ի վերս դակաղին, մինչև պլազգինքն ևս տեսին և երանեցին. ուրպաթի ի հող տապանի եդինք նոյն տեղին։ Այս լոյսահոգի վարդապետս էր տեղեաւ ակնցի, տարին բոլոր չոր պաս. շաթին Բշաթին և անգամ ճաշակվեր ցամաք հաց, մինչև յետի տարիքն ամիսն կամ Խօրն ուտէր հաց. ուր է այնպէս բերան որ սորա առաքինութիւնն պատմի. Ի կաթուղիկոսութիւն սուրբ էջմիածնի Տեառն Ապրահամու, և առաջնորդութեան սուրբ ուխտիս Յակոբ անարժան եպիսկոպոսի, որ է ի յերկրէն գոհստնեաց ի գեղջեն Յողնոյ։

Բոլորագիր՝ «Յիշատակէ գիրքս այս սուրբ էջմիածնայ։ Ով որ հանէ ի սուրբ Աթոռոյս անիծեալ լիցի յԱստուծոյ»։ Այլ գրչով «յիշատակէ այս գիրքս սրբոյ էջմիածնի»։

Այս եղակի և անփոխարինելի ձեռագրից ընդօրինակած Աղուանից պատմութեան ձեռագրերն են՝ № № 632 և 250 և տպագրութիւնք Փարիզ 1860 ն. վ. Շահնազարեանցի և Մոսկվա 1860 մ. Էմինի հրատարակութեամբ։

Ղ. վ.

(Շարունակելի)

ՆՇԽԱՐՆԵՐ.

ԿՈՐԱՑ ՈՒ ՄՈՌԱՑՈՒԱԾ ՀԱՑԵՐ.

(Տրապիզոնի հայ-մամմետական գիւղերն եւ նրանց ա-ւանդութիւնները).

ՍԵՒ ԳԵՏԱՅԻՔ.

Համշէնի լեռներու արեւմտեան երեսից հիւսիս կը հոսի Սեւ Գետ (Կարա—դէրէ) ասուած մեծ և պատմական գետն։ Սորա հովտի ամբողջ տարածութիւնը Սեւ Գետ և ըստ ժողովուրդի Սեւ Գետացիք կոչուին, որ Համշէնցոց պէս հայերէն կը խօսին և 1708—10 թուականներուն թուրքացած են կրօնամոլ մոլլաներու և ենի-չերիներու ճնշման ներքև։

Սեւ գետն քանի մոտաւորապէս 50 կիլոմետրից կը հեռանայ, տակաւ առ տակաւ արեւմտեան հիւսիս կուղղուի։

Սեւ Գետացիք կը գտնուին Տրապիզոնից ծովով 5—7 ժամ յարեւելս եղած Սիւրմինէ գիւղաքաղաքին բարձրերը։ Սիւրմինէ, որ ծովեզերեայ քաղաք մի է, եամպօլու և Սեւ Գետի միջավայրը, ունի նաւահանգիստ, գող և աւազակ բնակիչներ, որք և ջերմ մահմետականներ են հայէ և յունէ դարձած։

Այս Սեւ Գետացւոց երկիրն անհուն անտառներով պատած է։ Հինաւուրց անտառներու խտացած ծառերն արեգական ճառագայթներն անթափանցելի դարձուցած են։

Եամպօլու գետն կսկսի Դաշ-քէօփրի լեռներէն, 3 ժամ իւր ընթացքը շարունակելով լեռնահովտի մի մէջ գտնուած 1,000 տնօրոր յունական գիւղի միջից կանցնի։

Սանթա կը կոչուի այս գիւղը՝ բնակիչները չունին ցանք, մեծ և փոքր որմնաշար են և քարագործ, որք լաւ կերպով կատարելագործած են իրենց արհեստը։ Սորա շարունակ պանդխտութեան կը դիմեն, չարքաշ կեանք անցնելով դրամ կը շահին, իրենց հայրենիքը կը վերադառնան ի Սանթայ, ուր կը վայելեն իրենց վաստակը։

Սանթայից Եամպօլի ջրի հետ իջնալով՝ կը պատահինք Կոդալլի և Մեղրէ յունական հովտավայրերուն, ատի ևս ½ ժամից Աղրիտ թուրքացած հայ գիւղին կը հասնինք, որ թերևս ժամանակաւ քաղաք եղած լինի, ուստի հայ գիւղացւոց մէջ «նշանացիր Աղրիտ քաղաք, գողցար օխտը հատ աւանակ...» առածն յօրինուած է։

Աղրիտից իջնալով ½ կամ ¾ ժամ իրարմէ հեռի Գլըճլի, Արթլի, Սիմոնայ, ի վերին և ներքին Միսոխոր գիւղերու կը պատահինք։

Ներքին Միսոխոր գիւղից վայր այս ջուրը եամպօլու կասուի։

Սեւ Գետացիներից 8 ժամ արեւմտեան հիւսիս եամպօլու ջրի ձախ հովտի վերայ մերձ Սեւ ծովի, անտառներու մէջ տարածուած, կան մի քանի գիւղօրայք, որք այս օր ներկայացուցիչ են և մնացորդ Սեւ Գետի բազմաբնակ հայ ժողովրդեան, որք այն սեւ օրէն ի վեր քանի քանի սեւ օրերով իրենց հայութիւնը անարատ պահած են։

Արդէն վաղուց՝ ինք գինքս ճանաչած օրէս, ջերմ փափաք ունէի այն սեւ հայերն՝ նոցա ներկայացուցիչ «Սեւաւոր» հայերն տեսնել, հասու լինել իրենց անցեալ սրտաճմլիկ անցքերուն։

Այդ ինձ յաջողուեցաւ. աշակերտներէս մին՝ Վաղարշ Խոյեան (այժմ ի Տրապիզոն Վահան քահանայ, որ է առաջնորդական փոխանորդ) ուսուցիչ կարգուեցաւ այդ տեղ մնացած խումբ մի հայերուն։

Ուսուցչի կոդմէն հրաւիրուեցայ աշակերտաց քննութեան, 76—77 թուականներուն յաջողութիւն չգտայ աշխատասէր ուսուցչի ցանկութիւնը կատարելու։ 1878 մայիս 23-ին ծովով 5 ժամ յարևելս ճանապարհորդեցինք, Փալկոզ կոչուած վայրը դուրս ելանք։ բարձրացանք անտառապատ լեռներն ի վեր, հասանք Փիրվանէ գիւղի Գատրա թաղը, իջևանեցինք Մարտիրոս Մատիկեանի տունը, հայկական հիւրընկալութիւն մի վայելեցինք։

Այժմ մենք կը գտնուինք Տրապիզոնից 7—8 ժամ յարեւելս և Սեւ գետացւոց երկրին արեւմտեան հիւսիսային ծայրն, որ Սեւ գետի կը պատկանի։

Գատրա թաղի հանդիպեցը (հիւսիս) կը տեսնուի Էլէմհոնս կամ Իլիմնոց գիւղն, սորա մօտ կայ ի հնուց մնացեալ հայկական եկեղեցին, որ բարձրադիր Գատրա կոչուած վայրը հաստատուած է։

Նկեղեցւոյս արեւմտեան զառիվայրն, որ ընդարձակ զառիվայր մ'է, Վահանցիք կասուի, որ ամբողջովին հայ-թուրք բնակիչներէ բազկացած է, ուր դեռ եօթ եկեղեցւոյ հետքեր կանգուն կան։

Երեք օր Գատրա մնացի, փորձիկ ժողովուրդն շուրջս միշտ պատած գտայ, աշակերտաց քննութիւնը կատարեցի, երեմն միջոց գտնելով Սեւ Գետի թուրքացած հայերուն վերայ մանաւանդ տեղեկութիւններ քաղեցի։ Ուսումնասիրութեան ընդարձակ ասպարէզ բացուեցաւ իմ առջև. այդ ասպարէզը մտնելու համար մեծ ուժ պէտք էր, սակայն տասն և հինգ տարիներէ ի վեր մեր յարգելի Տրապիզոնցի հայրենակիցներից անձկանօք կը սպասէի, գժբաղդաբար մէկն երևան չեկաւ այդ ամենակարևոր վայրի վերայ դրող, որպէս զի նկարագրեր այդ վայրն, ուր գետեղուած էին ըստ ուսոյ թուով հայ ժողովուրդ մի բազրատունեաց անկումից յետոյ և հաղարաւոր յիշատակներ ու աւանդութիւններ թողած՝ որ տակաւ առ տակաւ կորչելու վերայ են։

Հազար ափսոս մեր երիտասարդութեան, որ իրենց և ազգին պատիւ բերող գործերէ հեռի դանդաղելով փափկակեաց կեանք անցնելու համար միայն ծնած են։

Ահա այն սակաւ տեղեկութիւններն, որ կրցայ ժողովել այդ կորած և մօռացուած հայրենակիցներու մասին։

Մենք էինք Փիրվանէի մէջ, Սեւ Գետ մեկնից 6—7 ժամ յարևելս և Հարաւ յարևելս տարածուած է. այս գետի երկու հովիտներու բնակիչներն, որպէս վերև ասացինք, 1700 թուականներուն ամբողջովին հայ էին։

Համշէնի և Սեւ Գետ գաւառաց մէջ կան 16,000 ի չափ հայեր, որք մտած որջացած էին այնպիսի վայրեր, գաւառակներ, որոց յարաբերութիւնը արտաքին գաւառներու հետ խզուած էր, երկրի դրից բնական պատճառներով։

Այս վիճակին ենթարկուած էին նաև քանի յու-

---

1. Որպէս Համշէնի գիւղօրայք մեծաւ մասամբ՝ նոյնպէս Սեւ գետի գեղօրէից անուններն հայերէն կը հնչուին, նոյնպէս գետեր եւ վայրեր իրենց հայ անունը պահած են. և նշդեհ քուն Հայաստանի մէջ շատ քիչ հայ անուններու կը պատահինք։

նական գաւառներ, որոց մեծ մասը Հայոց նման թուրքացած են, այս օր ևս յունարէն կը խօսին։

Այս կարգէն էր Օֆ յունական քաղաքն իւր գաւառով, որ Տրապիզոնի արևելքն Իրիզէի և Սիւրմենէի միջավայրը մի ծովեզրեայ վայր կը գտնուի. այս տեղ ամէն հասակի անձնաւորութիւնք յունարէն կը խօսին, արականք ուրիշ արհեստ չունին (ամիրողլովին մեծ ու փոքր մծղլաներ են), կը տարածուին Սև ծովու արևելեան և հարաւային եզերքի վերայ եղած երկիրներն մինչև Կարին՝ մահմետական ժողովրդեան մէջ կրօնական արարողութիւն կը կատարեն. մեծ մասամբ յունախօս են, որք թուրքերէն բառ մի անգամ չեն հասկանար, մզկիթներու մէջ յունարէն կը քարոզեն մեծաւ մասամբ. երկու տարեկան երախայից մինչև զառամեալ ծերն մծղլա են, ամենուն գլխուն սպիտակ փատիլոց կը տեսնես։

Օֆ գաւառին արևելքն Եգերացիք՝ Հարաւն Համշէնցիք, արևմուտքն Սիւրմենէի աւազակ թուրքերն բնակած լինելուն՝ յոյն քահանայք չկարողացան յարաբերութիւնը հաստատուն պահել, որպէս այլ տեղեր, որով այսօր մահմետականութեան ճիրաններուն մէջ կը գտնուին, և ամենամոլեռանդներն են. Մահմետի վերայ անվուր առասպելներ կը յերիւրեն։

Այս երկու գաւառներու (Համշէն և Օֆ) կորըստեան մէկ պատճառն ևս կարելի է համարել յունական և հայկական առելութիւնը՝ որ մինչև օրս կը տևէ. մինչև օրս թուրքացած յոյներն Համշենցոց «սկատա Արմէն»՝ իսկ հայ մահմետականք յոյն մահմետականաց «չարոխ ուտող հոռոմներ» կասեն և միմեանց աղջիկ չեն տար և առներ։

Նոյնպէս նոյն թուականներուն Սև Գետէ դէպի հարաւ—արևմուտս Տրապիզոնէն դէպի Կիւմիւշխանէ գնալու ճանապարհի վերայ և Տէյիրմէն դէրէ ասուած ձախ ափերուն մօտ կը գտնուէր Կռօմ ասուած յունական գաւառակն, որ 2—3000 տուն յոյն ժողովրդէ կը բաղկանար. սորա վերայ ևս բռնացան Ենիչէրիք և մծղլաներն, սոքա ևս մահմետական կրօնը ընդունեցին, երկու դարի չափ շարունակեցին, մինչև գարուս առաջին քառորդը։

Կռօմ բոլորովին ընդհատուած չէր այլ գաւառաց հետ, յոյն քահանաներ ծպտեալ շարունակեցին յարաբերութիւնը, քրիստոնէական հուրը վառ պահեցին Կռօմի մէջ, գետնափոր եկեղեցի մի շինեցին, ուր տարին մի անգամ կրօնական արարողութիւնը, եկեղեցական խորհուրդներն կը կատարուէին, ժողովուրդն ամեն օր պարտաւորեալ էր մզկիթ գնալ աղօթել յայտնապէս, իսկ տարին մի անգամ իր սրբած կրօնի պաշտամունքը կատարել գաղտնի՝ գետնի տակ։

Յունական կղզեաց ապստամբութիւնից յետոյ Կռօմցիք այլ և այլ դէպքերու միջնորդութիւնը խնդրեցին՝ յայտնելով որ իրենք քրիստոնեաներ են։

Բայց հայ մահմետականներու բաղդն այդպէս չէր. Սև Գետացոց սև բաղդն գետ սև է, գետ «սևաւոր» սև, աւանդապահ ծերունի պառաւներու սրտից սև հառաչանքներն կտրած չէ, գետ գուն ուրեք կը գտնուին մայրեր, որք իրենց աղ չկանց կասեն. —Մեռնիմ հէյլ ատէթին, հէյլ մեռօնը, պատառագը, պասը, խաչը, խունկը, մումը, խոստովանքը ու սրբութիւնը, էմեն ինչ սուրբ է, չօն ատէթ (սովորութիւն) է թուրքի ատէթը։—Ահա ասեմ թէ ինչպէս Մահմետականութեան ճիրաններու մէջ ընկաւ այս ցաւալի և խղճալի երկիրն։

Ենիչէրիներու ի Տրապիզոն ամենազդեցիկ ժամանակն էր 1700 թուականը, որք Պօլսից ի Տրապիզոն որջացած, իրենց թուոյն վերայ ևս բարդուած էին տեղացի աւազակք ու ենիչէրեաց կարգն անցած և սոքա ևս սփռուած էին մինչև Կարին, Մուշ, Վան, Բազէշ, Տիգրանակերտ, Խարբերդ և այլն։

Ենիչէրիներու մեծ ոյժ տուած էր Սիւրմենեցի աւազակաբարոյ ժողովուրդն, որք մեծ և փոքր աւազակ են, այս օր իսկ մի փոքր մասն միայն նաւավարութեամբ կը պարապին. ենիչէրիք աւելի նոցա ազդեցութեամբ ի Սև Գետ գործած են, երկրի դիրքն ևս իրենց օգնած է։ Ամեն գաւառ լեռներով ու անտառներով շրջապատուած է պարապի նման, հինաւուրց անտառներն անմխելի գարձած են, որով Ենիչէրիք ուռկանի մէջ ամիսփռուած ձկներու նման ինչ որ ուզած են այս տեղ անել՝ յաջողած են։

Այսպէս էր Սև Գետ և Համշէն, որք կղզիացած էին այդ երկու հովիտներու մէջ. Պարխար լեռներու շղթայն ընդհատած էր Կարնից և Բաբերդից, արևելեան կողմն Եգերացիք, հիւսիսային և արևմտեան կողմից յունական առելութեան մատնուած. առաջնորդներից, նոյն իսկ կաթուղիկոսներից մոռացուած, քահանայից զրկուած, ալէկոծեալ. 36 գիւղի համար հազիւ մի քահանայ կար։[1]

Թորոսլի գիւղն Սև Գետի ամենէն բարձրն և մեծն է. այս գիւղը կայր տէր Կարապետ անուն քահանայ մի, որ նոյն ժամանակ մեծ հռչակ հանած էր, և ժողովրդից իբրև սուրբ անձնաւորութիւն մի կը պաշտուէր, ամբողջ Սև Գետի ժողովուրդն նորա անունով կերդուէին։

Սիւրմենէ գաւառին մէջ անուանի եղած էր նաև Ղուռուփ օղլի մծղլա Մէհմէտ. սա այնչափ մոլեռանդ մէկն էր, որ կուզէր մի ակնթարթի մէջ զբրիստոնեայս մահմետական կրօնին գարձնել։[2]

Քանի անգամ մնաւ Համշէն և Սև Գետ, ենիչէրիներու խմբով կամեցաւ իւր նպատակը առաջ տանել, չը յաջողեցաւ, թէև գտաւ իւր քարոզին լսող, իսկ ոչ մահմետականութիւնը ընդունող. այլ և այլ երկիրներէ ընտրեց քառասուն մոլեռանդ աշակերտներ, միջոց մի ուսոյց, մոլեռանդութեան թերին սոցա մէջ լրացոյց, զորս մծղլա կարգեց, երդում առաւ նրանցից, որ ցմահ մահմետականութիւնը տարածելու համար պիտի մաքառին։

Այս մծղլաներն կրկին հոգւով և մեծ եռանդեամբ խորհուրդ արին մոլեռանդ թուրքերու և ենիչէրիներու հետ, մտան Սև Գետ, մի ծայրից միւսը քարոզեցին մահմետականութիւնը, սպառնացան, «եթէ չ'ընդունիք, թագաւորից մեծ բանակ կգայ, զամենդ կը կոտորէ, ձեր որդիքը և աղջկունքը ձեղնից կը բաժանեն...» ևլն. սպառնալիօք։

Մծղլաներն տակաւ առ տակաւ սերմանելու վայրեր գտան, ոմանք առ երես, ոմանք հայերից առ ահի կը խոստովանէին թէ Մահմէտ ճշմարիտ մարգարէ է, և թէ Ղուրանը սուրբ է։

Հայերէն ոմանք ժամանակի պահանջման և քաղաքականութեան հետևած էին. Ջերմեռանդ մծղ-

---

1 Համշէն որ մօտ 40000 տուն, Սեւ Գետ 5—6000 տուն է. մօտաւորապէս այս 16,000 տուն հայերն 4 - 5 քահանաներ ունէին։

2 Սիւրմենէի ժողովրդեան վերայ կը տեսնուի քարակ երկար ղէմք, կապոյտ դիւրաշարժ աչքեր, արագաշարժ մարմին՝ որք կը ծանեմ Պոնտոսի թագաւորութեան բարձման միջոցին թուրքացած են, որով իրենց շրջականերուն վերայ ազդած են։

լաներն իրենց սերմանած սերմը արդիւնաւորած կարծելով՝ հաշիւ կը տային գուրսը գտնուած մահմետականներուն, թէ իւրաքանչիւր գիւղէ որչափ անձնաւորութիւններ լսած և ընդունած են Մահմետի կրօնը։

Մօտ տասն տարի քարոզեցին մօլլաներն Սև Գետացոց, վերջ ի վերջոյ պաշտօնապէս առաջարկեցին որ ընդունին Մահմէտի կրօնը։

Հայ ժողովուրդն բուռն կերպով դիմադրեց մօլլաներու առաջարկութեան և արտաքսեց նրանց Սև Գետից։

Մօլլաներն վիրաւորուած նախ հնարագիտութեան և ապա բռնութեան դիմելու խորհուրդն յղացան, ժողովեցին 500-ի չափ մոլեռանդ Թուրքեր, որոց աւետեցին թէ Սև Գետացիք պաշտօնապէս մահմետական կրօնը ընդունելու են, և թէ այս այն ինչ մարդով մեզ լուր յղած են և պաշտօնապէս թլփատութեան արարողութիւնը իրենց վերայ կատարել կը խնդրեն, և թէ ամէն ջերմեռանդ մահմետականի պարտականութիւնն է այսպիսի մեծ հանգիսի մի ներկայ լինելու։

Այս 500-ը տարածուեցան երկրի այլ և այլ կողմերն, քարոզեցին և հոչակեցին մօլլաներու աւետիսն, հազար ձիաւոր, մի այնչափ ևս ոտով դիմեցին Սև գետ, նաև մի մեծ Ենիչէրեաց խումբ ևս հետերնին, որպէս զի չզրկուին այն մեծ հանդիսէն։

Այս ամբոխը մեծ հանդիսով և աղմուկով մտաւ Սև գետ. Ղուրուճ օղլի Մէհմէտ առաջ անցած ձին կը քշէր, վեց հոգի նորա չորս կողմ պատած, պատկառելի կերպով կը ծառայէին նմա, նորա քառասուն աշակերտներն դրօշակ պարգած երգելով կը հետևէին իրենց վարժապետին, Ենիչէրիք ևս փայլուն և մեծամեծ տապարներ իրենց ուսին դրած, մօլլաներու շուրջը պատած կը հետևէին ամբոխին, Մահմետականներից ամենէն ջերմեռանդը ամբոխը ճեղքելով կաճապարէր առաջ սողալ, կրօնականներու մօտ գտնուիլ։

Մօլլաներու երգը, Ենիչէրիներու «Հա, Հուն» մոլեռանդ ամբոխի խառնաձայնը աղաղակն՝ մեծ սարսափ ազդեցին և զարմանք Հայ գիւղացոց, յիշեցին որ «սուլթանը զօրք յղած է գիրենք կատորելու», որպէս առաջ սպառնալեօք լսած էին։

Մօլլաներն իրենց խմբով իջան մի Հայ գիւղ. առաջարկեցին որ մահմետականութիւնը ընդունողներն Թող ներկայանան իրենց առաջնորդին։

Հայք միակամ դիմադրեցին յայտնելով, որ այս երկրի մէջ Թրքացող չկայ, ինչ ևս սպառնալիք լինի, միակամ դիմադրելու են։

Մօլլաներն ատեան բերել տուին այն Հայերն, որք միւսուլմանութեան մերձեցած կը համարուէին, որոնցից Հարց ու փորձ արին, իրենց համոզումը ուզեցին գիտնալ։

Նոքա պատասխանեցին.

— «Մեզնից վեր կայ Թորոսլի գիւղ, ուր կը նստի Տէր Կարապետ քահանայն, ժողովրդեան մեծ մասն նորա համոզուած է, չեն գառնար մահմետականութեան. մենք ևս գառնալու լինենք, Հայ ժողովրդից անհնարին Հարուած կը կրենք։»

Թուրք ամբոխը նոյն հանդէսով մեկնեցաւ, քանի գիւղեր պատահելով՝ մտաւ Թորոսլի մեծ Հայ գիւղն, ուր էր պաշտելի Տէր Կարապետ։

Տէր Կարապետ զարմացաւ, երբ զայս տեսաւ. Հարիւրի չափ զինեալ Հայեր յղեց անմիջապէս, որք գիւղի եզրն սպառնացան Թուրք ամբոխին որպէս զի գիւղը չը մտնեն, շուտով Հեռանան. ապա Թէ ոչ ասացին, ցմահ կռուելու են։

Մոլեռանդ ամբոխի վերայ մեծ ներգործութիւն արաւ Հայերու սպառնալիքը, Թէև կատաղած կուգէին մի վայրկեանի մէջ կլլել ու կորնչցնել, սակայն վտանգաւոր դիրքի մէջ կը գտնուէին, Հայ բնակիչներով շրջապատուած էին։

Խոհեմութեամբ յետ քաշուեցան, տարածուեցան մոլեռանդ Թուրքերու մէջ, յայտնեցին որ «Հայեր ապստամբ են, դիտմամբ զմեզ Հրաւիրած են թլփատուելու, որպէս զի զմեզ ներս առնեն, ապա կոտորեն, Հազիւ կարողացած ենք որոց նպատակին Հասու լինել, փախչիլ»։

Այս և սորա նման խօսքեր տարածեցին Թուրք Հասարակութեան մէջ, մոլեռանդ մի մեծ ամբոխ ևս գրգռեցին Հայերու դէմ։

Բերնէ բերան տարածուեցաւ. Ղուրուճ օղլին, մօլլաներն և պատուաւոր մահմետականներ անարգուած են, ուրեմն մահմետական կրօնը և Մահմետ անարգուած է։

Այլ և այլ տեղերէ գիտնական մօլլաներ, դպիր, մէջթիի ևն անձինք Հաւաքուեցան ի Սիւրմենէ, Ղուրանը և նորա բացատրութիւնը մէջ տեղ դրին, ամենը պատկառանօք Համբուրեցին, որոշեցին Թէ դուրանի Հրամանն է, քրիստոնէից լաւ խնամ տանել, բայց երբ մէկն գիմէ մահմետականութեան և ետ դառնայ, նորա պատիժը մահ է. նա պէտք է մտս առ մտս յօշոտուի, զի մարգարէն խափած է. իսկ Սև Գետացիք ոչ միայն Ասուածոյ մարգարէն խափած են, այլ և ապստամբ են, ուստի ոչ Թէ Հասակաւոր մարդերն մահուամբ պատժել՝ այլ ծծկեր երեխայն մինչև անգամ ի սուր մաշել, որպէս զի այդ անհաւատներու սերունդը այս աշխարհէն բարձուի։

Մօլլաներու որոշումը Հաղորդուեցաւ Տրապիզոնի կառավարութեան և Թուրք Հասարակութեան, մոլեռանդներու Թիւր քաջալերակից, կառավարութիւնն ևս իւր ոյժը միացոյց այս ամբոխին, մեծ ոյժով մտան Սև Գետ, առաջին անգամ մտան Թորոսլի և գիւղը պաշարեցին յանկարծակի։

Աւագ շաբաթի օրն էր, ժողովուրդն Հաւաքուած էր եկեղեցին կրօնական պաշտամանց ներկայ լինելու. տեսան շրջապատուած ամբոխին, որ կառավարկչին և կրսպառնային մահմետականութիւն ընդունելու. Հայ ժողովուրդն չուաբած Տէր Կարապետի երեսն կը նայէին, մօլլաներէն մին Թրով մի Հարուած իջեցոյց քահանայի գլխին, նա ձեռն դէմ տալով կորուեցան բաղուկներն. երկրորդ և երրորդ Հարուածին արիւնը սկսաւ ֆշալ և գետին տապալեցաւ, որ անմիջապէս միւս մօլլաներն յօշոտեցին մտս առ մտս նորա մսրմինր, որպէս զի երկիւղ ազգեն ամբողջ Հայ ժողովրդեան վերայ։

Ժողովրդեան մեծ մասր գիմադրեց Թուրք ամբոխին, մերժեց նորա առաջարկութիւնր և մերժողի գիակր ընկաւ. բարի քահանայի մասունքներու վերայ. կոտորածր ամեն կողմ սկսաւ, ծեր և մանկունք սուրերու Հարուածներու տակ կը թաւալէին արեան մէջ։

Կոտորածը սարսափելի եղաւ. մռնչիւն ու հեծկըլտանք տխուր արձագանք տուին Սև Գետացոց սև գլխին, Սև գետի սև ջրի Հետ խառնուեցաւ սև արիւնը. ժողովրդեան երկչոտ մասն խոնարհեցաւ մոլեռանդ գազանաց առջև. խոստացան կոտորածը

դադարեցնել, որպէս զի հետևեալ օրն որոշում մի տան և Թլփատուին։

Հետևալ օրն որոշումը հաղորդուեցաւ Պուրուֆ օղլի Մէհմէտին, Թէ Սուրբ Յարութեան օրը կը պատրաստուին Թլփատուելու։

Կոտորածը դադարեցաւ. կրօնասէր մարդիկ ժողովեցին իրենց որդիքը, տանը մէջ գտնուած Թեթև իրեղէնները, մտան Սև Գետի շուրջն պատած սև անտառներու մէջ, ոմանք սև գազանաց ճիրաններուն զոհ գացին. մնացողներն մխուեցան անտառին խորը՝ յարևմուտս կոյս ուղղութիւն մի բռնելով, անցան խիտ ու փշալից անտառներու միջէն, ուր ոչ Թէ մարդու ոտք այլ գազանաց անգամ ոտք կոխած չէր։

Այս փախստականներու մէջ կային ջերմեռանդ մարդիկ, որք խնամով հաւաքած և ամփոփած էին Տէր Կարապետի յօշոտուած մարմինը, իբրև անգին մի բան շալակած՝ կը հետևէին փախստականաց։

Փախստականներու վիճակն սարսափելի էր, անտառներն գեռ արձագանք կտան. ոմանք հառաչանօք կը ձայնէին իրենց ամենասիրելի սրտի հատորիկներն, ոմանք կը մրմնջէին կոտորուած ազգականներն, ոմանք նօթի ծարաւ կը հեւային, երախաներու վիժոցի ձայնն անգամ սարսափ ազդած էր հազարաւոր տարի մարդու ձայն չլսող անասնոց և գազանաց։

Եթէ դուք այս անտառները տեսած լինէիք՝ պիտի երևակայէիք, որ սորա մէջէն անցնողներից մէկն ևս չպիտի ազատուէր, իսկ ես կասեմ որ $^{1}/_{10}$-ը Բաբերդի կողմն դուրս ելաւ, $^{1}/_{5}$-ը Տրապիզոնի մերձականերն Ձաղիոս, Ապիոն, Կալաֆկայ ևլն. վայրեր դուրս ելան, դուրս ելնողներու $^{3}/_{4}$-ը ևս անճանապարհ է ի չարևմուտս։

Տէր Կարապետի սերունդից ազատուողներն հասան Կալաֆկայ գիւղն, ուր ևս հաստատուեցան, որ տեղ ևս ամփոփեցին ի հող նորա յօշոտուած մարմնոյ մէկ մասն, միւս մասն ևս Բաբերդի կողմն գընացողներն իրենց հետ տարած էին։

Իսկ այն կողմ Գարա դէրեի մէջ Թուրք ամբոխը՝ ինչ որ արած էր Թորոսլիի, նոյնը ևս արեց Հարիւրի չափ գիւղօրէից. փախչողն արդէն փախաւ, մէկ մասը կոտորուեցաւ, մէկ մասն ևս առ երես ուրացաւ, որպէս զի վտանգն գոնից հեռացնէ։

Բուն զատկի օրն էր ամբողջ երկրի երևելիներից 500-ի չափ անձինք հաւաքուեցան Թորոսլի գիւղի եկեղեցւոյն մօտ գտնուած հսկայ ածրի ծառներու ներքև և Թլփատուեցան։

Մի շաբաթ յետոյ այս ածրի ծառերի շուրջն 30 ձեռք գաւազ գուռնա կածուէր, նախկին Թլփատուողներու ազգականներն էին նոքա, որք հանդիսաւոր կերպով կը Թլփատուէին և որոց Թիւը հազարի կը հասնէր։

Նահատակուած տէր Կարապետի որդին Կալաֆկայ գիւղի մէջ քահանայ ձեռնադրուեցաւ իւր հօր անունով։

Սա ուխտեց, որ միշտ իրենց սերունդից քահանայ ձեռնադրուին տէր Կարապետ անունով և գոնէ տարին մի անգամ ծպտեալ այցելեն ի Սև Գետ, ժողովուրդն հոգեպէս մխիթարեն։

Այդ ուխտը պահուեցաւ մինչև 1820 Թուականներն, որ միշտ այդ տնից եղող տէր Կարապետը կը գնար Սև Գետ, միւռոն կը բաժանէր* կարգ կը կատարէր, ծպտեալ տնէ տուն կը մտնէր, կը խրատէր ևլն։

1820 Թուականներուն՝ չգիտեմ ինչո՞ւ այդ տնից քահանայութիւնը դադարած էր՝ Սև Գետացիք քանի տարւոյ չափ բոլորովին քահանայի երես չտեսան այնուհետև։

1840 Թուականներուն մի այլ ընտանիքէ (Տաւլաշեան) մէկը քահանայ ձեռնադրուեցաւ տէր Կարապետ անունով. սա բարեկամացաւ Համշէնի բէկերու հետ, արտօնութիւն առաւ մեծ բէկից, որ տարին մի կամ երկու անգամ Համշէն գնայ, նոյն տեղ գեռ յայտնի գտնուած 25—30 տան չափ հայերուն կրօնական արարողութիւնը կատարէ։

Այդ բէկը վեհանձն մէկն էր. այդտեղ մընացած հայոց խնամ կը տաներ երբեմն տէր Կարապետին ձի կը յղեր, որ գայ կրօնական արարողութիւնը կատարէ.—«Թուրքութիւնը ինչ ի մը չէ, կասէր նա—ինչո՞ ըլինինք էօր Թուրքացած ինչ, ընկած ինք Աստուծու կրակին մէջ»։

Հայերու պատճառաւ մտաւ տէր Կարապետ Համշէն, գտաւ այնտեղ Թուրքացած հայերու մէջ գեռ քրիստոնէական հոգի, պառաւ կանանց բաժանեց միւռոն, որ տանելով իրենց երախայոց քսեն։

Կը յիշեմ 60—63 Թուականներուն կային գեռ ևս ջերմեռանդ կիներ, որ իրենց երախայներն Տրապիզոն բերած կամ յղած յանձնած են իրենց մարդկն գաղտնի մի հայու և առարկած, Թէ ջուրն ընկած կամ գայլն յափշտակած է։

Որնոյնն ցարդ ևս ջերմեռանդ պառաւներ կը գտնէ այս մնացորդներէն։

Այս տէր Կարապետ նաև շատ անգամ այցեյած է ծպտեալ ի Սև Գետ, միւռոն բաժանած։

Ներկայ անցքերու մի մասը լսած եմ այս տէր Կարապետից, որ գեռ կենդանի է ի Տրապիզոն և շարունակ աշխատած է Փիրվանէ ևլն. քանի տեղեր ուսումնարան բանալ, դարձեալ քրիստոնէական հուրը վառել Սև Գետացոց մէջ. այս առթիւ քանի քանի անգամ Պօլիս գիմած՝ գտած է մէկ երկու կրօնասէր ամիրաներ, որք մասնաւոր օգնած են դասագրքեր շնորհելով։ Սա ևս զօրաւոր օգնութիւն մի չգտնելով գործելէ դադրեցաւ, ծերութիւնը ևս վերայ հասաւ. նաև ապօրինի պսակ մի կատարելուն ի Պօլիս հիւանդանոց տարուեցաւ, յորմէ յետոյ յուսահատ, աստանդական սկսաւ շրջել. ոմանք ևս կը բամբասէին Թէ Սև գետացոց համար օգնութիւն կը հաւաքէ որ ինքը ուտէ. ևլն։

1840—45 Թուականէն ի վեր Սև Գետացոց հետ յարաբերութիւնը դադրեցաւ. այն հայերն, որ Տրապիզոնի հայերու «քեհի, հօրեղբայր և հօրեղբօր որդի» կանուանէին, որպէս ամենամերձ ազգականի կը վարուէին, այս օր տակաւ առ տակաւ սառելու վերայ են, վասն զի օսմանցիք ուսումնարան բացին, կրօնամոլ Օֆցի մոլլաները սկսան բուռն կերպով գործել, շինծու առասպելներ յերիւրել, այնպէս որ հայ ժողովրդին ի մահմետականութիւն դարձն հրաշքներու կարդն դասուած է։

Զոր օրինակ հարցուցի մի Սև Գետացու՝ ինչ էր պատճառն որ ձեր նախնիք մահմետական դարձան։

Պատասխանեց անմիջապէս.

— Մահմետ լուսեղէն ամպի վերայ նստած ձայն տուաւ հայերու. «Ելէք, որ ձեր փրկութեան համար եկած եմ, տեսէք և հաւատացէք որ չկրնաք. մեր նախնիք ինդրեցին մի հրաշք, նա ևս ա-

սաց թէ Սէ Գետ Թող լինի ձեզ հրաշք· այնուհետև Սէ Գետ եօթն օր արիւն դարձաւ, մեր նախնիք այս հրաշքը որ տեսան, ընդունեցին Ճշմարիտ մարգարէին»։

Այո՛, Սէ Գետ արիւն դարձաւ, այդ ևս կը վկայեն այս օր այն հայ քրիստոնեայ ժնացած հայերն. եօթն օր եօթը գիշեր արիւն կը հոսէր. դա ուրիշ բան չէր, այլ եթէ իրենց սիրելի ազգակիցներու արիւնը, որ կատաղի բարբարոսութիւնը կը հեղուր, որ հոսելով խառնուեցաւ Սէ Գետի ալիքներուն. Սէ Գետ կիսով չափ սէ արիւնով Թանձրացած՝ մեծ և փոքր Հայոց գիակներն, կասեն, ջրի ընթացքը կասեցուցած էին։

Մինչև 1850 Թուականներուն Սէ Գետացւոց մէջ մի ուժեղ աշխատանք լինէր, շահած էին, որպես այժմ կը պատմէ ծերունի Տալաշեան տէր Կարապետ։

Բիւր ափսոս, որ մեր անհեռատեսութեամբ և անտարբերութեամբ կորուսինք բաղմաթիւ ժողովուրդ մի. կորսուելու վրայ են նաև նոցա մէջ գտնուած օգտակար աւանդութիւններն, և դեռ այդ մեծ կորստով չենք զգաստացած և թերևս չպիտի այլ զգաստանամք։

Գտնուած եմ Թորոսլի գիւղն, ։ կարծած եմ թէ Հայ գիւղի մի մէջ կը գտնուիմ։ մեծին ու փոքրին խօսքը հայերէն, արանց և կանանց կերպարանքը հայու տիպ և Տրապիզոնի հայ գիւղացոց զգեստի նման։

Հարցուցի մի ծերունու

— Ինչո՞ւ թուրքացած էք։

Սա ջերմ մահմետական էր, խոժոր դէմքով մի առմի պատմել սկսաւ Մահմետի հրաշագործութիւններն։ Մի պառաւ կնոջ ուղղեցի այս հարցումը մի գաղտնի վայր։

— «Ցիսուս Քրիստոս անէլով սկսաւ ասել՝ մեռնիմ հայի հաւատին, էն է եօր ինչանք հիմի կապրինք ....»։

Ծիմլակովացի մի ծերունի պատմեց, թէ իրենք քահանայի սերունդ են, «Քեշիշ օղլի» կասուին, այժմ ևս իրենց տան մէջ եկեղեցական ամէն զգեստներ կան. շատ մի ճանապարհորդ հայ և եւրոպացի ուզած են գնել, բայց չէ ծախած, որպես զի իրենց տան անբաղդութիւն չպատահի։

Նոյն գիւղից մի կնոջ հարցուցի.—դու թուրք ես, ինչո՞ւ մի ոսկի տուիր, եկեղեցւոյ համար աւետարան գնելու։

—Հէյ կիտի հէյ, ասաց, հին էրեցներն ինցօ պէտքը էրեց էին, խալվութ (գաղտնի) մեզիկի մեռոն բերէին կու, միք էլ միր տղոց քսէինք կու, իմ չիպս մօնչէրուս երկուսին քսած ունիմ՝ էնոնք օնուշ Տոմին կու, էնուր էօր քսած չունիմ, շոն Տոտ կուգայ։»

Թրէձոր գիւղացի մի կը պատմէր, թէ «Այվէն գիւղը եղած է աշխ Վարդան, որ հայերէն տաղեր յօրինած է. մինչև հիմայ հարսանիքներու մէջ կերգուին։» Նաև կասէր այս Թրէձորցին, թէ Օձթուխ գիւղի եկեղեցւոյն մէջ մներ է մի օձ և քար գարձած է, երբ քահանայն աւետարանը օձի գլխուն դրած է։

—Դուք ինչ գիտէք թէ հայ էք, հարցուցի մի պառաւի։

— Մեռնիմ քեզ[1] ի, ասաց, ինցօ չէ, կիրակմուտ, չորեքմուտ, ուրբաթմուտ պէհինք կու, խաչէն (եկեղեցի) ըլոտինք կու, մում վառինք կու, ծաղիկ Տոնինք կու, սեր Հաւքի խառնիլ չինք, էլ ինչ ասիմ՝ հէյի էմեն ատէթ պէհինք կու։

Թրէձոր գիւղն, որ այժմ Ծիմլա կասուի, այստեղ Հայ լեզուն աւելի գործածութեան մէջ է։

Այս գիւղացիներից մին կը պատմէր, թէ 250—280 տարի առաջ իրենց գիւղը եղած է կաղ Խաչոյ, որ շատ Հարուստ և կալուածատէր եղած է, ունեցած է Հայերէն գրուած ԹԱՓՈՒ (կալուածը իւրացնող գրութիւն)։ սա վէճ ունեցած է Պուռնախցի Թուրքերու Հետ. Պոլիս գացած՝ ունեցած Հայերէն գրութիւններով դատը վճռակած է. Պոլսից դարձած է Թրէձոր, մէկ եկեղեցի և մէկ մզկիթ շինել տուած է իւր ծախսով։

Որպէս կը պատմեն՝ եկեղեցին 1850-ին մարագ դարձած էր, սակայն նորա Հսկայ շինութիւնը մարդու վերայ մեծ տպաւորութիւն կը թողու։

Մոլեռանդն Հաճի Մահմուտ, որպէս այլուր՝ այս տեղ ևս եկեղեցին քանդել տուաւ։

Վերոյիշեալ Թրէձորցին կը պատմէր, թէ իրենց գիւղը Հայերէն խաղեր ասող պառաւներ կան, եթէ տաս օր իրար վերայ ասեն, չվերջանար. (փոքրիկ մաս մի գրի առած եմ)։

Նաև կասէր թէ մեղուներու մերուտը ։ առաջ իրենց երկիրն էր, յետոյ անցած է Համշէնն։ Մեղուն այնչափ շատ էր, որ արևին լոյսը կը խափանէր։ Ի Սէ Գետ մի քարայր կայ, ուստի միայն տարին ութ ջորու բեռ մեղր կը Հանեն։ Դարձեալ պատմեց թէ Աշանցիք, որք Հայէ դարձած են, Նօշանցիք որ յոյնէ դարձած թուրքեր են, իրար աղջիկ չեն տար և առնէր։

Կը շարունակուի.

Ս. Հայկունի.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԱՅԱՆԱԻՈՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ.

Ա. Փ Ր. Բ Ե Ն Ե Կ Ը.

Գերմանական մանկավարժների Հայրերից մէկն է Բենեկէն, որի ծննդեան Հարիւրամեակը կը լրանայ երեք տարուց։ Բենեկէն մի Բեռլինցի իրաւաբանի որդի էր. նա ծնուել է 1798 թուին։ Տղայութեան Հասակում աչքի էր ընկնում իւր առանձին ընդունակութիւններով. տասն և Հինգ տարեկան Հասակում նա զինուորական ծառայեց և անմիջապէս իրրև ազատակամ՝ զինուոր գրուեցաւ ազատութեան պատերազմին (Freiheitskriege, Նապօ-

1. 1867—8 թուականներուն ի Մուշ գնալու միջոցին այս գիւղէն անցայ։

1. Ամենայն կը հաւատան, թէ աշխարհիս ամբողջ մողուներու մի մայր կայ, նա ևս Համշէնն է, ուստի մղոններն կը ցրուին կը տարածուին աշխարհիս այլ և այլ կողմերը։

լեոն Ա-ի դէմ)։ Այս փաստը մի գեղեցիկ ապացոյց է վաղահաս տղայի ազնիւ ձգտումների և անձնական քաջասրտութեան։ Բեննեկէի քաջասրտութիւնը աչքի է ընկնում և իւր զինական ասպարիզում, ուր նորահաս փիլիսոփան ամենայն անվհերութեամբ դուրս է գալիս իւր ժամանակի մեծ հեղինակութիւնների դէմ կռուելու։

Ջարմանալի արիութեամբ պատերազմէ հրատարակում այս հասիւ քսանամեայ երիտասարդը վերացական հոգեբանութեան ամենազօր ներկայացուցիչներին և իւր կողմն տեսնելով ճշմարտութիւնը, մաքառումէ նախ միայնակ և ապա 1822 թ. սկսած Հերբարտի ընկերակցութեամբ։ Արդէն 1816 ին Հալլէում և ապա 1817 ին Բեռլինում Բեննեկէն իբրև աստուածաբանութեան և փիլիսոփայութեան ուսանող ցոյց տուաւ, թէ ի՞նչպիսի լրջութեամբ ընդունակ է գիտական խնդիրներ մշակելու։ Այն կարճ ժամանակամիջոցը, որ ազատ էր պատերազմներից յետոյ մինչև համալսարան մտնելը՝ նա գործ էր դրել ինքնակրթութեան վերայ։ Դրանով միայն պարզուում է, թէ ի՞նչպես կարողացաւ Բեննեկէն իւր ուսանողութեան հէնց առաջին կիսամեակում աստուածաբանութեան մըցանակի խնդիրներ վճռել։ Երիտասարդ ուսանողի վերայ մեծ ազդեցութիւն արին իւր ժամանակի նշանաւոր աստուածաբաններն ու մեկնիչները։ Բեռլինի համալսարանում առանձնապէս ներգործեց նրա վերայ Շլայէրմախերն իբրև փիլիսոփայ։

Ասանդումն թէ Շլայէրմախերի մի քարոզից յետոյ՝ Բեննեկէն վճռել է թողնել աստուածաբանութիւնն և անցնել փիլիսոփայութեան ուսման։

Հոգեբանական և փիլիսոփայական մի քանի հետազօտութիւնների շնորհիւ 1820 թուին Բեննեկէն Բեռլինի համալսարանում ուսուցանելու իրաւունք ձեռք բերաւ։ Երիտասարդ դասախօսին աշակերտողների թիւը հէնց առաջին օրերից բաւական մեծ էր։ Այսպէս լաւ սկսուած ուսուցչութեան գործը ընդհատուեց սակայն բանի կերպով։ Այս հանգամանքը վերագրում են Հեգելին, որովհետև Բեննեկէն իւր յեղափոխուած հոգեբանութեամբ առանձնապէս այդ փիլիսոփայի ընդդէմ էր գնում։ Իբրև պատճառ այս բանի միջոցին ծառայեց այն հանգամանքը, որ Բեննեկէն բարոյախօսութեան սահմանն էս մտել էր իւր վերանորոգող ուղղութեամբ։ Բեննեկէի բարոյախօսական շարադրութիւններից մէկին հերետիկոսական համարուեցաւ և առիթ տուաւ զրկելու նրան համալսարանի ուսուցչութիւնից։ Բեննեկէի դէմ նոյն հալածանքն սկսաւ, որ ոչ շատ առաջ յարուցած էր Ֆիխտէի ընդդէմ։ Բեննեկէին զրկեցին ոչ միայն Բեռլինի համալսարանում դասախօսելու իրաւունքից, այլ նաև բոլոր սաքսոնական համալսարաններում դասախօսելու իրաւունքից։ Ճիշդ նոյն ձևով էր հալածուել և Ֆիխտէն։

Այդ միջոցին Գէօտտինգէնի համալսարանի դռները բացուեցան Բեննեկէի առաջ։ Սկսած 1823—27 Բեննեկէն Հանովէրի համալսարանում դասախօսեց։ Այս միջոցին Բեննեկէն յառաջադիմեց իւր գիտական հետազօտութիւնների մէջ։ Շնորհիւ այս շրջանում ծրնունդ առած նշանաւոր հետազօտութիւններ և իւր հանած անուան, 1827 ին Բեննեկէն կրկին իրաւունք ձեռք բերաւ Բեռլինում դասախօսելու։ 1830 Թուականին նա արտաքոյ կարգի պրօֆէսօրի աստիճան ստացաւ և հաղիւ քառասուն տարեկան հասակում 200 թալէր ռոճկի արժանացաւ։ Ո՛չ իւր բարեկամների և յարգողների սէրը և ո՛չ իւր անուան հռչակը գոհացուցիչ տուին Բեննեկէին։ Չափազանց ծանր աշխատանքից քայքայուեց նրա առողջութիւնը և քառասնական թուականներից սկսան նրա մարմնական և հոգեկան հիւանդութիւնները, ինչպէս քնատութիւն և մելամաղձոտութիւն։

1854 Թուին, մարտի սկզբներին Բեննեկէն դուրս եկաւ մի օր առաւօտը իւր բնակարանից և այլ ևս չը վերադարձաւ, նրա ղեկտեաներից մի քանի կոր գտան մի ջրանցքի մօտ և մի տարուց յետոյ էլ գտնուեցաւ նրա դիակը ջրերի մէջ։ Այս մեծ մարդու վախճանի հանգամանքները թանձր քօղով ծածկուած են ցարդ։

Բեննեկէն իւր կեանքը նուիրել էր մարդկային հոգու հետազօտութեան և այդ հետազօտութիւնից հանած արդիւնքների դրծադրութեան։

Բեննեկէն քաղաքական կեանքից հեռու մնաց և նուիրեց իրեն միմիայն գիտական և դաստիարակչական գործին։ Մանկավարժութեան մէջ թանգ են գնահատում նորա վաստակները։ Թէպէտ և նա գործնական մանկավարժութեան անձնանօթ էր, սակայն մեծ ծառայութիւն է մատուցել տեսական մանկավարժութեան։ Բեննեկէի հոգեբանական, բարոյագիտական և մանկավարժական սկըզբունքների մասին մի այլ անգամ կը խօսենք։

Աբեղեան.

ԳԵՂԵՑԻԿ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ [1]։

Ուսուցիչների և դաստիարակների ձեռին ամենակարևոր գէնքերից մինը գեղեցիկ ընթերցանութիւնն է։ Երբ յիշում եմ դպրոցական տարինեբս, տեսնում եմ, թէ ինչպիսի զօրեղ տպաւորութիւն է թողել իմ վերայ ուսուցչապետներից մի քանիսի ճարտար ընթերցումը։ Ցիրաւի՝ մի՞թէ մենք ամենայն օր չենք համոզուում, որ լաւ առոգանութիւնը մի տեսակ ոյժ է։ Երբ մենք մի որ և է ճառի մասին հաշիւ ենք տալիս, անշուշտ յիշատակում ենք թէ ի՞նչպէս խօսուեց։ Արդէն հին ժամանակներից դաստիարակները ուշք էին դարձնում առոգանութեան կարևորութեան վերայ։ Այժմ մանկավարժները միաձայն խոստովանում են գեղեցիկ ընթերցման մեծ նշանակութիւնը, և ես միջոց ունեցայ համոզուելու, թէ ինչպէս լուրջ կերպով նայում են այդ գործի վերայ գերմանական դպրոցներում։ Գերմանիայի իգական դպրոցներում շատ ժամանակ են նուիրում այդ վարժութիւններին. հատուածների յաջող ընտրութեամբ և լաւ արտաբերութեան միջոցով աշխատում են սաների մէջ զարգացնել գեղեցկի զգացմունքը և հայրենասիրութիւն։ Ֆրասիայում կառավարութիւնը, մանկավարժները, հրապարակախօսները միաձայն քարոզում են գեղեցիկ ընթերցանութեան մեծ նշանակութիւնը։ Յայտնին չէրկնելու համար, ընթերցողի ուշագրութիւնը դարձնում եմ միմիայն հետևեալ երկու խնդիրների վերայ.

1) Լաւ ընթերցանութեան ոյժը իսկապէս ինչո՞ւմն է.

2) Ի՞նչպէս պէտք է կարդալ, որ կարդացածը ցանկացած տպաւորութիւնը թողնի։

Ա.

Ընթերցանութիւնը մեռեալ տառին կեանք է տալիս։ Մեր առաջին հարցի պատասխանը այս է։ Բայց ո՞րն է կեանք տալը, այս փոխաբերութիւնը ի՞նչ իմաստ ունի։ Այստեղ մարդուս միտքն է գալիս Պղատոնի ասածը։ «Փեդրայ»-ի վերջերում համեմատելով գրաւոր խօսքը նկարչութեան հետ, Պղատոնը ասում է. «Մեր տեսած նկարները մեզ կենդանի են երևում, ապա նոցա մի հարց տուէք, կըտեսնէք, որ նոքա լռում են։ Գրուած խօսքն էլ այդպէս է. ձեզ թուում է թէ բառերի մէջ կենդանի իմաստ կայ, բայց նոցանից մի բան հարցրէք, պատասխան չէք ստանալ, եթէ այդպիսի գրուած խօսքերը ենթարկուում են անպատուութեան, յարձակման, նոցա պիտի պաշտպանէ ինքը հեղինակը. նոքա իրենք իրենց պաշտպանել չեն կարող։ Բանն էլ հէնց այն է, որ հեղինակը թղթի վերայ է անցկացնում իւր մտածմանց միայն վերջին արդիւնքը, առանց երևան հանելու իրողութեանց, գաղափարների, դատողութեան և պատճառաբանութիւնների այն ամբողջ բազմութիւնը, որոնք նորան որոշ եղրակացութեան են բերել։ Այդ բոլորը նա պահում է իւր մօտ։ Եթէ խօսքը գրաւոր է, այդ մենք չենք տեսնում, բայց մարդկային ձայնը այդ բոլորը զարթեցնում է ունկնդիրների հոգու մէջ։ Ամէն մի ձայնի ելևէջ, ամէն մի շեշտ կարծես մի մի փայլ լինին, որ լուսաւորում են գաղափարների կապը, հասկացնում առարկայի իսկական պատկերը։ Միևնոյն գործը, որ արդէն հեղինակը վերջացրել է իւր մէջ, սկսուում է ունկնդիրների մտքում։ Ահա այս է գեղեցիկ ընթերցանութեան առաջին ներգործութիւնը։ Նա միջոց է տալիս խորը և ճիշդ կերպով ըմբռնելու բնագիրը։

Առաջ անցնենք. տեսէք, ինչպէս է ազդում ընդհանրապէս կենդանի խօսքը։ Մարդկային ձայնի մէջ մի բան կայ, որ ակամայից հաղորդուում է ուրիշին և նորան մինչև հոգու խորքերը ցնցուում է։ Ընթերցողը և ունկնդիրը միաձայն հնչում են և փոխադարձաբար ազդուում են։ Այդ երևոյթը յառաջ է գալիս հոգու այն ազդեցութեան տակ, որ այդ գրուածքն է յառաջացրել։ Նորա գեղի ճշմարտութիւնը և գեղեցիկը ունեցած սէրը անցնում է և ունկնդիրներին։ Ընթերցողը ոչ միայն նպաստում է ըմբռնել հեղինակին, այլ և ստիպում է սիրել նորան։ Նորա ձայնի հնչիւնների տակ գրուածքը կորցնում է բոլոր նիւթական կողմերը և դառնում է կենդանի պատկերների մի շարք, և թափանցում է հոգիների մէջ և վերջ ի վերջոյ դառնում է այդ հոգիների միացման գիծը։ Եւ այսպէս իրագործուում է Փաուստի խօսքը. «Քո հոգու դրուները լայն բացուում են, և ահա մի հոգի խօսակցում է միւսի հետ»։ Այսպէս ուրեմն, գեղեցիկ ընթերցանութիւնը ոչ միայն ըմբռնել, այլ և կենդանի կերպով զգալ է տալիս գրուածքի ամբողջ գեղեցկութիւնը։ Ըմբռնել և խորը զգալ միևնոյնն է թէ ցանկալ, իսկ լուրջ և ջերմ ցանկութիւնը արդէն գործի սկիզբն է։ Եթէ մեր կարդացած գրուածքը առաջնակարգ հանճարի գործ է, մեր մէջ առաջ է գալիս և ձգտումն մեզ գերազանցելու, խորհուրդներով և գործերով բարձրանալու մինչև այդ հանճարը։

Բայց ինչպէս պէտք է կարդալ որ ցանկացած

---

1. Այս յօդուածի բնագիրն է Փրանսիացի Բուրտուի L'école Fontenay Aux Roses-ում կարդացած դասախօսութիւնը. իսկ մենք քաղում ենք „Образованіе" ամսաթերթում հրատարակուած ռուսերէն թարգմանութիւնից։

տպաւորութիւնը թողնի։ Այս խնդիրը լուծելու համար երկու բան աչքի առաջ պիտի ունենանք։ Նախ ընթերցողը զուտ անձնական յաջողութեան եւեւից չընկրկի։ Եթէ աշակերտները ընթերցումից միայն հիացել են ուսուցչի տաղանդի վերայ, նա հարկաւ նպատակին չէ հասել։ Մանկավարժը չընկրկի կարդայ ինչպէս մի մարդ, որ ուզում է զուարճանալ և զուարճացնել ուրիշներին։ Մեծ մտքերն և գեղեցիկ լեզուն միայն բաւականութեան չընկրկի ծառայեն։ Մասնակից լինելով այն հոգեկան կեանքին, որ միմիայն հանճարների բաժինն է, մեր նպատակն է դրա շնորհիւ բարձրանալ և ուրիշներին էլ բարձրացնել։ Պէտք չէ ուրեմն ձգտել ծափահարութեանց, շնորհակալութեան աղմկաւոր արտայայտութեանց. թող կարդացողը իր անձը մեջտեղից վերացնի և հեղինակի և ունկնդիրների մեջ միայն մի հաղորդիչ գործիք դառնայ. նորա ինքնուրացութեան մեջ է յաջողութեան գրաւականը։ Բայց եթէ այս բոլոր ասածներս ճիշդ են, այն ժամանակ մեր խնդիրը դժուարանում է։ Մի կողմից իր անձը մոռանալ, իսկ միւս կողմից կարդալ արտայայտիչ կերպով, ընթերցանութեան մեջ իրանից մի բան աւելացնել։ Այս երկու պայմանները իրար հետ ինչպէս հաշտեցնել։

Բ.

Անհատեղ պէտք է ասենք, որ ընթերցողը պիտի զգայ և սիրի այն, ինչ որ կարդում է. մենք որ աչքի առաջ ունինք հոգու զարգացումը, իրաւունք չունինք այնպիսի զգացմունքներ շարժել, որոնցով մենք չենք յուզուել։ Դաստիարակը ամենևին չընկրկի ցոյց տայ, իբր թէ ինքը հեռի է այն տպաւորութիւններից, որ ընթերցում է յառաջ բերում։ Եթէ աշակերտները այդ բանը նկատեն, նոցա դէպի ուսուցիչը ունեցած յարգանքը և վստահութիւնը ակամայից կըզրդուին։ Ընթերցանութիւնը պէտք է բնական լինի, բայց բնականն էլ պահանջում է ընտրութիւն. բնական շարժումները բազմաձև են։ Հիտակ և ազնիւ բնութեան յատուկ է անմիջական և պարզ կերպով արտայայտել իր զգացմունքները, բայց և բնականն էլ արդիւնք է բնութեան և խոհականութեան մեջ եղած պատերազմի։ Հոդեբանները միաձայն պնդում են, որ ոչ մի հոգեկան շարժում զուտ մեքենայական չէ. նորան միշտ մասնակից են խոհականութիւնը և կամքը։ Որպէս զի ընթերցանութեան մեջ ոչ մի կեղծիք չնկատուի, հարկաւոր է որոշ ներդաշնակութիւն՝ մեր հոգին շարժող մտքերի ու զգացմունքների և բարու ու գեղեցկի գաղափարների մեջ։ Այս բանը պահանջում է ուսումնասիրութիւն, ուստի և յատկապէս պիտի խորհենք նուրբ և բարդ զգացմանց արտայայտութեան վերայ։ Բաւական չէ նոյնանալ հեղինակի հետ, հարկաւոր է հաշուի առնել հետևեալ հանգամանքները. այլ է քնարերգութիւնը, այլ թատերգութիւնը և այլ ընդդիմախօսութիւնն և առակները։ Քնարերգութեան մեջ հեղինակի ներքին աշխարհն է հանդէս գալիս, թատերգութեան մեջ գործող անձնաւորութիւններ. վերջին երկու դէպքում խընդիրը աւելի բարդ է։ Բայց ընթերցողը ոչ միայն իր զգացմունքն է արտայայտում, այլ և կեանք պիտի ներշնչէ իւր կարդացածին. արդ, յաջողութիւն ունենալու համար ի՞նչ կանոններով պիտի նա առաջնորդուի։ Մեր լուսաւորեալ դարում շատերը պահանջում են ընթերցողից, որ ճշդօրէն վերարտադրէ անձինքների պատմական պատկերը։ Նա պիտի ուսումնասիրէ փաստաթղթերը (документъ), ճիշդ պէտք է պատկերացնէ զգացմունքները, շարժումները, ձայնը, նոյն իսկ նախնեաց բարբառը. նա մեզ պիտի տեղափոխէ անցեալի մեջ։ Բայց դա հնարաւոր է արդեօք. որքան էլ գիտնական լինի ընթերցողը՝ նա չաճախ պիտի խոստովանի իւր անզօրութիւնը։ Վերջապէս դա սենեակում փակուած գիտնականին է հետաքրքրում և ոչ ունկնդիրներին։ Մեծ հանճարները հասարակ մարդկանց պէս որոշ ժամանակի և տեղի հետ չեն կապուած, նոքա ստեղծագործում են յաւիտենականութեան համար. նոքա իրենց երկերը պատրաստելիս աչքերը ուղղում են դէպի ապառնին և մոռանում բացարձակ կատարելութեան վերայ։ Դրան իբր հակադիր պիտի յիշենք, որ դասական երկերը պատկանում են ամէն մի դարու։ Նոցա պատմական բնաւորութիւնը այն շրջանակն է, որից դուրս են հանրամարդկային գծերը։ Պէտք է ի հանդէս դնել այդ երկու տարրերը և ըստ արժանւոյն գնահատել։ Այսպէս ուրեմն ունկնդիրներին հաղորդելով իւր զգացմունքները՝ ընթերցողը իրանց իսկական լուսով ցոյց է տալիս այն պատկերները, որ հեղինակն է ստեղծել։ Կայ մի երրորդ միջոց էլ ունկնդիրների ուշադրութիւնը գրաւելու համար. ոչ միայն կարելի է սրտերին տիրել, այլ և արտաքին զգայութիւնները գրաւել խօսքի երաժշտութեամբ։ Պէտք չէ մոռանալ, որ լեզուն ամենից առաջ ծառայում է խօսակցութեան համար. սկզբում գրում էին խօսակցական լեզուով, իսկ յետոյ մինչև անգամ խօսակցութեան համար սկսեցին գրաւոր լեզուն գործածել։ Հարկաւ հին լեզուները աւելի ներդաշնակ էին քան նորերը, բայց ոճաբանութիւնը այժմ էլ շատ օրինակներ ու կանոններ է տալիս արդի լեզուի քաղցրալրութեան համար։ Բայց դորանից հաշուի պէտք է առնել և ձայնի հանգամանքները. նա պիտի լինի աղատ, զեղուն, հնչուն. որքան կարելի է մաքուր, հարուստ,

փափուկ և դուրեկան։ ՈւռոգանուԹեան ամենակարևոր կողմերից մին է շնչառուԹեան կառավարել կարողանալը. ցանկալի է, որ ընԹերցողը շնչի ազատ, բաւականաչափ յաճախ և աննկատելի։

Երկրորդ կանոնն է արտասանուԹիւնը։ Ցաճախ արտասանուԹեան պակասուԹեանը արգելք է եղել գեղեցիկ ճառի յաջողուԹեանը։ ԱրտասանուԹիւնը ցոյց է տալիս այն շրջանը, ուր գտնուում է ընԹերցողը, նորա ստացած կրԹուԹեան չափը, և նպաստում կամ արգելում է ունկնդիրների համակրուԹեան դէպի ի ընԹերցողը աճելուն կամ նուազելուն։

Երրորդ կանոնն է ակնյայտնի կացուցանել շարադրուԹեան ծրագիրը, ցոյց տալ նորա մասերի յարաբերուԹիւնը։ Գրականական գործը գործարանական մարմնի պէս մի բան է, ուր ԹէԹև ամէն մի անդամ իւր առանձին կեանքովն է ապրում, բայց և այնպէս կախում ունի ամբողջից և նորան է ենԹակայ։ Պէտք է ցոյց տալ մասերի այդ ենԹարկեալ յարաբերուԹիւնը և ի վնաս ամբողջին՝ մանրամասնուԹիւններին առաջին տեղը չտալ։ Մի քանի հատուածներ պիտի կարդալ մի եղանակով, որ վերջին տողի ընԹերցումը զօրեղ տպաւորուԹիւն Թողնի։

Վերջին ցուցումը խօսքի քաղցրալրուԹեան է վերաբերում։ Պէտք է ձայնի իսկական ելևէջը գըտնել, բնական և չափաւոր կերպով փոփոխել կարողանալ. եղանակը պէտք է ծանր և հանդարտ լինի։ Հատ հատով արտասանուած ճառը շատ երկար է երևում։ Պէտք է չափ (ритмъ) պահել։ Հմուտ մարդը պիտի կարենայ դրամատիքական տեսարանը համաչափ մասերի բաժանել, բարձրանալ ամենաբարձրը կէտին, ուժով արտասանել վճռական բառերը, յետոյ կանգ առնել և հանգիստ կերպով շարունակել։

Այս ընդհանուր և արուեստական կողմին վերաբերեալ ցուցումներից երևում է, որ ընԹերցման համար պէտք է պատրաստուիլ։ Ցանպատրաստից եղած ընԹերցանուԹիւնը նմանեցնում են լուսնի լուսին. առարկաները Թոյլ են լուսաւորուած, պարզ աչքի չեն ընկնում, շարադրուԹեան ծրագիրը չի երևում։ ԸնԹերցանուԹեան պիտի պատրաստուի ոչ միայն ինքը կարդացողը, այլ և ունկնդիրները։ Նախ պէտք է տալ անհրաժեշտ բացատրուԹիւնները, ապա Թէ անընդհատ կարդալ։ Ցաճախակի ընդհատումը հրապոյրը կորցնում է, տպաւորուԹիւնը խանգարում է։ ԸնԹերցման յաջողուԹեան անսխալ նշանը կատարեալ լուռուԹիւնն է։

Ցանգը նոր լեզուների մէջ շատ նշանաւոր դեր է կատարում։ այստեղ նա այն նշանակուԹիւնը ունի, ինչ որ գաշնակը մեղեդու համար. բայց և այնպէս հարկաւոր չէ չափազանցնել, որ մի գուցէ ունկնդիրները՝ բոլոր ուշքը հարուստ և ինքնուրոյն յանգերի վերայ գարձնելով, մոռանան ոտանաւորի իմաստը։

Դարձեալ հարց է զարթնում շեշտերի մասին, որ շատ նշանակուԹիւն ունին ընԹերցողի և հրատորի համար։ Մի նշանաւոր հեղինակ ցոյց է տալիս, որ ամէն մի լաւ կազմած խօսքի մէջ չափի և գաղափարի կատարեալ համերաշխուԹիւն կայ. բայց դա գեղարուեստագէտի երազն է, մինչ յաճախ ինքն ըստ ինքեան ճշմարիտ և պարզ իմաստի արտայայտուԹիւնը շատ խժալուր (какофонія) է լինում։ Զայնաչափական և տրամաբանական օրէնքները մեծ դըժուարուԹեամբ են հաշտուում։ Եւ ամենահանճարեղ բանաստեղծը, ամենահմուտ դերասանը հազիւ մի քիչ կարողանում են ծածկել այդ անհերքելի անհամաձայնուԹիւնը։ Ցիշեալ բոլոր շեշտերը միևնոյն ուժով չեն երևան գալիս խօսքի մէջ, և փորձուած ընԹերցողը պիտի կարողանայ հաշտեցնել դոցա։

Արդեօք հարցից հեռանա՞լ չէ՝ Թողնել առաջին խնդիրները և ականջը գրաւելու միջոցների ետևից ընկնել։ Բառը արժանի՞ է առանձին ուշադրուԹեան։ ԳեօԹէի Փաուստը կարդալով աւետարանի յայտնի ասացուածքը. «Ի սկզբանն էր բանն», այսպէս է ասում։ «Ո՛չ չեմ կարող ես բառը այսքան բարձր գնահատել. իմաստն է նորանից առաջ, իսկ իմաստից առաջ գործողուԹիւնը»։ Մենք էլ կասէինք, որ բառը առանձին մշակուԹեան արժանի չէ, եԹէ նորա վերայ, իբր միայն գաղափարի ձևի վերայ են նայում և ուզում են գործ ածել իբր գեղեցիկ հընչունների մի շարք։ Բայց բառը չի կարելի անուշադիր Թողնել, որովհետև ձևը և բովանդակուԹիւնը անբաժան են միմեանցից։ Իմաստը անկատար է, քանի արտայայտուԹիւն չի ստացել. վերջապէս մարդս մտածում է, որպէսզի ուրիշներին էլ իւր մտքերը հաղորդէ։

Ս. Ց.

Ծան. Ընդարձակում ենք, որ յաջորդ երկու երեսները սխալմամբ տեղափոխուած են. նախ պէտք է կարդալ 249 և ապա 248 երեսը։

կութիւնները միշտ վառ էին պահում Գասպար Հաուզէրի մասին տեղեկութիւնը, ուստի եւ շատերը զբաղուեցան նորանով. ոմանք նորան Ընդգարական ծագում էին տալիս, ոմանք համարում էին Նապոլէօնի սերնդից եւ ոմանք էլ նորան խաբեբայի տեղ էին դնում:

Փրանսիական ամսաթերթի յօդուածագիրը այս խնդիրը կրկին շարժելով՝ Գասպար Հաուզէրին համարում է Նապոլէօն 1-ի իսկական որդի գաղտնի ամուսնութիւնից: 1828 թ.-ին Բադէնի մեծ դուքս անուանուեցաւ Վիլհելմ Օգոստոսը. սա որդի էր նախկին մարկ-գրաֆի, որին 1806 թ.-ին՝ Նապոլէօնը մեծ դուքս անուանեց. սա մեռաւ 1811 թ.-ին իշխանութիւնը թողնելով իւր թոռը Փրիդրիկոսին, որ ամուսնացաւ Ստեփանի-ը - Բօհատնէի հետ, որը Նապոլէօն 1-ի որդեգրուհին միանգամայն եւ սիրուհին էր: Այս Փրիդրիկոսը երկու որդի ունեցաւ, որոնք շատ շուտով տղայութեան հասակումը վախճանուեցան, ուստի եւ աթոռը անցաւ Փրիդրիկի տղեղբօրը՝ Վիլհելմ Օգոստոսին: Յօդուածագիրը ենթադրում էր որ Փրիդրիկի եւ Ստեփանէի առաջին որդին, որ ծնուել էր 20-ին սեպտեմբերի 1812 ամի եւ որին 17 օրուանից յետոյ մեռած հրատարակելով իբրեւ թէ թաղել էին, նոյն իսկ այդ Գասպար Հաուզէրն էր, որի երակների մէջ հոսում էր Նապոլէօն 1-ի արիւնը եւ որին՝ գերմանացիք ամէն ճիգ պէտք է դրած ղնէին խանգարելու բարձրանալ Բադէնի գքսութեան գահի վերայ:

ԹԱՂՄԱՆ ԾԷՍԸ.

Զանազան ժողովուրդների սովորութիւնները թաղման ծէսերի վերաբերութեամբ ցոյց են տալիս եւ նրանց քաղաքակրթութեան աստիճանները: Փրանսիացի գիտնական Էլի Ռէնիւն հրատարակել է մի յօդուած զանազան ազգերի թաղման ծէսերի մասին, որից հետեւեալ քաղուածքներս ենք անում:

Հները, ինչպէս եւ մեր ժամանակակիցներից շատերը՝ կարծես թէ այն կարծիքի են, որ սարդիկային դիակից աւելի անուրջ բան չէ կարող լինել: Փրնիկներ խոյս էին տալիս մի ամբողջ ամիս այն տնից, ուր մեռելի դիակը դրուած էր եղել. իսկ դիակ տանող անձը պէտք է մի ամբողջ օր մարդու հեռանար: Իսրայէլի Ծուխիա թագաւորը Յահուին եւ Եհոահազին անարգելու համար գերեզմաններից հանեց նրանց պաշտօնների ոսկորները եւ ածեց նրանց առաջ: Դեւտացիները, եւ մինչեւ այսօր քահանայական ցեղին պատկանող տէրասները, չեն կարող մեռելին ձեռք տալ: Բրահմանացիք մեռելի յուղարկաւորութիւն չեն թողնում գիւղի միջով անցնելու. նոյն կարծիքն ունին եւ պարսիկները: Ճապօնացիք եւ առհասարակ Բուդդայականները գարշում եւ սրկինում են մեռելներից:

Ինչու՞ արդեօք մեռելի դիակը պիղծ է համարուում: Ս նոսից վախենում են. նա համարուում է հար եւ ոխակալ, կարծում են թէ պէտք է վրէժ առնի իրենից յետոյ ապրողներից: Դորան ապացոյց են բերում դիակի արծակած գարշահոտութիւնը եւ պատճառած տիւանդութիւնները: Թէպէտ եւ դիակն անշարժ է բայց հպէտք է վրատահանալ այդ անշարժութեան վերայ եւ պէտք է զգոյշ լինել, կարծում են շատերը: Զուլվացները հնգեւարքի ժամանակ դեռ վերջին շունչը չարձակած, առնում են տիւանդին մահճիցը, գետնի վրայ են նորան մի անկիւնում երեսը դէպի պատը: Ալէուտները եւ Ոսաքօրները մեռելի դէմքը ծածկում են դիմակով: Հռովմայեցիք մահը պատկերացնում էին մոմ դիմակով: Երբ մեռելների կերպարանքը քաց է մնում, կենդանի մնացածները ծածկում են իրենց դէմքերը քօղով: Նիահիզները աւելի հեռու են գնում նորա գերեզմաններից ծածկուելուց յետոյ չորս օր խաւարի մէջ փակուում են:

Բայավարները եւ Ինդուները առանձին անվստահութեամբ են վերաբերուում դէպի մեռելները, որոնց բերանը, ականջները եւ ռունգները փակում են, ասելով. «Մահը ներսում է, թող՝ այնտեղ էլ մնայ»: Բուքիները եւ Բօանէագիք արծաթի կտորներ են փակցնում մեռելի աչքերին, շրթունքներին եւ ականջներին: Կօմբոմները խորտակում եւ ոչնչացնում են մեռելի ստացուածքը, ամանները՝ ջարդում են, կահ կարասին այրում, կրակարանի մոխիրը ցրուում, ծառերը սղոցում: Ուրիշները՝ Կամչատալները եւ Զուլվացները պատառոտում են մեռելի զգեստները. ուրիշ տեղերում մեռելի բնակարանն էլ այրում են: Արեւմտեան Ափրիկացիք քանդում են մեռելի խրճիթը հիմքից: Բազմաթիւ օրինակներ կարելի է բերել, որ տիրող մահուանից յետոյ մոլեռնում են նրա անառանները, ցից են հանում հներն ու ծիանը, ստրուկներին եւ ծառաներին կախում կամ խեղդում են, քարկամներին եւ ընկերներին սպանում, ասուպիններին եւ հարճերին կենդանի այրում եւլն.: Մեռելը տեռանում է աշխարհից տանելով իր հետ իր բոլոր հնչաւոր եւ անշունչ ստացուածքը:

Մի քանի վայրենիներ աւելի հասարակ ձեւով են վարուում: ոմանք թողնում են մեռելներին եւ հեռանում մի քանի ամսով. ուրիշները այլ եւս չեն վերադառնում այդ տեղ: Լաբրատորի բնակիչները պարում են դիակի շուրջը:

Մեռելները վտանգաւոր եւ չարիք պատճառող համարելով մարդիկ աշխատում են սիրելի լինել նոցա եւ գրաւել: Մեռելներին շողոքորթելով՝ ասատւածային յարգանքներ են մատուցանում նոցա, զոհելով ոչխարներ այծեր. կովեր եւ տրյներ: Նրանց գետեղում են շքեղ դամբարանների մէջ, որ զարդարում են թանգագին մետաղներով, մարմարիոնով եւ պորփիւրով:

Դրանք ընդհանուր է այն սովորութիւնը, որով լուեեան համաձայնում են մարդիկ մեռելի անունը չտալ: Կարծես թէ աւելորդ են համարում վրդովել նորանց խաղաղութիւնը եւ վախենում են անունը տալով կանչել նորանց ինչպէս ժամտախտ: Մինչեւ անգամ չափազանց անկեղծութեամբ չպէտք է ափսոսալ սորանց մասին, որովհետեւ կարող են վերադառնալ: «Ամէն մի արտասուքի կաթիլ, որ ընկնում է սառած դիակի վերայ, մի քրիստոնէի կեանք կարժեսայ», ասում էին հին Բաւարացիք: Գուլուսասերին երբ յայտնում են որ եւ է մերձաւորի կամ լաւ ընկերոջ մահը, ասմլչապէս մի տոլթ են մոլեռնում «տխրութիւնը փարատելու համար», որ կարող է վտանգաւոր լինել:

Երկիւղով շատ սովորութիւններ են բացատրուում: Թէպէտ եւ դրա յարգանքի ձեւերը ունենան, Ամերուկք աշխատում են ինչքան կարելի է շուտով ազատուել մեռելից. Գինացիք, Սիամները, Հնդիկ վոռնականներն եւ ուրիշ շատ շատերը աշխատում են մեռելը հանել մի յատուկ անցքից, օրինակ երթեկից, պատուհանից եւլն.: Եթէ պատճառը հարցնէք նորա կատն քարձրացայն, նորա համար, որ մի առանձին յարգանք մատուցած լինինք ննջեցեալին, մինչ դեռ ցածր ձայնով կըհռոսուվանեն, որ կամենում են հետքը կորցնել. որպէս զի եթէ մարը վերադառնայ, այդ նոր բացուած անցքը փակուած գտնելով նորս չմտնի:

Ցաւակից յուղարկաւորութեան մէջոցին աղմուկ են հանում, թմբուկներ զարկում, փողեր փչում, նիզակներ եւ սրեր ճոճում: դորա պատճառն այն է, որ վախեցնեն ամէն կողմից ժողովուրդ դեւներին: Թաղմուղի մի աւանդութեանը նայելով մահուան հրեշտակը հետեւում է յուղարկաւորութեան, սուրը ձեռին, իրաւունք ունենալով հարուածելու: Առանձին սիրով նա հարուածում է կանանց, այդ մշտնջենական մեռաւոր Եւայի աղջկանց, որոնք մեղքը աշխարհ լցրին:

Քրիստոնեայ ժողովուրդների մէջ սովորութիւն կայ օրհնած ջուր սրսկելու, խաչելութեան եւ այլ հրաշագործ նշաններ դնելու մեռելների վերայ: Կենդրոնական Եւրոպայում

ՄԱՆՐԱԼՈՒԲՔ.

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

Հռչակաւոր Ֆրանսիացի վիպասան Ալֆոնս Դոդէն, որի մի քանի երկերը հայերէն եւս թարգմանուած են, մի նոր վէպ է գրել «ընտանեաց նեցուկը» (Soutien de la famille) վերնագրով, որ պէտք է հրատարակէ առաջիկայ ձմեռը: Գրական աշխարհում մեծ անհամբերութեամբ սպասում են այդ երկի հրատարակութեանը: Դոդէի այս գործը վաղուց արդէն պատրաստէ. «ընտանեաց նեցուկի» մէջ ներկայացրած են ռուս ուսանողների զանազան տիպեր:

— Մանկավարժական գրականութիւնը պիտի հարըստանայ շուտով մի անսպասելի գիւտի շնորհիւ: Արդէն տպագրութեան են յանձնուած Պեստալոցիի 200 նամակները, որ այս կը տեսնեն երկու լեզուով. գերմաներէն եւ անգլիերէն:

— Ֆրանսիական մամուլի եւ գրականութեան մէջ այս տարուայ սկզբից հետզհետէ աւելի եռանդով քննուում են գիտութեան եւ հաւատի, կրօնի եւ դաստիարակութեան խնդիրները: Օգիւստ Կոնտի աշակերտներից Ռ. Թամնը, որ մանկավարժութեանմէջ աշակերտել է նշանաւոր անգլիացի փիլիսոփաներից Հերբերտ Սպէնսէրին, Ա. Բէնին եւ Ստիւարտ Մ'իլլին Փարիզում մի գիրք է հրատարակել „Education et Positivisme“ (Դաստիարակութիւն եւ դրական փիլիսոփայութիւն) վերնագրով, ուր հետեւեալ խնդիրներն է քննում: կարելի՞ է արդեօք դաստիարակութեան մէջ զանց առնել Աստուծոյ գաղափարը, ինչպէս այդ անում են այժմ Ֆրանսիայում: գիտութիւնն իրրեւ ուսման առարկայ բաւական դաստիարակիչ ընդունակութիւն ունի՞. վարժարաններում աւանդուած փիլիսոփայութիւնը կարելի՞ է արդեօք համարել իբրեւ անհրաժեշտ վախճան ուսումնական: Հեղինակը քննութեան է առնում այն յայտնի նախադասութիւնը, որ ասում է. «գիտութիւնը մի մեջոց է, իսկ մարդկութիւնը նպատակ»: Հեղինակի գլխաւոր արժանիքներն են պարզութիւնն ու համոզիչ ոճը, որով ցոյց է տալիս նա մի քան մեծանշիւն բաների անբովանդակ լինելը: Գրեթէ քսան ամեայ մոլորութիւններից յետոյ Ֆրանսիական գրականութեան մէջ մի մեծ շարժում է նկատուում դէպի մարդկութեան եւ դաստիարակութեան իսկական նպատակները, որոնցից այնքան հեռացել էր այս երջորդ կէսդարում տասարակապետութեան սերունդը: Բարոյականութեան քայքայումն ամենամեծ ապացոյցն է այժմ Ֆրանսիական դասախրականութեան ծուռն ընթացքին, որին ճշմարիտ ուղղութիւն տալու են ձգտում այսօր Ֆրանսիացի առողջամիտ գրագէտները:

ԳԱՍՊԱՐ ՀԱՈՒԶԷՐ.

„Revue des Revues“ ամսագրի այս տարուան № 11-ի մէջ մի հետաքրքրաշարժ ուսումնասիրութիւն է նուիրած ԳԱՍՊԱՐ ՀԱՈՒԶԷՐԻ ծննդեան գաղտնիքին: Ինչպէս յայտնի է, Գասպար Հաուզէրը մի պատանի էր, որ ի ծննդենէ փակ ու մութը սենեակի մէջ էր պահուած եւ ապա 16—18 տարեկան հասակում լոյս աշխարհ հանուած. 1828 թուին մայիսի 28-ին այդ պատանուն գտել էին նիւրենբէրգի փողոցներից մէկում եւ մեծ խնամքով պահում էին. ամբողջ Եւրոպայում հետախուզութիւններ եղան, դրա ծագումը գըտնելու, որ սակայն անյաջող ելք ունեցան: Գասպար Հաուզէրը չկարողացաւ հանգիստ գտնել. մի անծանօթ մարդ նրան հալածում էր: 1829 թ. հոկտեմբերի 17-ին Գասպարը իր սենեակում կարդում էր, երբ այդ մարդը ներս մտաւ եւ դանակի հարուածներով գլխին եւ կուրծքին վէրքեր հասցրեց: Զարագործը չբռնուեցաւ. Գասպարը նորան անուանում էր սեւ մարդ: 1833 թ. սեպտեմբերի 17-ին մեռաւ Գասպար Հաուզէրը այն վէրքերից, որ ստացել էր սեպտեմբերի 14-ին մի ժամադրութեան միջոցին, որ նշանակել էր նորան մի անծանօթ մարդ: Ենթադրւում է որ նրան սպանել են այն մարդիկ, որոնք այնքան անագորոյն կերպով վարուել էին նորա հետ իր մանկութեան ժամանակ:

Գասպար Հաուզէրը իւր երեւան գալու օրուանից սկսած մեծ հետաքրքրութեան առարկայ դարձաւ. նրան նախ որդեգրեց նիւրենբէրգի քաղաքապետ Բինդերը: Անգլիացի նշանաւոր լօրդ—Սդէնհօպը ահագին ծախքեր արաւ այդ պատանու ծագումը գտնելու համար: Պրօֆեսօր Դաումերը առանձին հետազօտութեան ենթարկեց այդ պատանուն, որի եզրակացութիւնները եւ հրատարակեց: Այս հրատարակութիւնների շնորհիւ աւելի եւս ամեց գասպար Հաուզէրին վերաբերեալ հետաքրքրութիւնը եւ մի ամբողջ շարք գիտնականներ զբաղուեցան այդ պատանիով, որի ամբողջ կեանքը հոգեբանական հետազօտութիւնների մի առատ աղբիւր էր:

Գասպար Հաուզէրի մարմինը շորս (4) ոտ եւ 5 մատ երկարութիւն ունէր. նորա կաշին այնքան քարակ էր, որ նեարդերը շարունակ գրգռման մէջ էին. երբ Գասպարը քընում էր, աղմուկը եւ ցաւը չէին ազդում նորա վերայ: Աբեւի ճառագայթները գրգռում էին նորան: Նորա նոր տպաւորութիւնները այնքան շատ էին, որ խանգարեցին նորա նեարդային սիստեմը. ծնոները այնպէս ղողում էին, որ ոչինչ քոնել չէր կարողանում: նորա ականջը այնպէս սուր էր, որ թմբկահարութիւնը նրան ցնցում էր, եւ նա սաստիկ կերպով տանջուում էր, երբ նրա մօտ քարօր ձայնով խօսում էին: Սովորական կերակուրները չէր կարողանում ուտել, որոնց միայն ամիսների ընթացքում սովորեց. շատ շուտ ախորժակը կորցնում էր, ուստի նորան փոխադրեցին մի առանձին եւ խաղաղ բնակարան, ուր նա իւր կեանքում առաջին անգամ անկողնի մէջ պառկեց եւ երազնեսկսեց տեսնել: Տաք կերակուրները նորան սաստիկ ծարաւ էին պատճառում, որ յագեցնելու համար նա խմում էր 10—12 գրուանքայ ջուր: Կամաց կամաց վարժուելով մինուելուն՝ ցնցումները դադարեցին, ուղեղային գրգիռները պակասեցին, աչքերը կորցրին իրենց տենդային փայլը եւ նա հետզհետէ առողջացաւ: Կեանքի եղանակի փոփոխութեամբ նորա հասակը երկու մատնաչափ աճեց մի քանի շաբաթուայ մէջ:

Գասպար Հաուզէրը երկար ժամանակ չէր կարողանում որոշել անշուշտ առարկաները կենդանիներից. նա երեւակայում էր, որ բոլոր շարժողութիւնները կամաւոր են. օրինակ երբ տղոմը տերեւը քշում էր, նա կարծում էր թէ տերեւը փախչում է. ծառի մէջ նա կեանք էր տեսնում երեւակայելով որ ծիւղերի շարժումը եւ տերեւների սօսափիւնը այդ կեանքի արտայայտութիւնն է: Գասպարը մութ գիշերը այնպէս լաւ տեսնում էր ինչպէս ցերեկը. այսպէս խաւար ժամանակը նա որոշում էր կապոյտը կանաչից: Զարգացած էին նոյնպէս նորա լսելիքն ու տոտոտելիքը, ահագին տարածութեան վերայ նա կարողանում էր միմիայն տերեւի տոտիքը ճանաչել պտղատու ծառերը. մի վարդիքը նա ուշաթափուում էր: Գերեզմանատան մօտով անցնելու ժամանակ նա այնպէս զգում էր նեխման հոտը, որ նորա վերայ տենդ էր գալիս: Նա ենթակայ էր նոյնպէս մագնիսական զօրութեան, մետաղները նոյնպէս ազդում էին նորա վերայ, որից նա մի առանձին սառնութիւն էր զգում. արծաթեայ դանակ, պատառաքաղ եւ գդալ նա չէր կարողանում գործ դնել. արծաթէ դրամներով լի պարկ տեսնելուս նա ամբողջ օրերով հիւանդանում էր:

Հաուզէրը առանձնապէս սիրում էր գեղագրութիւնը ու գծագրութիւնը, որոնցով առանձին յաճոյութեամբ պարապում էր. նա կրօնական ոչ մի գաղափար չունէր, եկեղեցու մէջ իրեն վատ էր զգում:

Այս եւ սորա նման դիտողութիւնների հրատարա-

գերեզմանների վերայ ծառը քարերը են դնում. այլ տեղերում քարձր ցանկապատով շրջապատում են գերեզմանները: Աշանթինները դանակ են խրում մեռելի կոկորդը, ուրիշները հանում են մեռելի սիրտն ու լեզուն եւ կամ վիզն են կտրում: Դիապատման գործողութիւնները շատ տարբեր են. նորվէգացիք մարմինը տանող ձին հակառակ են թաղմունք: Հինական ժողովուրդներից ոմանք եւ ճաւացիք անմիջապէս փախչում են մարմինը գերեզման դնելուց յետոյ: Կարմրամորթները եւ Խորուաթները մեռելների յետեւից քար են ձգում: Զիլի բնակիչները հետեւում են մեռելին տաք մորթի պարկով, որ եւ ցանում են ճանապարհի վերայ, որպէս զի վերադարձողի ոտները այրուի: Արգովացիք դագաղի յետեւից մի քանի դոյլ ջուր են ածում: Հրէաները մէջքներին մի քանի խուրձ խոտ կամ ծիւղ են ձգում: Գվինեացիք Կօնգոյի քնակիչները եւ ուրիշները վերադարձին ճանապարհը փակում են փշերով եւ եղեգնեայ ցանկապատով: Թաղումից վերադառնալուց յետոյ դարձեալ արարողութիւնները կան. կարծում են, որ պէտք է անմիջապէս մաքրել մարմինը եւ զգեստները անտեսանելի կերպով նստած մասնիկներից: Քրիստոնեաների այժմեան օրինած ջրի փոխանակ հին Մազդեզանց կրօնի հետեւողները ամբողջ մի շարք գործողութիւններ ունէին կատարելու: Ռուս գիւղացիները վերադարձից անմիջապէս յետոյ շեկացած ածուխ են առնում, ձգում են իրենց առաջևը դէպի վեր եւ սրբման մի աղօթք են ասում: Քաֆիրների մէջ սովորութիւն է, որ մեռելաթաղները իրենց սեփական արեան մէջը լողանան:

Եգիպտոսում թաւիշ են տալիս եւ մաքրում են գորգերը, քարձերը, թաղթերը եւ տակն ու վրայ են անում ընդոր կարասին: Շտիրիայում սովորութիւն է անմիջապէս ժամացոյցները եւ ծոմանակները լարել:

Բոլոր այս տարբեր սովորութիւնները մի ընդհանուր նմանութիւն ունին. կենդանի մնացածները աշխատում են ըստ կարելւոյն շուտով մոռանալ մեռածներին եւ քոնել նրանց թողած տեղը: Իրաւ է շատ են ողբում անյայտացածի մասին, բայց նրա գնալուց քիչ յետոյ այլեւս տեղ չկայ նորա համար կեանքի յաւիտենական խնճոյքի սեղանին:

ԱՋԳԱՅԻՆ

ՀԱՑ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԿԼԵՐԱԿԱՆ ՈԳԻ ՈՐՈՆՈՂՆԵՐԸ.

Յայտնի է, թէ ինչ համերաշխութեամբ գործում են Թիֆլիսի Մշակ եւ Կ. Պօլսի Հայրենիք թերթերը, թէ ինչպէս նոքա կարծես մի ստորերկրեայ հաղորդակցութեան շնորհիւ միաժամանակ զբաղուում են նոյն խնդիրներով, նոյն անձերով, նոյն տարօրինակ գաղափարներն են լոյս աշխարհ հանում: Վասն նոքա իրենց սովորական յարձակումները էին կրկնում հայ հոգեւորականութեան դէմ, աշխատում էին անուանարկել թերթիս խմբագրութեան կամ նորա անդամներից մէկին ու միւսին այնպիսի կոչումներով եւ մեղադրանքներով, որոնց անհեթեթութիւնը ակներեւ պէտք է լինէր ամէն մի փոքր ի շատէ խելահաս եւ արդարամիտ անձի համար՝ մենք անպատեհ էինք համարում ուշադրութեան առնել նոցա դրածները: Բայց երբ նոքա սկզբունքի խնդիր են դնում եւ ելեր միաձայն պնդում են, հայ ժողովրդին հաւատացնել ձգտում են թէ նորա հոգեւորական դասը «վատ ցեղ մըն է», որ իբր սեփական, ժողովրդի հակառակ շահերն ունի, թէ նա անուշադրութեամբ իբր մէջ մի այնպիսի կղերական ոգի, որով ներշնչուածների ղէվիզն է. «Ո՛չ մի տեղ ժողովուրդը, ամէն տեղ կղերը», մենք իրաւունք չենք համարում այլ եւս լռել:

Եթէ իրաւացի է այն տեսակէտը, որ հոգեւորականները ժողովուրդի ծառաներն են, բնական է, որ հրապարակախօսներն էլ, իբրեւ ժողովրդի ներկայացուցիչ, նոցա բնական տէրերը լինելով՝ իրաւունք համարեն իրենց ասպետական աշխարհայեցողութեամբ բարկանալ, սիրտն ուզած անարգանքները թափել իրենց այդ ծառաների վերայ, առանց սպասելու, որ նոքա ձայն հանեն, զանգատուել համարձակին: Սակայն իշխանական ոչ մի ձգտում չունենալով եւ ծառայ անունից խոյս չտալով հանդերձ՝ մենք յաւակնութիւն ունինք ձայն բարձրացնելու եւ ժողովուրդին, նոյն ինքն հրապարակախօսներին հաւասար իրաւունքներ պահանջելու նա եւ մեզ՝ հոգեւորականներիս համար, պահանջելու, որ առանց փաստերի չխօսեն եւ իբրեւ կանխօրէն դատապարտութեան մատնուած մի դասակարգի՝ ամէն վիրաւորանք առարկել թոյլ չտան իրենց:—Փաստեր արհամարհում է ի հարկ է Մշակը ինչպէս միշտ. նա բաւականանում է միայն բացականչութիւններով, լիքը բառերով՝ համոզուած, որ իբր ընթերցողներից մեծ մասի համար իբր ասածը ասած է, մանաւանդ հոգեւորականների մասին ասածը ինքն ըստ ինքեան ճիշդ պէտք է համարուի: Բայց Հայրենիքը աւելի բարեխիղճ է. նա փաստեր է բերում, նա վերցնում է Ազբատի ապրիլ ամսի առաջնորդողից մի հատ-

ուած, * որ ամբողջապէս հիւսուած է Դէօթէի Ֆաուստի նշանաւոր երկրորդ մեծախօսութիւնից, և պնդում է, թէ «Միջնադարեան ո՛և է կրօնաւորէ ճնացած գիրք մը այդ ամէնքը կըսէ և դեռ լաւագոյններն ալ» և ապա եզրակացութիւն է հանում ուրեմն. «Թէ գաղափարով, թէ ղգացումով միջնադարեան են այդ կղերամիանը լը» (իմա՛ մերս նուաստութիւնը և իմ ընկերակիցներն ու գաղափարակիցները, որ Դէօթէի դրուածքը վկայութիւն առնելով՝ հաստատում ենք, թէ քրիստոնէական հաւատոյ հիմք Քրիստոսի յարութիւնը ցնորք չէ)։ Ֆաուստի խօսքերը մէջ բերելով՝ մենք ենթադրում էինք, թէ ամէն մի միջնակարգ կրթութիւն սուացած մարդ ծանօթ պէտք է լինի նոր դարու դրականութեան այդ ամենաբևեռի արդիւնքի հետ, պէտք է կարողութիւն ունենայ հասկանալու, թէ ով է նա, որ բոլոր գիտութիւնները սովորելուց և երկնքի ու երկրի երեսը քննելուց յետոյ՝ բնութեան գաղտնիքը թափանցել չկարողանալով, աշխարհի վերայ ոչինչ էական, կեանքին արժէք տալու բան չգտնելով՝ Թոյնի բաժակը շրթունքին է դնում, և միայն մի ձայն, այո՛ գերեզմանից եկած մի ձայն, կարողանում է մահուան ըստուերները վախցնել և կեանքը կրկին քաղցր, խորհրդաւոր դարձնել նորա համար։ Այո՛ Դէօթէն, համաստուածեան Դէօթէն, որ իւր ժամանակին իշխող գաղափարների ազդեցութեան ներքոյ՝ տեսականապէս հաւատ ընծայել չէր կամենում եկեղեցւոյ գաւանած երկնային խորհուրդներին, իւր սուացած քրիստոնէական կրթութեան շնորհիւ և իբրև բարձրագոյն հանճարի տէր անձն՝ տիեզերքի և մարդկային հոգու անհուն գաղտնեաց ծովի վերայ լողալիս, ամէն անգամ երբ ընկղմելու մօտ է եղել, բռնել է այն միակ ազատարար ձեռքը, որ անպուճղի վերայով դէպի ինքը մեկնուել կարող կր։ Այդպէս և իւր Ֆաուստին իրական ու կախարդական աշխարհներում պատեցնելուց յետոյ՝ սարսուած էր վերջ ի վերջոյ ծունկ չոքեցնել մարդկային մեղքերը վերցնող և երանութեան դռները բաց անող անմահ Աստուածորդու գահի առաջ։ — Սակայն մեր յառաջադիմութեան մտնեաիկների համար Ֆաուստը հնացած, անպէտք գործ է արդէն, և հակայ Դէօթէն, անդուզական բանաստեղծն ու խորաքննին փիլիսոփան և բնագէտը՝ իւր տիեզերական հանճարով, միջնադարեան, փտած գաղափարների տէր մարդ։ Ահա թէ ինչպիսի անհեթեթութիւնների հասնել կարող է մէկը, որ նախ օդային եզրակացութիւններ է կազմում՝ ապա փաստերի եւ տեսիլք ընկնում։—Բայց դուցէ կան մարդիկ, որ այսպիսի բանները անհեթեթութիւն չեն համարում. անհեթեթութիւն չեն համարում, երբ Արարատը նոյն ամսին իւր ազգային բաժնի առաջնորդողով «բովանդակ հայ եկեղեցականութեան» հրաւէր է կարդում իրեն աջախտակցելու, այն համոզմամբ, «որ հայ ազգը պէտք է ճանաչէ, պէտք է գիտենայ հայ եկեղեցու վիճակը, որ հետաքրքրուի նորանով», իսկ Հայրենիքը հետևեցնում է այդ խօսքերից, թէ «ուրեմն հայ եկեղեցականութիւնը հայ ժողովրդէն, այսինքն հայ եկեղեցւէն, զատուած օտար մարմի՞ն մըն է, որ ունի իր մասնաւոր բերանը, Արարատը, որուն շուրջը պէտք է բոլորվին միայն հայ եկեղեցականները», և այդ յետադէմ դաղափարների համար դատավճիռ է կարդում այն նորելուկ «վանեական աստուածաբանների» դլխին, որոնք «Ընթմտեան կրօնամոլութեան կեդրոններու մէջ հարևանցի ուսում առած լինելով՝ մոքերնին դրած են, թէ պիտի կրնան 19-րդ դարու վերջին օրերուն մէջ հայ ազգը կղերամիտ ընել»։ Այսպէս ուրեմն Բերլինը, Հալէն, Մարբուրգը, Տիւբինգէնը «արևմտեան կրօնամոլութեան կեդրոններ» են և Հառնակը, Կաֆտանը, Կաուչը, Լօֆսը, Հերմանը, Վայցսկերը՝ լուսաւոր Եւրոպայում իրրև ամենազատամիտ և առաջնակարգ գիտական արժէքի տէր ճանաչուած աստուածաբանները,

* «Եւ ամէն անգամ, երբ մարդկութիւնը իւր մտաւոր կարողութիւնների, իւր ուժերի վերայ վստահ՝ երկնքի եւ երկրի երեսը կքննէ ... ..

րը՝ յետադէմ խաւարամիտներ։ Խնդճ մարդիկ. դեռ մի քանի շաբաթ առաջ Գերմանիայի մայրաքաղաքում հաղարդլխեան բարձր ուսում ստացած բողոքականների մի ժողով դատապարտում էր նոցա՝ ազատամիտ գաղափարներով նոր սերունդը մոլորեցնելուն, ազատամիտ հոգևորական մի դասակարդ պատրաստելուն համար, և միաժամանակ Ասիայի մի անկիւնում՝ Հայաստանեայց Հնաւանդ եկեղեցու հաւատարիմ զաւակները, կրօնամոլ դլուխներ իրենց մօտ ուղարկած լինելուն համար՝ խաւարամտութեան վկայական են տալիս նոցա։ Ինչպէս պէտք է զարմանան և ինչքան մխիթարուին մեր յարգելի ուսուցիչները, երբ իմանան, թէ ինչպիսի մեծ յառաջադիմութիւն է արել հայկական Ասիան՝ եւրոպական Գերմանիայի հետ բաղդատելով։

Ահա այսպիսի փաստերով է, որ ապացուցանում են հայ հոգևորականութեան «զատցեղ մը» կազմելը, «ժողովրդին, նրա իրաւունքներին, նրա մասնակցութեան, նրա արտօնութիւններին» դէմ լինելը, «ամէն տեղ կղերի նեղ, վնասակար, դասակարդային վարակիչ ոգին» մտցնելու դիտումը։—Յայտնի է, թէ ինչքան պակաս է եղել այդ ոգին մեր եկեղեցու մէջ նորա ամբողջ պատմութեան ընթացքում ինչպէս միանգամայն անհաշտելի է նա այդ եկեղեցու ոգու, նորա հիմնական սկզբունքների և բոլոր կազմութեան հետ. բայց այդ իմանալու համար, իրերի խորքը տեսնել, պատմութիւնը ըմբռնել պէտք է՝ մի շնորհք, որից զուրկ է մեր ներկայ յառաջադէմ սերունդը։ Ինչպէս այն մարդը, որի աչքերը առաջին անգամ են բացուում խորանարդային երրորդ տարածութեան մասին գաղափար կազմել չի կարող, հարթ գոյնդդոյն մի մակարդակ է տեսնում՝ այդպէս են նաև նոր աչք բաց անող հասարակութիւնները. նոքա միայն իրերի արտաքինն են տեսնում իրենց կարճատես աչքի օդնութեամբ տեսութիւններ կազմում ներկայի և անցեալի մասին։ Դրպրոցում նոր սերունդը սովորում է, որ կաթոլիկ կղերը մի առանձին մարմին է կազմում իւր համար, միջին դարերում ինկվիզիցիա է յառաջ բերել, անմեղ մարդկանց խարոյկների վերայ բարձրացրել, և մանաւորից ընդհանուրին անցնելով՝ նա հեշտութեամբ օրէնք է հանում, թէ հոգևորականութիւնը ուրիշ կերպ լինել չի էլ կարող։ Իսկ միամիտների այդ տրամադրութիւնից դիտեն շատ լաւ օգուտ քաղել ճարպիկ, ժողովրդի անունով խօսող մարդիկ։ Մենք շատ լաւ ենք ճանաչում այդ մարդկանց, տեսել ենք նոցա ամենանշանաւոր ներկայացուցիչներին հազարաւոր ամբոխի առաջ կանդնած. ինչպէս են նոքա խօսում, սրբախօսում և հաճոյախօսում. Ձերն է իրաւունքը, ձերն է սեփականութիւնը, ձերն է ամէն ինչ. հարուստները, հոգևորականները, կառավարիչները, ուսումնականները՝ բոլորը ձեր քրտինքով են ապրում, ձեզ խաբում, ձեզ կեղեքում. դուք առաքինի էք, գործունեայ, բարոյական՝ նոքա բոլորովին հակառակը, և դիտենք, որ այդպէս խօսողներից մէկը միանդամ ճանապարհորդելիս չէր բարեհաճում ոչ մի կերպ իրեն մատուցած երկաթուղու առանձին կարգի օթեակում նստել, այլ բարկանում նախատում՝ պահանջում էր, որ անպատճառ իր համար ննջարան—օթեակ պատրաստեն։ Վիտենք դորա փոխարէն և այն, որ մի անգամ «արևմտեան կրօնամոլութեան կեդրոններից» մէկում մի պատկառելի ծերունի, մի պարզ համբաւաւոր հոգևորական, որ ամբիոնի վերայից անվնաս յանդիմանել ու խրատել էր հարուստին և աղքատին, ճշմարտութեան դինուոր եղել թէ եկեղեցում և թէ հրապարակի վերայ, ամէնքի պակասութիւնները իրենց աչքի առաջ բաց արել՝ առանց իւրը ուրանալու. որ իւր ողջ կեանքը իւր հօտի բարօրութեան համար էր գործ դրել, տնէ տուն, քաղաքէ քաղաք ընկել, սգաւորին մխիթարել խեղճին, անանկի համար օգնութեան միջոցներ որոնել, օգնութեան ձեռք կարկառել նոցա իր բոլոր կարողութեամբ—չորրորդ կարգից իջաւ իրեն երկաթուղու կայարանում սպասող յարդողների բազմութեան առաջ, և երբ հարցրին զարմացած. «ինչո՞ւ չորրորդ կառքում». որով-

հետև հինգերորդ չկայ՝ պատասխանեց հա-մեստ ժպիտով։

«Արօնամոլութեան այդ կեդրոններում» մենք այնպիսի ուսուցիչներ ենք ունեցել, ո-րոնք իրենց բազմակողմանի, անդադրում աշ-խատութեանց մէջ ժամանակ են գտնում սոսկալի չքաւորութեան ներքոյ տառապող դրծաւորներին, որբերի ու այրիների կեղտի մէջ թաղուած բնակարանը իջնելու, սիրելու նոցա և նիւթական օգնութեան միջոցներ հայ-թայթելու նոցա համար։ Այդքա մեզ էս տարել են այնպիսի տեղեր, սովորեցրել ան-ձամբ տեսնել տառապեալ ժողովրդի վէրքերը, կարեկցութեան զղացմունքով լեցուել, նորան խղճի մտօք և բոլոր անձնուիրութեամբ ծա-ռայելու պատրաստուել։ Այդոցա մշտական խօս-քըն այն է եղել ամբիոնի վերայից, որ քրիս-տոնէական գաղափարի առաջ երկրի իշխան-ներին, ամենաբարձրաստիճան հոգևորականն ու փողոցներ աւելող յետին մշակը նոյն կարգին են, և մենք այդ գաղափարով անուած, այդ գաղափարով պկտք է յառաջ ընթանանք կեան-քի մէջ, եթէ խօսքը նոր աճող հոգևորակա-նութեան մասին է։ Դուք զուր էք հոգևո-րականութեան անունը զանազան կուսակցու-թիւնների անուան հետ կապում։ Կարդա ձեր մեր ուխտը մեր Խարերարի շիրմի առաջ և համոզուած եղէք, որ նուիրական վայրում, նուիրական ժամին երիտասարդ հոգևորականի արտասանած երդումները նոյնը չեն, ինչ որ յառաջադէմ երիտասարդների հրապարակի վերայ բարձրահնչիւն ճառերով տուած խոս-տումները։

Դուք խօսում էք ինչ որ իրաւունքների մասին. այո՛ կան այդպիսի իրաւունքներ, ո-րոնց տէրը ոչ ժողովուրդն է և ոչ հոգևորա-կանը, որոնց պահպանութիւնն ու վերահսկո-ղութիւնը սակայն հոգևորական դասի ձեռքն է տրուած, և վայ այն հոգևորականին, որ իրեն յանձնած աւանդը սրբութեամբ չէ պահում, պատրաստ չէ իւր անձը դնել այդ իրաւունք-ների պաշտպանութեան համար։—Դուք քաջ էք, գիտե՛նք. ձեր տարած յաղթութեանց ապացոյցները ամենայն օր պարզ աչքով տես-նում ենք, և եթէ շարունակէք միշտ այդ ճա-նապարհով գնալ, ո՞վ գիտէ, գուցէ կյանքում մի օր այդ իրաւունքները հանել իսկ հոգև-որականների ձեռքից... ժողովրդի անունով .. բայց ո՜ւմ համար.... ժողովուրդի՞.... միթէ այդքան միամիտ էք։ Այո՛, քաջ էք դուք, և մենք տարակոյս անգամ չունինք, որ այն օրն իսկ, երբ այդպիսի իրաւունքները կորած կլինին, անցած այնպիսի մի տեղ, որտեղից ձեր բարձրագոչ ազազակներով ոչինչ այլ և ևս բերել չէք կարող, չէք էլ փորձի՝ դուք երես կունենաք դեռ պարծենալու կատարած քաջագործութիւններով, մեղը ուրիշների վե-րայ կձգէք։ Ձի՞ որ դուք արդէն ընդունակ էք այնպիսի հրեշային նախադասութիւններ գոր-ծածելու, ինչպէս՝ «Այդմիածինը համարեա միշտ դանուել է մեր հակառակորդների ձեռքում»... Ուրեմն Ս. Այդմիածինը կարող է սորա ու նորա ձեռքո՞ւմ լինել... ուրեմն դուք յոյս ունիք, որ նա մի օր էլ ձե՛ր ձեռքում կլինի .. խաղալի՞կ, ... գործի՛ք ուրիշ ուրիշ նպա-տակների համար։ Գուցէ, ո՞վ գիտէ. չա-րամիտ է բազդն ու փոփոխական... բայց եթէ կգայ մի այդպիսի օր՝ լաւ իմացած եղէք, որ Ս. Այդմիածնում կգտնուին մարդիկ, որոնց դիակի վերայից անցնելը յաղթական սև կառ-քերով դիւրին չի լինի ձեզ։

Զարմանալի՜ ժամանակների մէջ ենք ապրում ճշմարիտ։ Ժողովրդի դէմն է, ժո-ղովրդի թշնամին մի հոգևորականութիւն, որի հրամանատարը Հայոց Հայրիկն է, և ժողո-վրդի կողմը, նորա իրաւունքների պաշտպան այնպիսի մարդիկ, որոնք իրենց սիրելաներում նստած երիտասարդ գործակալների միջոցով միայն շփումն ունին ժողովրդի հետ։

Մենք ժողովրդի հետ... բայց՛, շատ բա-րի, եղէք դուք ժողովրդի հետ. մենք արդէն իրականութեան մէջ, կենդանի օրինակներով կապացուցանենք, թէ մե՛նք ու՛մ հետ ենք։ Յաղթական երգերով կոուի ասպարէզ էք հրաւիրում մեզ, վատահ նախօրօք յաղթու-թեան վերայ։ Խոստովանում ենք, որ այդ կոր-

ծանիչ ներքին կռիւը ոչինչ պատճառութիւն մեզ չէ պատճառում, որ մենք պարծենալու ոչինչ չե՛ք գտնում, երբ արիւն արցունքի մէջ թողած խեղճ, անտիրական ժողովրդին՝ նորա անունով իրար միս բզկտելու պիտ ելնենք։ Մենք լաւ ենք տեսնում այն անդունդը, որ լայն բերանով բացուած է հայի առաջ, և սոսկումով ենք դիտում, թէ ինչպէս այնտեղ դահավէժ դիմումն են օրհասական եռանդով հարազատ արիւնակից եղբայրներ՝ սպառնալով ամենքիս միատեղ քաշ տալ, և մենք կփորձենք կանգնեցնել այդ կորստաբեր հոսանքը։ Այո՛, մենք ընդունում ենք ձեր հրաւէրը. բ՛նչ արած, երբ կռուել պէտք է, սրբազան իրաւունքների համար կռուել, և հաւատացած եղէք, որ ո՛չ մի քայլ չենք ընկրկի։ Ժայռեր չենք մենք, բայց ժայռի վերայ ենք կանգնած՝ այնպէս հաստատուն, որ դատարկ քամիներն ու փոթորիկ մեզ վրդովել չեն կարող։ Մեծ մեծ ակնկալութիւններ մենք չունինք. մեզ ոգի տուողը պարտքի այն նուիրական ըզգացումն է, որի ազդեցութեամբ յոյս ունինք, թէ այն օրը, երբ մեր բուն Տէրը կգայ և անցած գնացածի համար հաշուի կպահանջի՝ խոնարհած աչքերով կարող պիտ լինինք ասել. «Ծառայք անպիտանք էաք, զոր պարտ էաք առնել արարաք»։

Կարապետ Վարդապետ։

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ·

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ընդհս Վեհափառ Հայրապետը նոցին Կայսերական Մեծութեանց ներկայանալուց յետոյ բարեհաճել է մնալ Ռուսաստանի մայրաքաղաքում դարձեալ մօտ երկու շաբաթ՝ ի մեծ ուրախութիւն տեղւոյն հայ հասարակութեան։ Այդ միջոցում Վեհափառ Հայրապետը այցելել է շատ նշանաւոր հաստատութիւններ և ամենուրեք ընդունուել է ամենամեծ շուքով։ Վերջապէս յունիսի 13-ին նորին Օծութիւնը հաճել է մեկնիլ դէպի Մոսկուա, ուր արդէն անհամբերութեամբ սպասում էին նորան։ Յաջորդ օրը, յունիսի 14-ին, իւր շքախմբի, Մոսկուայի հայ հասարակութեան կողմից Պետերբուրգ գնացած պատգամաւորների և Պետերբուրգի հայ հասարակութեան անդամների ուղեկցութեամբ Վեհափառ Հայրապետը փառաւոր մուտ գործեց Մոսկուա, ուր օրեր առաջ պատրաստութիւններ էին տեսնուած մեծ Հիւրին արժանավայել պատուով ընդունելու համար։ Նիկոլայևսկայա երկաթուղու կայարանում համախմբուած է եղել Մոսկուայի գրեթէ ամբողջ հայ գաղութը, որ սրտաբուղխ ցնծութեան աղաղակներով ընդունել է պաշտելի Հայրիկին։ Մի փառաւոր տեսարան է ներկայացրել Հայրապետական հանդիսաւոր գնացքը երկաթուղու կայարանից մինչև հայոց եկեղեցին, որ մի առանձին շքեղութեամբ զարդարուած է եղել թէ ներքուստ և թէ արտաքուստ։ Եկեղեցում իւր սովորական աղօթքն անելուց յետոյ Նորին Սրբութիւնը մի համառօտ, բայց սրտառուչ քարոզով մխիթարել և օրհնել է Մոսկուայի հօտին։

Յունիսի 15-ին Վեհափառ Հայրապետն այցելել է Մոսկուայի ընդհանուր նահանգապետ Նորին Բարձրութիւն Մեծ իշխան Սերգիյ Ալեքսանդրովիչին, որ նոյն օրը փոխ այցելութեան է գնացել Նորին Սրբութեանը և մնացել է նորա մօտ 25 րոպէի չափ։

Ապա Վեհափառ Հայրապետը այցելել է մի քանի նշանաւոր հաստատութիւններ, ի թիւս որոց և Լազարեան ճեմարանը, Գասպարեան անկեղանոցը և այլն։ Յունիս 18-ին Մոսկուայի հայ հասարակութիւնը մի հանդիսաւոր ճաշկերոյթ է պատրաստել ի պատիւ Նորին Օծութեան, և այդ առթիւ հանգանակութիւն է սկսուել յօգուտ Ս. Էջմիածնի վերաշինութեան։ Մոսկուայում, ինչպէս նաև Պետերբուրգում Վեհափառ Հայրապետը հոգեշունչ քարոզներով մխիթարել ու խրախուսել է իր պանդուխտ զաւակներին, յորդորելով միշտ սիրել իրենց մայր Հայրենիքը, Ս. Էջմիածինը, չմոռանալ իրենց տառապեալ եղբայրներին, որոնց վիճակի բարւոքման խնդրով այսօր ղրաղուած է գրեթէ բովանդակ քրիստոնեայ աշխարհի մամուլը։

Յունիսի 23-ին Նորին Վեհափառութիւնը իւր հրաժեշտի օրհնութիւնը տալով Մոսկուայի հայերին՝ մեկնել է այնտեղից Թէոդոսիայի վրայով Մայր Աթոռս վերադառնալու։ Նոյն ամսոյ 25-ին Լողոլօ—Սևաստապօլեան երկաթուղու Ջանկոյ կայարանում բաղդ են ունեցել ներկայանալու Վեհափառ Հայրապետին Խրիմի զանազան քաղաքներից եկած բազմաթիւ հայեր, որոնց իւր հայրական օրհնութիւնը տալուց յետոյ՝ շարունակել է իւր ճանապարհը և նոյն օրը ժամանել է Թէոդոսիա։ Այստեղ ևս, ինչպէս

և ամենուրեք, նորին Վեհափառութեան ընդունել են ամենաշքեղ հանդիսով ու խիստ մեծ ոգևորութեամբ։ Վեհափառ Հայրապետը հիւր է եղել այստեղ հայազգի անուանի նկարիչ Այվազովսկուն։ Թէոդոսիայից մեկնելով նորին Օծութիւնը յունիսի 3-ին ժամանել է Փոթի, որտեղից Անդրկովկասեան երկաթուղով շարունակել է իւր ճանապարհը դէպի Միխայլովօ և ապա Բորժոմ։

—

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԿՐՏԻՉ Ա. ԽՐԻՄԵԱՆ.

(նորա՝ Ալէքսանդրօ - Նեւսկի մենաստանն այցելելու առթիւ

Այսպիսի վերնագրով մի յօդուած է լոյս տեսել ռուսաց «Եկեղեց. Համբաւաբեր» շաբաթաթերթի № 23-ի մէջ. մենք հարկաւոր համարեցինք հաղորդել «Արարատին» այդ ուշադրութեան արժանի յօդուածի թարգմանութիւնը, որ ահաւասիկ յառաջ ենք բերում։

Մ՚ենք արդէն հաղորդել ենք Մկրտիչ Ա. կաթուղիկոսի, կամ Հայոց պատրիարքի, մեր հիւսիսային մայրաքաղաքը ժամանելու լուրը։ Եւ պէտք է հայերին տալ իրենց արժանի պատիւը. նոքա գիտեն պատուել իրենց հոգևոր հովիւներին և մանաւանդ Հովուապետին, որի մէջ կենդրոնանում են նոցա թէ հոգևոր և թէ քաղաքական ակնկալութիւնները։ Կաթուղիկոսի ճանապարհորդութիւնը էջմիածնից, ուր նորա պատրիարքական Աթոռն է գտնւում, ամբողջ Ռուսաստանով մինչև Պետերբուրգ՝ կարծես մի յաղթական գնացք էր, որովհետև բոլոր գլխաւոր քաղաքներում նորան դիմաւորում էին ամենահանդիսաւոր եղանակով։ Պետերբուրգում մանաւանդ նորա ընդունելութիւնը մի զարմանալի փառահեղ կերպարանք ունեցաւ։ Պետերբուրգի ամբողջ բազմաթիւ հայ գաղութը, որի ներկայացուցիչներից կան նաև բարձրագոյն վարչութեան մէջ, հաւաքուեցաւ Նիկոլաևսկի երկաթուղու կայարանում մայիսի 25-ին՝ դիմաւորելու իւր Հայրապետին, և երբ կայարանից յառաջ ընթացաւ բազմաթիւ կառքերից բաղկացած գնացքը, որի մէջ աչքի էր ընկնում իւր հոյակապութեամբը կաթուղիկոսի իրեն բարձր կառքը, որ վարում էին (?) գեղեցիկ կարմիր զգեստով շաթիրներ (կաւաս), և երբ գնացքի յետևից խռնուած՝ յառաջ շարժուեցաւ հեռաւոր բազմութիւնը՝ ամբողջ Նեւսկի պրօսպեկտը (փողոցը) մինչև Հայոց եկեղեցին ներկայացնում էր մի խիստ կենդանի տեսարան, որին աւելի փառահեղութիւն էին տալիս Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Փէօդորովնայի ծննդեան օրուայ առթիւ ծածանուող դրօշակները։

Մինչև անգամ ռուսները դուրս էին թափւել իրենց տներից՝ տեսնելու Հայոց «պատրիարքին» և ակնածութեամբ գլուխ էին տալիս նորան։

Հայոց եկեղեցին հասնելով՝ Կաթուղիկոսը, որին ընդունեցին զանգահարութեամբ և հոգևոր երգերով աղօթք արեց և ապա դիմելով ժողովուած հասարակութեանը՝ քարոզ խօսեց, որի մէջ յայտնեց իւր ուրախութիւնը, որ բաղդ ունեցաւ թէպետ և ծերութեան օրերում, տեսնելու Սպիտակ Թագաւորի հիւսիսային մայրաքաղաքը, և մի առանձին երջանկութիւն համարեց այն, որ իւր գալստեան օրը ռուս ժողովրդեան օգոստափառ Մօր՝ Թագուհի Կայսրուհու ծննդեան օրն էր։

Պետական բարձրագոյն պաշտօնեաների այցելութիւնները ընդունելով ու վերադարձնելով՝ Կաթուղիկոսը յաջորդ օրն իսկ իւր հետևորդների հետ միասին գնաց Պետրոպաւլովսկի տաճարը, ուր Նորան ընդունեց տեղւոյն հոգևորականութիւնը, և եկեղեցականաց դասի հետ միասին հայկական հոգեհանգիստ կատարեց ի Տէր հանգուցեալ Խաղաղարար Թագաւորի համար։ Իբրև հոգևոր պաշտօնեայ նա այցելեց նաև հիւսիսային մայրաքաղաքի գլխաւոր հոգևոր հաստատութիւնը՝ Ալէքսանդրօ — Նեւսկի մենաստանը և իւր սրբազան վանահօրը՝ ամենապատիւ Պալլադիոս մետրապօլտին։ Այս այցելութիւնը տեղի ունեցաւ յունիսի 2-ին, ցերեկուայ 12 ժամին, Կաթուղիկոսը Այվազեան եպիսկոպոսի և տեղական հայ հոգևորականութեան ներկայացուցիչների ուղեկցութեամբ նախ գնաց ամենապատիւ մետրապօլիտ Պալլադիոսի մօտ և մեծ սիրով ընդունուեցաւ նորա կողմից։ Թէյ վայելելուց և ամենապատիւ մետրապօլտին հրաժեշտ տալուց յետոյ՝ Կաթուղիկոսը հանդիսաւոր կարգով, շաթիրներն առաջից և մենաստանի տեղապահի ու գանձապահի, Նսայի և Արսենիոս վարդապետների (վերջինս առաջ ծառայել է Պօլսոյ միսսիօնում (առաքելութիւն) և այդ պատճառով քաջ ծանօթ է օրթոդոքս արևելքի պատրիարքների և հայկական եկեղեցու ներկայացուցիչների փոխադարձ յարաբերութեանց) ուղեկցութեամբ միջին ծառուղիովն անցաւ ուղղակի տաճարը, որի գլխաւոր մուտքի առաջ կարմիր գորգ էր փռուած։ Տաճարը մտնելիս միաբանութիւնը դիմաւորեց Կաթուղիկոսին Հոգեգալստեան «Օրհնեալ ես, Քրիստոս Աստուած մեր» և ս. Ալէքսանդր Նեւացու շարականները երգելով, որից յետոյ Կաթուղիկոսը բեմի բաց դուներովն անցաւ բեմն և համբուրեց ս. Աւետարանն ու սեղանը։ Բեմը դիտելուց յետոյ՝

նա դուրս եկաւ այնտեղից ու ամբիոնից (սեղանի առաջից) օրհնեց հաւաքուած ժողովրդին, որին միաբանութիւնը պատասխանեց էյս պօլա էտէ, դէսպօտա (ի բազում ամս, Տէր)։

Այնուհետև անցնելով տաճարի աջ կողմը՝ Կաթուղիկոսը համբուրեց ս. Ալեքսանդր Նևացու դամբարանը և հարցուփորձ արեց ս. Իշխանի նահատակութեանց մասին, որի կեանքի պատմութիւնը համառօտակի հաղորդեց նորան Արսենիոս վարդապետը։ Հայակապ տաճարը դիտելուց յետոյ Կաթուղիկոսը (հայերէն լեզուով) մի կարճառօտ ճառ խօսեց ներկայ եղողներին և անկեղծ շնորհակալութիւն յայտնեց (ինչպէս իսկոյն ռուսերէն թարգմանեց նորա ճառը իւր շքախմբի հայ անդամներից մէկը) իրեն այնպիսի յարգանքով ընդունելու համար և իւր կողմից ամէնքին էլ բարեմաղթութիւններ արեց։ Ներկայ եղողների թուում, բացի միաբաններից և հասարակ ժողովրդից, կային հոգևոր ճեմարանի ուսուցչապետներից մի քանիսը, որոնք ուշադրութեամբ դիտում էին Կաթուղիկոսին ցոյց տուած ընդունելութեան բոլոր մանրամասնութիւնները։ Ս. Հոգւոյ եկեղեցին էլ այցելելով Կաթուղիկոսը, ըստ երևոյթին գոհ ընդունելութիւնից, հեռացաւ Ալեքսանդր—Նևսկի մենաստանից։

Կաթուղիկոսի խիստ աչքի ընկնող անձնաւորութիւնը ամէնքի վերայ գործեց մի վերին աստիճանի գեղեցիկ տպաւորութիւն, որ արտայայտուեցաւ այն ակնածութեամբ, որով վերաբերում էին նորան։ Եւ այդ տպաւորութիւնը աւելի ևս զօրաւոր է դնդիսանում շնորհիւ նորա կեանքի պատմութեան։ Կաթուղիկոսը իւր ժողովրդեան հարազատ զաւակն է։ Նա ծնաւ 1820 թ. մի համեստ արհեստաւորի ընտանիքում, տաճկական Հայաստանի Վան քաղաքում, և մատաղ հասակում բնաւ չէր պատրաստուում հոգևոր ծառայութեան համար. այդ ասպարէզը նա ընտրեց արդէն հասուն տարիքում, կնոջ և զաւակների մահից յետոյ։ Իւր կրօնական—բարոյական դաստիարակութիւնն այժմեան պատրիարքը պարտական է իւր հարազատ հօրեղբօրը, որ քաջ դիտէր հայոց լեզուն ու պատմութիւնը և աստուածաբանական գրականութեան լաւ տեղեակ էր։ Նա արհեստով ոստայնանկ էր, և իւր եղբօրորդուն սովորեցնում էր իւր արհեստը, բայց ամէնից աւելի ազդեցութիւն ունեցաւ նորա վերայ իւր բնաւորութեան գրաւիչ յատկութիւններով։ Մեծանալով Վանայ լճի գեղեցիկ ափերի վրայ՝ Մկրտիչ Խրիմեանը ճանապարհորդում, շատ սովորում է, այնպէս որ յիսնական թուականների կիսում ընդհանուրի ուշադրութիւնն է գրաւում որպէս պատմաբան, բանաստեղծ և հոգևոր իմաստասէր։ Տաճկաստանի քրիստոնէից Թշուառ վիճակը, մանաւանդ Հայաստանի լեռներում ու ձորերում, ուր մինչև այսօր անպատիժ թագաւորում են քրդերի աւազակապետ ցեղերը, ամէնից աւելի Խրիմեանի հոգածութեան առարկան է եղել։ Իւր բոլոր երկար կեանքը Թիւրքիայում՝ որպէս համեստ վանահայր և Կ. Պօլսոյ պատրիարք, որպէս Թուրքահայերի լիազօր ներկայացուցիչ Բերլինի վեհաժողովում՝ նա նուիրել է իւր հօտի վիճակի բարւոքման գործին։ Խորունկ և անկեղծ հաւատը և վառ պերճախօսութիւնը հնարաւոր էին դարձնում Հայոց հովուապետի համար օսմանեան կայսերութեան զանազան կողմերում եկեղեցիներ, դպրոցներ և տպարաններ հիմնելու միջոցներ գտնելը։ Դժբաղդաբար տաճկական կառավարութիւնը՝ Հովուապետի այս կամ այն տեղից հեռանալուց յետոյ, միշտ կարողանում էր ջնջել ոչնչացնել նորա բոլոր բարի ձեռնարկութիւնները։ 1869 թ. Խրիմեան ընտրուեցաւ Կ. Պօլսոյ Հայոց պատրիարք և այն ժամանակին իսկ Դրան առաջ խնդիր յարոյց բարելաւելու տաճկահայերի սոսկալի դրութիւնը, մի խնդիր, որի վերաբերութեամբ մինչև այսօր էլ խօսք ու զրոյց է լինում։ Պատրիարքի պաշտօնում նա մնաց մինչև 1873 թ., զարմացնելով Կ. Պօլիսը իւր կեանքի անսովոր պարզութեամբ, աղքատ սեղանովն ու հասարակ ղեկտովը, որ դուր չէր գալիս Թուրքաց մի քանի հայ պաշտօնեաների։ Պապականութեան ձգտումների ապօրինութիւնը գիտենալով՝ նա մերժեց Վատիկանի ժողովին մասնակցելու հրաւէրը, որ գումարուեցաւ պապի անսխալականութեան դաւանանքը հաստատելու համար։ 1879 թ., երբ վերջացաւ մեր վերջին պատերազմը Թիւրքիայի հետ, Փոքր Ասիայում սոսկալի սով սկսուեցաւ, որի հետևանքները զարհուրելի էին մանաւանդ այն պատճառով, որ Թիւրք կառավարութիւնը բնաւ սովոր չէ որ և է միջոց ձեռք առնելու սովեալների վիճակը թեթևացնելու համար։ Գերապատիւ Խրիմեանը, որ այն ժամանակ Վանի առաջնորդ էր, հրաւէր կարդաց բոլոր հայերին և, իւր ժողովրդականութեան շնորհիւ, մեծ գումար հաւաքեց, որով և կարողացաւ սովեալներին առանց կրօնի և ազգութեան խտրութեան օգնելու գործը կազմակերպել։ Մի բնաւիշ իրողութիւն է պատմում նորա կենսագիրներից մէկը այդ սովի ժամանակուանից։ Գերապատիւ Մկրտչի մօտ գալիս է սովեալ քրդերի մի խումբ և հաց է խնդրում, պատրաստականութիւն յայտնելով հայադաւանութիւն ընդունելուս։

— Առէք հացը,—պատասխանեց նոցա սրբազանը,—իսկ հաւատափոխութեան մասին կը մտածենք յետոյ, երբ սովը վերջանայ։

Վերջին տարիները, նախ քան իւր ընտրութիւնն ի գահ ս. Գրիգորի, Կաթուղիկոսն ապրում էր Երուսաղէմում, ակամայ հանգստեան մատնուած թիւրք կառավարութեան կասկածոտութեան ընդհիւ, որ խիստ մխանոք էր նայում հայերի անսահման սիրոյն առ իրենց Հովիւը։ Ամենից քիչ նա պատրիարքական աթոռի վրայ էր մտածում երբ ընտրուեցաւ 1893 թ. 5 մայիսի Էջմիածնի ժողովով։ Բ. Դուռը կարող էր միայն ձգձգել նորա հաստատութիւնը կաթուղիկոսի պաշտօնում, բայց վերջ ի վերջոյ նա ստիպուած եղաւ ճանաչել այս ընտրութիւնը, և 1893 թ. յունիսի 3-ին հրատարակուեցաւ Բարձրագոյն հրովարտակ Մկրտիչ արքեպիսկոպոսի Ամենայն Հայոց Կաթուղիկոս հաստատելու մասին։ Ռուսաստան ժամանելու օրուանից Կաթուղիկոսի համար ամենից աւելի հոգածութեան առարկայ է դարձել այն թիւրքահայերի վիճակը, որոնք փախել են իրենց հայրենիքից մեր սահմանների սովի և ապա թիւրքաց գաղանութեանց ու բռնութեանց երեսից, որ արդէն դիւանագիտական ներգործութեան առարկայ են դարձել։ Բազմաթիւ քաղցած, պատառոտած շորերով, հիւանդ գաղթականի տղամարդիկ, կանայք և երեխաներ առաւօտուանից մինչև գիշեր լցուում էն Կաթուղիկոսի ընակավայր վանքը, այնպէս որ Կաթուղիկոսն ստիպուած եղաւ հանգանակութիւն բանալու թղթատուութիւն խնդրել, որպէս զի կարողանայ գէթ փոքր ի շատէ թեթեւացնել թշուառ փախստականների վիճակը։

Ընայելով Իւր եօթանասուն և հինգ ամեայ հասակին, Կաթուղիկոսը բոլորովին առոյգ է և կարող է շարունակ տասը ժամ ձիու վրայ անցկացնել։ Եկեղեցական իշխանաւորի կեանքի պայմաններն արևելքում, ուր հօտը կարելի է այցելել միայն ձիով, կեանքի համար վտանգաւոր հանգամանքներում, Կաթուղիկոսին, ինչպէս և ուրիշ շատ հոգևորականների դարձրել են անխոնջ ձի հեծնող և վարպետ հրացան արձակող։

Մկրտիչ Կաթուղիկոսի այս ճանապարհորդութեան նպատակը, ինչպէս հաղորդումն էր լրագիրները, Թագաւոր Կայսեր շնորհաւորելն է, որ սովորաբար անում են Էջմիածնի պատրիարքները Ռուսիոյ Վեհապետների վերաբերութեամբ, սոցա իրենց հայրենական գահը բարձրանալուց յետոյ։ Բայց այս ճանապարհորդութիւնը միևնոյն ժամանակ չէ կարող չազդել նաև օրթոդոքս և Հայաստանեայց եկեղեցեաց փոխադարձ յարաբերութեանց խնդրի լուսաբանութեան վրայ։ Հայերն աւելի ու աւելի են ռուսաց պետութեան մի մասը կազմում և ինքը պատմութիւնն աւելի ու աւելի է մօտեցնում նոցա օրթոդոքս Ռուսաստանին։ Բայց նոքա միշտ մօտ են եղել նաև օրթոդոքս յոյն արևելքին։ Իրենց քրիստոնէական լուսաւորութիւնն ստանալով յոյներից՝ երկու եկեղեցիներիցն էլ սրբոց գան ընդունուած ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով, հայերը մի կենդանի հոսանք մտցրին իւր ժամանակին յոյն արևելքում, որ արդէն սկսել էր զառամիլ։ Մինչև Քաղկեդոնի ժողովը 451 թ. Հայաստանեայց եկեղեցին ծաղկում և ամուր պահում էր ուղղափառութեան դրօշը և եռանդով մաքառում էր Նեստորի աղանդի դէմ։ Բայց երբ տեղի ունեցաւ Քաղկեդոնի ժողովը, որին դժբաղդաբար Հայ եպիսկոպոսները չմասնակցեցին, այնտեղ սահմանուած ուղղափառ դաւանութիւնը Քրիստոսի երկու բնութեանց նկատմամբ, անճիշդ տեղեկութիւնների ընդհիւ, կասկածելի երևեցաւ։ Որովհետև նոցա լեզուում միայն մի (?) բառ կայ естество (բնութիւն) և лице (անձն) դաղափարների արտայայտութեան համար, ուստի և նոցա թուեցաւ թէ ժողովը դաւանելով երկու բնութիւն ի Քրիստոս, նոյն այդ որոշմամբ դաւանում է Նորանում երկու անձ։ Այդ պատճառով նորա դաւանաբանական որոշումը անկանոն ճանաչեցին, մերժեցին ժողովը և հակուեցան Եւտիքէսի միաբնակութեան վարդապետութեան կողմը։ Այս թիւրիմացութեան պատճառով կարեւորով իւր յարաբերութիւնները (որոնց լարմանը նպաստեցին և քաղաքական հանգամանքները) յունական եկեղեցու հետ, Հայաստանեայց եկեղեցին իւր պատմական զարգացման նոր շրջանը մտաւ և դժբաղդաբար յաւաղ դնաց արդէն միաբնակութեան ճանապարհով։

Նորա հիմնական դաւանական դիրքն այժմ մի հին հաւատամք է (որ վերագրուում է,—հարկաւ առանց օրինաւոր պատմական քննագատութեան,—ս. Գրիգոր Լուսաւորչին) որի մէջ ի միջի այլոց ասուած է Քրիստոսի մասին թէ նա «ունէր մի անձն, մի դէմ և միաւորեալ էր ի դ բնութիւն»,* — ուր պարզ նշմարուում է միաբնակութիւն։ Սակայն Արևելքի հետազօտող յայտնի գիտնական Նիլը իւր «Հայաստանեայց եկեղեցու ուղղափառ համարուելու ձգտումը» ճառի մէջ այն կարծիքն է յայտնում թէ Հայաստանեայց եկեղեցու աստուածաբանները բոլորովին հաշտեցնում են այդ ուսմունքը առհասարակ արևելեան եկեղեցու վարդապետութեան հետ, և յիրաւի նոքա ամենայն դէպքում աշխատում են ցոյց տալ թէ իրենց դաւանաբանա-

---

1. Neale, Hist. of East Church, II. 1078.

* Իսկականն է. «մի անձն, մի դէմ, եւ միաւորեալ մի բնութիւն»։

կան վարդապետութիւնը բնաւ չէ տարբերուում ուղղափառ արևելքի վարդապետութիւնից։ Եւ չէ կարելի չասել, որ նոցա հին եկեղեցին իւր բոլոր կազմութեամբն ու ոգովը մօտ է յոյն եկեղեցուն և կարող է իւր հնութեանց գինարանից զօրաւոր օգնութիւն հասցնել թէ պապականութեան ապօրինի ոտնձգութեանց ու նորամուտ ուսմանց և թէ բողոքականութեան մոլորութեանց դէմ մաքառելու գործին։ Բայց նոցա միջի մեծ անբրպետն այն անհրկրայելի և տխուր իրողութիւնն է, որ Հայաստանեայց եկեղեցին եօթն տիեզերական ժողովների եկեղեցի չէ, որովհետև նա ընդունում է միայն առաջին երեք ժողովները, որ և ուսուցանում է ուղղակի և վճռապէս իւր վարդապետարաններում։ Այս իրողութիւնն ահա նախ և առաջ և գլխաւորապէս պէտք է աչքի առաջ ունենալ Հայաստանեայց և օրթոդոքս եկեղեցեաց մօտենալու և փոխադարձ յարաբերութեանց մասին մտածելիս, և չէ կարելի չցանկալ, որ երկու եկեղեցիների ներկայացուցիչ աստուածաբաններն էլ աւելի մանրամասնօրէն զբաղուէին այս առաջնակարգ կարևորութիւն ունեցող միջեկեղեցական խնդրի քննութեամբ։

Ցայտնելով հանդերձ մեր բոլոր գոհունակութիւնը այն ջերմ համակրանքի համար, որ արտայայտուած է ներկայ յօդուածի մէջ դէպի մեր Սրբազնագոյն Հայրապետը, չենք կարող ի ցաւ սրտի մնտնացոյց չանել այն թիւր կարծիքների վերայ, որոնց ենթակայ է այստեղ հայաստանեայց ս. եկեղեցւոյ դաւանութիւնը։ Պէտք է խոստովանել, թէ մասամբ մենք հայերս ենք մեղաւոր, որ օտարները այսպիսի մի կարծիք են կազմել եւ ամէն դէպքում պարբերաբար կրկնում են։ Այո՛, եղել են մեր մէջ մարդիկ, որոնք աշխատել են ցոյց տալ, իբր թէ մեր եւ յունական եկեղեցւոյ դաւանութեան մէջ ոչ մի էական խտրութիւն չկայ, իբր թէ տարբերութիւնը միայն արտաքին հանգամանքների, քառերի մէջ է։ Միևնոյն իրողութիւնն այն է, որ մենք յատկապէս Յունաց եկեղեցու դէմ երկար դարերի ընթացքում կեանքի եւ մահու կռիւ ենք վարել, եւ որ այդպիսի կռիւ յառաջ կարող էր գալ միայն այն ժամանակ, երբ մէջ տեղ կեանքի եւ մահու խնդիր կար եւ ոչ այդ թէ եւ հին, բայց միանգամայն հնարովի, հանգամանքը, որով հայոց լեզուի մէջ մի հատ քառի պակաս լինելը քաղկեդոնի ժողովի մասին սխալ գաղափար կազմելու պատճառն է համարուում։ Ցայտնի է, թէ մեր գրաբար լեզուն որքան հարուստ է այդպիսի քառերով եւ որքան շատ էին մեր հայրերի մէջ յունական լեզուին քաջ հմուտ, քաղկեդոնի ժողովի որոշումները ամենայն ճշդութեամբ թարգմանելու ընդունակ մարդիկ։* Եթէ նորա այդ որոշումները մերժել են եւ պատուիրել են քարոզել՝ մի քնութիւն բանին Աստուծոյ մարմնացեալ և ոչ երկուս քնութիւնս, այդ եղել է ոչ թէ «Նւտիքէսի միաքընակութեան» հետեւելով, այլ հաւատարիմ մնալով այն դաւանութեան, որ ունէր մի եւ ընդհանրական եկեղեցին քաղկեդոնի ժողովի պատճառով զանազան մասերի բաժանուելուց առաջ։ Մեզ դժուար չէ քազմաթիւ օրինակներով ապացուցանել, որ «մի անձն, մի ղէմ եւ միաւորեալ մի քնութիւն» խօսքերը՝ առնուած մեր եկեղեցւոյ մէջ հրաժարիմ-քին կից գործածուող հաւատոյ հանգանակից, որ սակայն ոչ մեր եկեղեցւոյ «հիմնական դաւանական գիրքն է» եւ ոչ էլ «վերագրուում է ս. Գրիգոր Լուսաւորչին»—ինչպէս նաեւ մեր իսկական հայերից գործածուած նման դարձուածներ, կէտ առ կէտ համաձայն են ուղղափառութեան ախոյեան ս. Կիւրեղ Աղեքսանդրացու վարդապետութեան եւ ճշգրիտ արտայայտութիւն Եփեսոսի ս. ժողովում ընդհանրական եկեղեցւոյ, Նեստորի մոլորութեան հակառակ, ի քրիստոս դաւանած հաւատքի։ Պատմութեան արդի անկողմնապահ քննաղատութիւնը հաստատուն փաստերով ապացուցել է, որ քաղկեդոնի ժողովի ընդունած երկու քնութեան ուսումը արեւելեան եկեղեցու ոգուն բոլորովին հակառակ, արեւմուտքից թելադրուած՝ մի իրաւաբանական քացատրութիւն է միայն, որի ազդեցութիւնը իւր վրայից թօթափելու համար շատ ջանք է գործ դրել նոյն ինքն յունական եկեղեցին եւ մասամբ յաջողեցրել է տիեզերական ժողովի եւ Յովհաննէս Դամասկացու գրուած-

---

1. Ռուսաց օրթոդոքս գիտութիւնն արդէն այս կողմից մի կարեւոր աշխատութիւն հրապարակ է հանել, այն է՝ Պետերբուրգի հոգեւոր ճեմարանի ուսուցչապետ Ի. Ե. Տրոյիցկու ղոկտորութեան շարադրութիւնը, որի նիւթն է Ներսիսի հայոց դաւանութիւնը· տես· „Изложеніе вѣры церкви Армянскія, начертанное Нерсесомъ, каѳоликосомъ армянскимъ, по требованію боголюбиваго государя грековъ Мануила“. Историко догмат. изслѣдованіе И. Троицкаго Спб. .1875 г.

* Պատմութիւնից յայտնի է, որ այդ աղանդաւորը հետեւողներ չէ թողել եւ որ ոչ միայն հայոց, այլ նա եւ Միաբնակ կոչուած եկեղեցիները նզովում են նորան։

ների միջոցով: Բայց ո՛չ քաղկեդոնի ժողովը միայն, այլ յիրաւի նաեւ միւս 3 տիեզերական ժողովները, մանաւանդ վերջինը, իրենց հետեւանքներով՝ այնպիսի մի մեծ անջրպետ են հայոց եւ Յունաց եկեղեցիների մէջ, որ մենք երբէք վերցնել չենք կարող, առանց մեր ամբողջ պատմութեան վերայ մի սեւ զիծ քաշելու: Թէ ինչո՞ւ, այդ ցոյց տալու համար երկար եւ մանրաքննին ուսումնասիրութիւններ են պէտք, որոնցից մենք չենք փախչում այլ պիտի աշխատենք մեր բոլոր կարողութեան չափով, եւ շատ ուրախ կլինինք, եթէ կատարուի արժանայարգ յօդուածագրի ցանկութիւնը՝ երկուստեք աշխատանքով պարզելու այս կարեւոր խնդիրը, որպէս զի եկեղեցիներից իւրաքանչիւրը ճանաչել եւ յարգել սովորէ միւսին եւ, իւր ինքնուրոյն յատկութիւնները պահելով՝ կարողանայ հաստատել նորա հետ այն միակ հնարաւոր եւ օգտակար միութեան կապը, որով բոլոր ճշմարիտ քրիստոնեաները միացած՝ ընդհանուր ջանք գործ կունենան ընդհանուր թշնամու՝ հակաքրիստոնէական գաղափարների եւ շարժումների, դէմ եւ աշխարհը կնուաճեն ընդհանրական եկեղեցւոյ մի անտեսանելի Գլխոյ համար՝ նորա սուրբ անունով, նորա ներշնչած հաւատով, նորա խօսքի զօրութեամբ:

Կ. Վ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Ս. Էջմիածնի տօնը.

Ս. Էջմիածնի տօնը Յունիսի 4—ին կատարուեցաւ Մայր Աթոռումն մի առանձին հանդիսաւորութեամբ: Առաւօտեան հնչեց երրորդի զանգը և ամբողջ մի օբանութիւնը, Ճեմարանի ուսուցչական խումբը և աշակերտները և ժողովրդեան մի խուռն բազմութիւն դիմեցին Մայր Տաճարում, ուր կատարուեցաւ Հայրապետական Մաղթանքը: Մաղթանքից յետոյ, մօտաւորապէս ժամ 9—ին, սկսուեցաւ ս. պատարագը. պատարագիչն էր Գերապատիւ Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեանը. պատարագի ժամանակ գեղեցիկ ներդաշնակութեամբ երգում էր Ճեմարանի երգեցիկ խումբը՝ բարեշնորհ Հայր Կոմիտաս վարդապետի ղեկավարութեամբ: Աղօթաւորների մէջ նկատուում էին ուրիշ տեղերից և մանաւանդ Երեւանից եկած բազմաթիւ ուխտաւորներ:

Ս. պատարագից յետոյ Ամենապատիւ Տ. Տեղապահ Մեսրովբ արքեպիսկոպոսը հեռագրով շնորհաւորեց Վեհափառ Հայրապետին, Որի բացակայութիւնը այնքան զգալի էր այդ օրը Մայր Աթոռի միաբանութեան համար: Նոյնպիսի հեռագրական շնորհաւորութիւն ուղարկուեցաւ Նորին Օծութեանը նաև Ճեմարանի վարչութեան կողմից:

Մայր Աթոռիս սեղանատունը պատրաստուած էր ճոխ հացկերոյթի, որին մասնակցեցին բացի միաբանութիւնից նաև Ճեմարանի Պ. Տեսուչը ու ուսուցիչները և պատուաւոր հիւրեր:

Ամենապատիւ Տ. Մեսրովբ արքեպիսկոպոսը բացատրելով օրուայ տօնի նշանակութիւնը առաջարկեց Ս. Էջմիածնի հաստատութեան և յարատեւութեան բաժակը, որը բազմականները դատարկեցին յոտնկայս: Երգեցիկ խումբը երգեց «Էջմիածինն ի Հօրէ» շարականը, իսկ աշակերտներից մէկը կարդաց «Արարատ»ի Յունիսի համարում տպուած Ց. Յովհաննէսեանի «Էջմիածին» բանաստեղծութիւնը:

Ապա ոտքի ելնելով բարեշնորհ Կարապետ վարդապետը, Ամենապատիւ Տ. Տեղապահի հրամանով, մի բանախօսութիւն արեց ս. Էջմիածնի տօնի առթիւ, որ և ստորև յառաջ ենք բերում ամբողջապէս: Ապա Ամենապատիւ Տ. Մեսրովբ սրբազանն առաջարկեց Նորին Կայսերական Մեծութեան կենաց բաժակը, որի վերայ երգեցիկ խումբը երգեց «Ցեր Պահեա», և Նորին Օծութեան ազգիս Վեհափառ Հայրապետի կենացը, որի առթիւ խումբը երգեց «Ցեր Կեցո» երգը: Երեկոյեան գեղեցիկ ճրագալոյց էր պատրաստուած թէ վանքի գաւթում և թէ Ճեմարանում, որ առաւօտուանից շքեղապէս զարդարուած էր գոյնզգոյն դրօշակներով: Ճեմարանում մոգական լապտերով պատկերներ ցոյց տրուեցան բացատրութեամբ հանդերձ, աշակերտները աւուր պատշաճի ոտանաւորներ կարդացին, իսկ երգեցիկ խումբը թէ վանքի գաւթում և թէ Ճեմարանում ուրախացրեց հաւաքուած բազմութեանը զանազան ազգային երգերով մինչև գիշերուան ժամ 11—ը, երբ ժողովուրդն սկսաւ ցրուել քաղցր տպաւորութեան տակ:

Զի հիմն այլ ոք ոչ կարէ դնել քան զեղեալն, որ է Քիստոս Յիսուս:
Ա. Կորնթ. Գ. 11.

Նորին Բարձր Սրբազնութիւն Ամենապատիւ Տեղապահ Հայրը բացատրեց մոտ իւրեանց հակիրճ խօսքերով այսօրուայ տօնի էական նշանակութիւնը: Մենք երբ տասարդներս սովորաբար խնդրի սրտաբին կողմի վերայ մեր ուշադրութիւնը կեդրոնացնելով՝ մոռանում ենք նպատքինը, էականը. խօսում ենք օրինակ եկեղեցւոյ մասին, բացատրում ենք նորա ազգային, կամ ազգակրան նը-

շանակութիւնը, օգտակար և վնասակար յատկութիւններ ենք տալիս՝ առանց քրիստոնէութեան, աստուածային անօրէնութեանց նկատմամբ մի քառ անգամ արտասանելու, գրուատում կամ վատաբանում ենք մի հայրապետի, մի եպիսկոպոսի, թերւում ենք նորա մարդկային անձնական արժանաւորութիւններն ու թոյլ կողմերը՝ առանց յիշելու, որ նա հոգևորական է և ևն։ Ս. Էջմիածնի վերայ և մենք ուրիշ աչքով ենք նայում, նորա ծոնին ուրիշ նշանակութիւն տալիս՝ քան մեր հայրերը։ Երևանցի մեծագործ Հայրապետը Սիմէօն, որին Մայր Աթոռը այժմ իսկ իւր շէն տեղերի մեծագոյն մասը պարտական է, իւր վարդապետութեան ժամանակի քարոզներից մէկի մէջ Ս. Էջմիածինը դրուատելով առում է. «Փրկիչը այնչափ սիրեց մեր ազգին, որ միանգամ աշխարհի մէջ յայտնուելուց յետոյ՝ կրկին անգամ յաւուրս մեզ համար իջաւ, մեր մէջ իւր համար միանձնական բնակավայր հաստատեց։ Այսպէս մեր նախնիք հայ ժողովրդեան շատ յաճախ Իսրայէլեան ազգին էին նմանեցնում, այստեղ ինչպէս և այնտեղ մի առանձին կապ էին տեսնում Աստուծոյ և մարդկանց մէջ կնքուած. Ս. Էջմիածինը Հայոց Մայր Եկեղեցին, այն միակ հիմնաքարն էր նոցա համար, որի վերայ կառուցուած գիտէին իրենց հոգևոր և բարոյական կեանքի շէնքը։ Ս. Էջմիածինը երկնքի և երկրի մէջ ձգուած մի սանդուխք, որ խաւար և չար աշխարհից դէպի լուսոյ և երանութեան անվախճան թագաւորութիւնը պիտ առաջնորդէր նոցա. և վերկութեան այս տաճարի գովքն անելու, նորա փառքի ու պարծանաց մեծութիւնը պատմելու համար խօսք չէին գտնում նոքա։ Սակայն այսօր Մայր Աթոռի պարծանաց նշանները չեն, որ նորա շրջափակից ներս մտնողի աչքին են ընկնում, այլ աւերակ և ամայի տեղերը։ Դառն և անուրանալի իրողութիւն է դա, և երբ ամէնքը այդ են մատով ցոյց տալիս, անօգուտ կլինի մեզ համար ձօն ու դրուատներով զբաղուիլ, հարկաւոր է ժամ առաջ տեսնել, որտեղ է պակասութիւնը և դարման տանելու աշխատել։

Պակասութիւններ շատ կան և ժողովուրդը նոցա բոլորի համար մեզ հոգևորականներիս, ս. Էջմիածնի միաբաններիս է մեղադրում։ Այս մեղադրանքն արդէն այնքան սովորական է դարձել, մեր ականջն այնպէս վարժուել է հոգևորականների և հոգևորականութեան հասցէին ուղղուած նախատինքներ լսելու, որ ինքներս թոյլ ենք տալիս խօսել ամէն ինչ մեր ներկայութեամբ և մինչև իսկ կրկնում ենք ուրիշի ասածը, ի հարկ է ամէն անգամ ընդհանուր կանոնից բացառութիւն համարելով մեր անձը։ Աւելորդ է ասել, թէ ինչքան ցաւալի է ինքնաճանաչութեան զգացմունքի այսպիսի մեծ պակասութիւնը. եթէ մեղադրանքն իրաւացի է նա բոլորին, ընդհանուր կազմութեանն է վերաբերում և ոչ ոք իրեն բացառութիւն համարել չէ կարող. ամէնքը մէկ տեղ և իրաքանչիւրը իւր չափով պէտք է ջանան այդ մեղադրանքի տակից ելնելու, ամէնքը զգան նորա ծանրութիւնը։

Աղտարև ժողովրդի վճիռը շատ բանի մէջ չափազանցուած է և անարդար. հարկաւոր է մեզ միայն վերչին դարի պատմութիւնը աչքի անցնել, այն պատճառները քննել, որոնցից յառաջ է եկել իրերի այժմեան դրութիւնը. հարկաւոր է մեր հոգևորականութիւնը ուրիշների հետ համեմատել՝ որպէս զի մենք դիւրաւ համոզուինք, թէ այնչափ մեծ չէ մեր յանցանքը, որչափ նկարագրում են ժողովուրդը սովոր է պահանջներ միայն դնել հոգևորականների առաջ. նոյն թերութիւնները, որ նա աշխարհականի վերայ տեսնում է և տեսնում, հոգևորականին ոչ մի կերպ ներել չէ կարող. այն առաքինութիւնները, որ աշխարհականի անունն ու պատիւը բարձրացնում են, հոգևորականի համար ինքն ըստ ինքեան հասկանալի են համարուում և անուշադիր են մնում. մեր կոչումն այդպէս է և մենք ոչ միայն չգիտէ

նեղանանք դարանից, այլ և ընդհակառակը պարծենանք մեր առաջ դրած գաղափարի այդ մեծ չափով, որ իբրև մի անզուսպ խթան միշտ առաջ գնալ և դէպի կատարելութիւն դիմել է ստիպում մեզ: Եւ եթէ իրողութիւն է, որ այսօր ամէնքը հայ հոգևորականութիւնը անհամապատասխան են գըտնում իւր գաղափարին՝ մեր սրբազան պարտքը պիտի լինի հաշիւ տալ մեզ մեր թերութիւնների մասին և ամենայն լրջութեամբ հոգ տանել, որ նոքա ուղղուին: Ո՛չ միայն պատուի խնդիր է սա, այլ և գոյութեան, որովհետև մի հաստատութիւն կարող է միայն այն ժամանակ տևական լինել, երբ իւր գաղափարին համապատասխանում է: Մեր խօսքը նախ և առաջ կուսակրօն հոգևորականութեան մասին է, և որպէս զի նորա լաւն ու վատը ամէնքս պարզ աչքով տեսնենք, կարելի է իբրև չափ վերցնել օրինակ այն 3 գլխաւոր առաքինութիւնները, որոնք ի սկզբանէ հետէ անհրաժեշտ պայմաններ են համարուել կուսակրօն կեանքի համար՝ աղքատութիւն, զգաստութիւն, հնազանդութիւն:

Աղքատ են եղել այն հին ժամանակի կրօնաւորները՝ շատ քիչ բանի պէտք են ունեցել նոքա իրենց կոչումը սրբութեամբ կատարելու համար: Ուրիշ կերպ լինել սա չէր կարող, երբ մարդիկ նորա համար վանք էին մտնում, որ աշխարհից կարուեն, ամէն վայելք, կեանքի ամէն դիւրութիւններ ուրանան ու Տիրոջ սպասաւորութեան միայն նուիրեն իրենց: Իսկ մե՞նք, ո՞վ է աղքատ մեր մէջ. ամէնքը իրենց սեփականութիւնը, իրենց վայելքի միջոցներն ունին, աւաղ երբեմն փարթամ վայելքի միջոցներ ... Արդարև ժամանակի պայմաններն այնպէս են, որ մենք աշխարհից բոլորովին կարուել չենք կարող, հարկաւոր էլ չէ ամենևին որ կըբրուինք. ճշմարիտ կրօնաւորի կոչումն երբէք այդ չի եղել: Երբ Փրկիչը իւր աշակերտների մէջից հեռանում էր՝ «Ո՛չ զայս աղաչեմ՝ զի բարձցես զնոսա յաշխարհէ, այլ զի պահեսցես զնոսա ի չարէ», աղօթեց մի անգամ ընդ միշտ մեզ բոլորիս համար, և մեր սրբազան պարտքն է աշխարհի մէջ մնալ և գործել, բայց ոչ աշխարհօրէն:—Յատն այն չէ, որ մեզանից իւրաքանչիւրը ռոճիկ է ստանում, գնել կամ ծախել կարող է իւր իրերը ըստ հաճոյից. յատն այն է, որ մենք միայն մեր գնածը մերն ենք համարում, մեզ միայն իբրև եկուոր վարձկաններ նկատում: որ փոխանակ դրսից ներս քերելու, ներսից դուրս ենք տանում, աշխատում ենք կարել՝ որքան կարելի է մեծ պատառ հանել, այն հաստատութիւնից, որի շինութեան ծառայելու ենք կոչուած և որ այդպիսով քայքայուում ընկնում է օրըստօրէ. փոխանակ մենք աղքատանալու, որ նա հարստանայ՝ նորան աղքատացնում ենք, և մենք աղքատանում ենք բարոյապէս, կորցնում աւելի և աւելի իսկական աղքատութեան, փրկչի պահանջած հոգւոյ աղքատութեան շնորհը: Իսկ զգաստութիւնը ... զգաստութիւնը...:

.... Ինչքա՜ն կարևոր առաքինութիւն է յատկապէս մեզ համար, մեր ներկայ պայմանների մէջ հնազանդութիւնը, և ինչպէս յաճախ պակասում է նա: Մենք Հայերս մի հոգևոր միութիւն, մի հոգևոր համայնք ենք կազմում: չափեցէք և ձևեցէք, ինչպէս կամենաք՝ հոգևոր կապերն են միայն, գէթ առ այժմ որ մեր ազգային, ինքնուրոյն կեանքն ապահովում մեր միութիւնը հաստատ են պահում: իսկ այդ միութեան կենդանի, անձնաւորեալ ներկայացուցիչը ամենայն Հայոց Հայրապետն է, նորա նուիրական հեղինակութեան առաջ խոնարհելով միայն զանազան կեդրոնախոյս ատրրեր միանալ և դէպի մի նպատակ ձգտել կարող են: Այն տեղ, ուր բունի այժ, արտաքին միջոցներ չեն գործադրուում՝ հեղինակութիւնն է միայն, որ մի հաստատութիւն կանգուն պահել կարող է, և հնազանդութիւն այդպիսի տեղինակութեան՝ մի անհատի քմահաճութեանց տարերքին հպատակութիւն չի նշանակում, այլ խոնարհութիւն յօժար սրտով և լի սգևորու-

թեամբ գաղափարի առաջ։ Հնազանդութիւնն այս դէպքում կատարեալ առաքինութիւն է, որի բացակայութիւնը ո՛չ մի կերպ, ո՛չ մի պատճառանքով արդարանալ չէ կարող. որովհետև անհնազանդ գանուիլ համայնքի հոգևոր ամբողջութիւնը ներկայացնող հիմնականութեան առաջ՝ նոյն է թէ արհամարհել նոյն իսկ այդ համայնքը, նորան առաջնորդող գաղափարը, զրկել իրեն նորա անդամը լինելու իրաւունքից։ Իւրաքանչիւր այսպիսի անհնազանդութեան մի դէպք ծանր հարուած է տալիս մեր համայնական գոյութիւնը պատսպարող շէնքին, մի քար վիլցնում նորանից, և ինչպէս աւելի մեծ չափով ապիտաբեր է անհնազանդութիւնը բարձրագոյն հեղինակութեան, այնպէս նաև վնաբր չափով ստորագոյս հեղինակութեանց առաջ։

Սակայն բացի կրօնաւորական երեք առաքինութիւններից կայ և մի չորրորդը, որ յատկապէս մեր ժամանակի համար պահանջուում է առանձին չափով, որին նա և մեր ժողովուրդը մեծ կարևորութիւն է տալիս՝ պատրաստ լինելով յաճախ մինչև իսկ միսները անուշադիր թողնել, եթէ միայն այս վերջինը չէ պակասում՝ աշխատութիւնը։ Ինչպէս բոլոր մարդոց այնպէս և կրօնաւորի համար աշխատութիւնը ըստ ինքեան ամէն ժամանակ կարևոր պահանջ է եղել։ — Առանձնական կեանքի մէջ մարդ աւելի միջոց ունի իրենով զբաղուելու, իւր ենթակայական աշխարհի մէջ խորասուզուելու, իսկ մարդու ամենավատ թշնամին, ինչպէս յայտնի է, ինքն է. «դի ոչ բնակեալ է յիս, այսինքն ի մարմնի իմում բարի ինչ». առաքինի, բարոյական կեանքը միայն արտաքին, առարկայական աշխարհի մէջ գարգանալ կարող է, և աշխատութիւնն է, որ մարդուս առարկայական աշխարհ է դուրս բերում եսական մութ հակումներից, անասնական բնազդումների առաջն առնում։ Բայց միայն այդ բարոյական աղդեցութեան համար չէ մեր ժամանակը այնքան նշանակութիւն տալիս աշխատութեան, արտաքին վայելի, դատարկ բառերի շրջանն անցել է՝ գործ և արդիւնք է պահանջուում այսօր ամէն մէկից, և եթէ մեր մէջ այդպէս՝ ապա աւելի և ուրիշ տեղերում. որովհետև մեր աշխարհում տեղի ունեցող ամէն մի նոր շարժում թեթև, աղաւաղեալ արձագանգն է միայն այն մեծ շարժումների, որ քաղաքակիրթ աշխարհի կեդրոններում յուզուում են։ Իսկ այնտեղ արդարև աշխատութեան յարգը օր օրի վերայ աւելի բարձրանում է։ — Եթէ միջին դարերում աղնուական սիրողներն էին մէկին միւսի նկատմամբ այժ և գերազանցութիւն տալիս, եթէ այնուհետև դրամը նոցա տեղը բռնեց և պահում է մինչև այժմ այդ գերազանցող այժն ու նշանակութիւնը՝ հեռու չէ անշուշտ և արդէն իսկ իւր նշանները ցոյց է տալիս այն ժամանակը, երբ աշխատութիւնը բոլորի վերայ յաղթող պիտի հանդիսանայ և հասարակութեան մէջ պատուաւոր տեղ բռնէ, և հեղինակութիւն միայն նա ունենայ, որ տիրական աշխատանքով է ապրում։ Յօգուտ իւր և այլոց մի գրական արդիւնք ցոյց տալիս։ — Մի անգամ իմ ուսուցչապետներից մէկին, մեծանուն պատմագիտ Հառնակին, մօտ իսօսակցութիւն կար հռոմէական եկեղեցու մասին. իմ հարցին, թէ ինչո՞ւ մեր գարում իսկ ցիստեռեան կարգը այնքան նշանակութիւն ունի այդ եկեղեցու համար և այնպիսի մեծ ազդեցութիւն գործել կարող է՝ նա պատասխանեց. որովհետև կաթոլիկ հոգեւորականների մէջ ցիստեռեանները միայն են գրեթէ, որ աշխատում են՝ տոկուն և անընդհատ կերպով, մինչդեռ միւսները անգործութեան մէջ առատ եկամուտներ են վայելում. իսկ աշխատութիւնը մի այժ է, որ բոլոր պարապ մարդոց կամայ ակամայ խոնարհեցնում է աշխատողի առաջ։ — Շատ իրատական է այս օրինակը մեզ համար։ Ցիստեռեանները ուրեմն, որ այնպիսի սխուր հռչակ են վայելում, ո՛չ թէ իրենց խորամանկութեամբ և գաղտնի մեքենայութիւններով, այլ աշխատութեամբ, տոկուն եռեական աշխա-

ատեամբ են ձեռք բերել այն ազատութիւնն ու ազգեցութիւնը, որ նոյն իսկ մեր մէջ շատերի համար նախանձելի է երեւում ցանկութիւն է յառաջ բերում նման կազմակերպութիւն ունեցող մի մարմին ունենալ։ Անմիտ է ի հարկէ այդ ցանկութիւնը այն տեսակէտից, որ բարոյական մարդու համար աւելի անտանելի բան չկայ՝ քան մի սուրբ անուան տակ թագնուած անարդութիւնը. իսկ ֆիսւսեան կարգը իրրև այդպիսի մի երեւոյթ յայտնի է եղել պատմութեան մէջ։ Մեր եկեղեցու ազատ ազգային ներողամիտ ոգին, լայն հայեացքներն ու հեզահամբոյր լոյն սիրտ քնաւորութիւնը, նորա անուցած մանուկ հաւատքը, անպաճոյճ կրօնական կեանքն ու անոտաւեր բարոյականութիւնը՝ այնպիսի բարիքներ են, որ մենք ոչ մի արտաքին զօրութեան և շքեղութեան հետ չենք փոխի. բայց ուրիշի աշխատութիւնից օրինակ առնել կարող ենք՝ նոյն իսկ այս բարիքները պահպանելու և զարգացնելու, եկեղեցու շինութեան և անընդհատ վերանորոգութեան գործը հաստատուն հիմունքների վերայ դնելու համար։—Անողոք, անխուսափելի մի պահանջ է սա. եթէ մենք կրօնասէրներս մեր ժողովրդի աչքում կորցրած վարկը կրկին ձեռք պէտք է բերենք, մեր գոյութեան իրաւունքը ապացուցանենք՝ պէտք է անընդհատ աշխատենք՝ ոտկուն, եռանդուն, միահամուռ աշխատութեամբ. պէտք է գործ, արդիւնք ցոյց տանք։

Սակայն աշխատութիւնը ըստ ինքեան զուտ առաքինութիւն չէ և կարող է իրրև երկասյրի սուր գործ գրուել՝ երբեմն շինելու, երբեմն քանդելու համար, և մենք այս օրուայ ոճի հիմնական գաղափարին դառնալով՝ պէտք է ասենք՝ ոչ միայն շինել է մեր պարտքը, այլ և շինել միայն այն հիմքի վերայ, որից դուրս կենդանութեան ոչ մի հիմք չկայ։ Ինքը՛ն ըստ ինքեան հասկանալի է, որ մի հաստատութեան մէջ գոյեսաի արժանի աշխատութիւն միայն այն համարուիլ կարող է, որ նորա գաղափարին և նպատակին է ծառայում, և որ եկեղեցւոյ մէջ ոչ նորա ճշմարիտ գլխի և միակ Առաջնորդի հետ մէկտեղ չէ ժողովրդի ցրուում է։ Իսկ երբ գլուխը կայ և անելիքը ցոյց տրուած է՝ այն ժամանակ իւրաքանչիւր անդամի պարտաւորութիւնն է գործել իրեն արուած շնորհաց և կարողութեան չափով ընդհանուրի բարօրութեան համար, առանց մէկի տրածին առաւելութիւն տալու և միւսինը անարգելու, որովհետև «որ թուրն անգամք մարմնոյն՝ թէ տկարագոյնք իցեն, կարեւորք են»։ Հիմքը մէկ է և «եթէ ոք շինէ ի վերայ հիմանս այսորիկ՝ ոսկի, արծաթ, ականս պատուական, փայտ, խոտ, եղէգն՝ իւրաքանչիւր գործն յայտնելոց է, զի օրն ընդարեացէ, զի հրով յայտնելոց է. և զիւր որանչիւր գործն զինարդև իցէ՝ հուրն փորձեսցէ։ Եթէ ուրուք գործն, զոր շինեաց, կացցէ, վարձս առցէ. և եթէ ուրուք գործն այրեսցի՝ տուժեսցի. բայց ինքն կեցցէ. այլ այնպէս՝ որպէս թէ ի հուր»։ Ջանանք ուրեմն յառաջ բերել այնպիսի գործեր, որ այդ ահեղական կրակի մէջ դիմանալ կարող են. չպատրաստենք մեր անհոգութեամբ, մեղ տուած նուիրական ատանդները անխնամ թողնելով, ի չարը գործ դնելով՝ անվախճան պատասխատուութեան այն անշէջ հուրը մեզ համար, որից մահն անգամ ազատ կացուցանել կարող չէ, այլ անուցանենք այժմէն իսկ մեր մէջ Տիրոջ տան համար բորբոքուող այն սրբազան հուրը, որ եռանդ ու ոգևորութիւն է ներշնչում անդադար գործել և շինել ոտիպում. որով և «փութալ պահել զմիաբանութիւն Հոգւոյն յօրհնութեան, մի մարմին և մի հոգի, որպէս և կոչեցարուք ի մի յոյս կոչման ձերոյ»։ ամէն։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

ԹԱՂՈՒԱԾՔ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ։

1895 Մայիս 26-ին Շամախու Թեմի Գեր. Առաջնորդի *յայտարարութեան վերայ հիմնուած՝ պատուիրուեցաւ Աստրախանի Կոնսիստորիային Աս-*

խաբատի Խաչատուր քահանայ Փանեանցին փոխադրել Ղուբա՝ իւր և ժողովրդի ցանկութեան համաձայն, կարգելով նորա տեղ մեկ ուրիշին, մինչև նոր քահանայի ընտրութիւն կլինի Ասխաբատի ժողովրդի կողմից։

Մայիսի 31-ին Վեհափառ Կաթուղիկոսի սրբատառ կոնդակի համաձայն՝ 7 և 11 մայիսի Հ. 284 և 197, և ըստ գրութեան Տէր Նախարարին Ներքին գործոց՝ 23 յունուարի Հ. 331, Աղեքսանդրապօլի վիճակի Փոխանորդ Արժ. Աշոտ վարդապետ Շահնազարեանց հրաւիրուեցաւ յանդամութիւն Սինոդի. իսկ նորա տեղ ըստ բարեհաճ կամաց Վեհափառ Կաթուղիկոսի փոխանորդ կարգուեցաւ Արժ. Բագարատ վարդապետ Թաւաքալեանը։

Յունիսի 9-ին Սինոդը, հիմնուելով Աստրախանի Հայոց Կոնսիստորիայի յայտարարութեան վերայ՝ թոյլատրեց ըստ ծիսի Հայաստանեայց եկեղեցւոյ դրոշմ տալ բողոքական ծէսով մկրտուած Իւաւիթ Գաբրիէլեանի և Ամալիա Բարդելի որդի Սողոմոնին և մկրտել նոցա նորածին դստեր, տալով ծնօղաց ամուսնութեան վկայական, որ իրաւունք կտայ նոցա զաւակներին քաղաքական իշխանութեան առաջ օրինաւոր ժառանգներ ճանաչուելու։

Յունիսի 9-ին Վեհափառ Կաթուղիկոսի սրբատառ Կոնդակի համաձայն՝ 9 մայիսի Հ. 278, և ըստ գրութեան Տէր Նախարարի Ներքին գործոց՝ 7 ապրիլի Հ. 1553, պատուիրուեցաւ Շամախու Հայոց Կոնսիստորիային՝ ճանաչել Գեր. Մեսրոպ Արքեպիսկոպոսին հիւանդութեան պատճառաւ արձակուած առաջնորդութեան պաշտօնից, իսկ նորա տեղ կարգուած Գեր. Մակար եպիսկոպոսին։

Յունիս. 14-ին պարսկահպատակ Տէր Աւետիսեան Վահրդ քահանային Հին Նախիջևան քաղաքի Նոր Թաղի հովուութեան կարգուիլը հակառակ գտնելով Կովկասի Պ. Կառավարչապետի գրութեան վերայ հիմնուած սինոդի շրջաբերական հրամանին՝ պատուէր տրուեցաւ Նրևանի Կոնսիստորիային՝ հեռացնել յիշեալ քահանային և թոյլ չտալ ոչ մի օտարահպատակ հոգևորականի պաշտօն վարել իւր Թեմում։

Յունիսի 14—ին Սինոդը մերժեց Գանձակ գաւառի Մուռուտ գիւղի բնակիչ Յակովբ Տէր Իսահականի խնդիրը, որով նա՝ մի այրի կնոջ հետ ամուսնացած լինելով, ցանկութիւն է յայտնում քահանայական կոչումն ընդունելու—հակառակ գտնելով այն եկեղեցական կանոններին. որովհետև կնոջ կրկնամուսնութիւնը ամուսնու համար ևս կրկնամուսնութիւն է համարուում։

Յունիսի 26—ին Վեհափառ Կաթուղիկոսի սրբատառ կոնդակի համաձայն՝ 6 Փետրուարի Հ. 160, Սինոդը յանձնեց «կառավարչի կալուածոց Մ. Աթոռոյ Պ. Աւետիսի Տէր Գաբրիէլեանց գնաշուադարութիւն և գամենայն գրագրութիւնս Վանական Կառավարութեան Մ. Աթոռոյ՝ պատուիրելով նմա կատարել զայնս համեմատ կարգին սահմանելոյ յանցելոյ ամի, Այլ և հսկել նմա անձամբ և ցուցանել վարողի հաշուեմատենից ճեմարանի, զի հաշիւք նոցին նոյնպես վարեսցին կանոնաւոր եղանակաւ և ճշդութեամբ, ըստ տուեալ հրահանգաց Նորին Սրբութեան»։

---

1. ՌՈՒՍԱՀԱՅՔ.

ԲՆՍԱՐԱԲԻԱՑԻ ԹԵՄ.

—

Վեհափառ Կաթուղիկոսի առաջարկութեամբ և կառավարութեան թոյլտուութեամբ այսուհետև Թեմիս հոգևոր ատեանը (կոնսիստորիան) կը տեղափոխուի Նոր—Նախիջևան։ Այս կարգադրութեամբ կատարուեցաւ Բեսարաբիոյ Թեմի ժողովրդի վաղուցուան ցանկութիւնը. այսուհետև մի հայաշատ կենդրոն կը լինի առաջնորդանիստ քաղաք, ուր առաջնորդները հնար կունենան մօտիկից հոգալու իրենց հօտի պէտքերը։ Նոր—Նախիջևանը արդէն իսկ կենդրոնն է Թեմիս, որովհետև Բեսարաբիոյ Թեմի ժողովրդի մեծամասնութիւնն այդ քաղաքում և նրա շրջակայ հայ գիւղերումն են և արդէն իսկ Թեմական դպրոցն էլ այդ քաղաքումն է գտնուում։ Առաջնորդի ներկայութիւնն անհրաժեշտ է Նոր—Նախիջևանում նոյն իսկ Թեմական դպրոցի վերահսկողութեան համար, որովհետև ցարդ այդ դպրոցի հոգաբարձութեանը նախագահում էին քաղաքագլուխները։

—

Թեմիս հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնն օգտուելով Վեհափառ Հայրապետի ներկայութիւնից Նոր—Նախիջևանում, առաջարկել է տեսուչ հաստատել պ. Փ. Զարըխեանին, որ քանի տարի է ահա տեսչի պաշտօնակատար է։ «Արարատի» անցեալ համարում պատահաբար ներս էր սպրդել այն սխալ լուրը, թէ Նորին Վեհափառութիւնը հաստատել է արդէն պ. Զարըխեանին տեսուչ Թեմական դպրոցի, մինչդեռ այդ հաստատութիւնը տեղի չէ ունեցել։

—

Վեհափառ Հայրապետը Իւր սրբատառ կոնդակով յայտնել է Սինոդին, որ Քիշնևի Կոնսիստորիայի նախանդամ և կալուածոց կառավարիչ Երժանապատիւ Յուսիկ վարդապետ Մովսիսեանը հաստատուած է ժամանակաւոր կառավարիչ Բեսարաբիոյ Թեմի։

ԱՏՐԱԽԱՆԻ ԹԵՄ.

Ս. Էջմիածնի Սինոդում ստացուած վեհափառ Հայրապետի կոնդակից յայտնւում է, որ Սինոդի անդամ Գերապատիւ Արիստակէս եպիսկոպոս Սեդրաքեանը նշանակուած է Աստրախանի թեմի առաջնորդ։

—

Արժանապատիւ Յովսէփ Աւագ քահանայ Բուենեաեան խնդրում է մեզ յայտնել հրապարակաւ, որ նա իւր խնդրագրով յունիս ամսի սկզբին արձակուած է Աստրախանի վիճակային Առեանի անդամութեան և նոյն տեղի եկեղեցեաց գործակալութեան պաշտօնից։

2. ՏԱՃԿԱՀԱՅՔ.

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՆՈՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԸ.

Յունիսի 6-ին Ատանայի մէջ գումարեալ ժողովը Կիլիկիոյ կաթուղիկոս ընտրել է ՊԳերապատիւ Գրիգորիս եպիսկոպոս Ալէքսեանեան, առենապետ կրօնական ժողովոյ և քարոզիչ Ս. Խաչ եկեղեցւոյ Իւսկիւտարի։ Գորանով ընդարձակ ասպարէզ է բացւում նորին Սրբազնութեան առաջ օգտակար հանդիսանալու Կիլիկիոյ բազմակարօտ ժողովրդեան։ Զանազան տարուբեր կարծիքներ լսած լինելով Գրիգորիս սրբազանի արժանեաց, ցարդ վարած պաշտօններու և վերջին ընտրական գործողութեանց մասին, մենք կգժուարանանք որ և է կարծիք յայտնել այս ընտրութեան յաջող կամ անյաջող լինելուն նկատմամբ, այլ սպասելով, որ արդարացնէ ընտրող ժողովրդեան տածած յոյսերն առ ինքն, ի բոլոր սրտէ կարողութիւն և յաջողութիւն կը մաղթենք։

Աւելորդ չենք համարիր հակիրճ կենսագրութիւնն անել նորընտիր կաթուղիկոսին։ Պօլսոյ Պալատ թաղում ծնուած է 1840—ին, նախնական կրթութիւն ստացել է տեղւոյն թաղին վարժարանում և ի վերջոյ Իւսկիւտարի ճեմարանում։ 1863—1866 հրատարակել է «Թռչնիկ Պեզասեան» հանդէսը. ճանապարհորդութիւններ արած է ի Կիլիկիա և ապա ի Հայաստան. վարդապետ ձեռնադրուած է 1866—ի վերջերում Աղթամարայ մէջ. 1869-ին Բաբերդ գնացել է առաջնորդական պաշտօնով և մի տարի վերջ Երզնկայի վիճակին էլ առաջնորդ ընտրուելով մինչև 1874 ի միասին հովուած է այդ երկու վիճակներն, որք ապա հոգելոյս Ներսէս Պատրիարքի տնօրէնութեամբ բաժանուած են և Ալէքսեան շարունակել է իւր պաշտօն Երզնկայում։ Բաբերդի մէջ տղայոց և Երզնկայի մէջ աղջկանց ուսումնարաններ կառուցած է։ 1877-ին հրաժարելով Երզնկայի առաջնորդութիւնից, հաղիւ իՊօլիս վերադարձած էր և ահա Մշոյ առաջնորդ ընտրուելով, գնացած է ի պաշտօնատեղին և նոյն տարին եպիսկոպոս էս ձեռնադրուած է Երջանկայիշատակ Գէորգ Դ. Կաթուղիկոսից իվերայ Տարօնոյ։ 1880—ին Օսմանեան կառավարութեան պահանջմամբ իՊօլիս գնացած և անդ քարոզչական պաշտօնով մնացել է մինչև 1885 Թուականն և Յարութիւն Պատրիարքի ջանիւք արտօնութիւն ստացել է քաղաքական իշխանութիւնից մեկնել դէպ յիւր պաշտօնատեղին—ի Մուշ։ 1886-ին յոչ կամաց Մուշից հեռանալով Վանում Առաջնորդական պաշտօն ստանձնած է և Վարագայ վանուց փոխ-վանահայրութեան պաշտօնի հետ ի միասին երկու տարի վարելէ վերջ ստիպուած է ի Պօլիս գնալ։ Աշըքեան Պատրիարքի օրով կրօն. ժողովոյ անդամ ընտրուած է, բայց չէ հաստատուած Թուրքաց կառավարութիւնից, որ չէ ղլացել վաւերացնել 1894-ին, երբ կրկին ընտրուեց անդամ կրօնական ժողովոյ, որում կ'ատենապետէր, երբ ահա ընտրուեց Տանն Կիլիկիոյ Կաթուղիկոս։

—

Նորին Ամենապատուութիւն Մատթէոս Պատրիարքի հրամանով Մուշի առաջնորդական փոխանորդ է կարգուել Յակոբեան Վարդան վարդապետ, որ մի տեղական թղթակցի վկայութեամբ, մեր ընտրեալգոյն հոգևորականներէն մինն կարող է համարուիլ. մինչև այժմիւր պաշտօնների մէջ արիասիրտ կրօնաւորի առաքինութիւններով շատ անգամ հանդէս եկած է։ Մուշի բազմաչարչար և բազմակարօտ գաւառի համար ներկայ հանգամանքներում այդպիսի մի հովիւ նշանակելը իմաստուն կարգադրութիւն էր համարուէ։

—

Կիւրակէ յունիս 18-ին Արմաշի վանքում վանահայր Գերապատիւ Օրմանեան Սրբազանը քահանայ և աբեղայ է ձեռնադրել Գպրեվանքի առաջին ուսումնաւարտ իւր ձեռնասուն 7 սարկաւագներին, տալով նոցա՝ Բաբգէն, Խոսրով, Զաւէն, Մուշեղ, Սմբատ, Աղան և Մաշթոց անունները։ Այս ուրախառիթ եղելութեան մանրամասն նկարագրութիւնը միւս անգամ կտանք և կաշխատինք ծանօթացնել Գպրեվանքի կազմակերպութեան հետ։

—

Վանի փոխանորդ Սահակ վարդապետը Լիմ անապատի միաբանութեան կողմից վանահայր ընտրուած և կ. Պօլսի խառն ժողովով հաստատուած է՝ պայմանաւ, որ մնայ փոխանորդի պաշտօնին մէջ։

—

Գալաթիոյ եկեղեցւոյ քարոզիչ Յակոբեան Վահան վարդապետը Թոխաթի առաջնորդական տեղապահ կարգուած լինելով՝ նախ Տրապիզոն պիտ երթայ և նորերս անձնասպանութիւն գործած տեղ-

ւայն առաջնորդ Եղիշէ վարդապետի մահուան պա-
րագաները քննէ։ Կ. Պոլսի պատրիարքարանը տեղե-
կացած լինելով, որ խելագարութիւնից է այդ սար-
սափելի անձնասպանութիւնը յառաջ եկել՝ հրամա-
յել էր եկեղեցական հանդիսով թաղել հանգուց-
եալին։—Թողնում տուրս մեզ նկատել այս առթիւ, թէ
մեր ժամանակում, երբ այնպէս յաճախ են կրկնուում
անձնասպանութեան դէպքերը, ցանկալի էր, որ ե-
կեղեցական վարչութիւնը ամենայն լրջութեամբ վե-
րաբերուէր դէպի այս ծանր խնդիրը և դիւրաւ բա-
ցառութիւններ չանէր օրէնքից, տեղի տալով իրաւա-
ցի տրտունջների՝ թէ հարուստների, պատուաւոր
անձանց համար բացառութիւն են անում, խեղճե-
րին պատժում։ Անձնասպանի վերայ թաղման կարգ
չկատարելով, եկեղեցին յայտնում է, որ իր անդամ
ճանաչել չէ կարող նորան, որ զուրկ է գտնուել
քրիստոնէի ամենակարևոր առաքինութիւնից՝ ար-
համարհել է Ողորմած Աստուծոյ առատ շնորհը։
Ահ ու սոսկումով պէտք է տեսնէ ժողովուրդը,
թէ սիրոյ և ցաւակցութեան արտայայտութիւն չէ
գտնում նա, որ իւր յոյսը կտրել կարող էր։

—

Յուլիսի 22-ին Ղալաթիայի խորհրդարանի մէջ
տեղի է ունեցել սովորական կարգով Սահակ—Մես-
րոպեան մրցանակաբաշխութեան հանդէսը։ Մրցա-
նակի արժանացել են Արժ. Գիւտ քահանայ Ղազա-
եանի «Գիւտն Հայոց պատմութեան» և բժիշկ Ն.
Տաղաւարեանի՝ «Ծագումն հայ տառերի» աշխատու-
թիւնները։ Առաջինի համար յատկացուել է Իզ-
միրեան մրցանակից 45 ոսկի, իսկ երկրորդի համար
15 ոսկի։

3. ՊԱՐՍԿԱՀԱՅՔ.

ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՏԵՒԱՑԻ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ ԲԵՐԱԾ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

*Ա. Մակուայ (Շաւարշան որեւ Արտազ գա-
ւառ) սուրբ Թադէոս Առաքելոյ վանքից.*

1. Մի հնամաշ կտաւեայ վարագոյր Հայկական գեղեցիկ նկարներով։ Մեծութիւ-
նըն է հինգ արշին քառակուսի։ Յիշատակա-
գրութիւնն է՝ «Յիշատակ է վարագոյրս։ Փա-
«լատի որդի պապիկ։ Ծնօղին և եղբարս վար-
«գան և խաչատուրին։ Եւ ծնօղ պարիսկին։
«Ի գուան ի մամիկոսի առաքելին։ Յիշատակ
«օրհնութեան հոգւոյ Թվին ՌՃԼՐ-ին»։— Նը-
կարների տակի գրութիւնն է՝ «Այս է ա-
«կօբ առաքելոյ գլխադիր։ Բանտն այս
«է։ Պարտէզն այս է։ Այս Արատիւն է։
«Ես մահտեսի բգնատիոս եւդոկիացի։ Այս
«պատանատեղ է։ Այս գողգոթայ է»։

2. Երեք հատ կարմիր պղնձեայ տախտակ-
ների վրայ նկարած գեղեցիկ պատկեր-
ներ կիսաուղղ դրութեամբ։ Առաջինն պատ-
կերը ներկայացնում է Տիրոջ խորհրդաւոր
ընթրիքը։ Փրկիչը նստած է սեղանի մէջ տեղ,
շուրջը առաքեալները կիսաբոլորակ կազմած,
միայն մէկը առանձնացած է առաջին կողմի
վրայ՝ թերևս Յուդան, արևելցու պատկերով,
կարծես ձեռքին քսակ լինի բռնած։ Փրկչի
գլխի շուրջը լուսոյ ճառագայթներ են ցոլա
նում, իսկ միւս բոլոր առաքեալները ա-
ռանց լուսոյ պսակի են։ Նոցանից միայն Յով-
հաննէսը գլուխը թեքած Յիսուսի ուսի վրան՝
կարծես ննջում է։ Միւսները աչքերը յառած
դէպի Փրկիչը դիտում են, որ մատը խորհր-
դաւոր կերպով բարձրացրած՝ հաւանականա-
բար մատնչի մասին է խօսում։ Սոյն պատ-
կերի եռևը վերևի մասում երկու ուրիշ
մանրանկարներ կան, որոնք շատ եղծուած
լինելով դժուար որոշելի են։ Մեծութիւնն
է 33×29 սանտիմետր։

3. Երկրորդ պատկերը ներկայացնում է
հնագեալ կնոջ դատաստանը։ Յիսուսը կորա-
ցած՝ մատով գրում է գետնի վրայ, երեք ա-
ռաքեալներն էլ Յիսուսի եռևը կանգնած
դիտում են նորա արարքը։ Առաքեալներից
առաջինը, Պետրոսը (?), ուշադրութեամբ դի-
տում է Փրկչի արածը, իսկ Յովհաննէսը ե-
րեսը շրջած դէպի միւս առաքեալը՝ Յակով-
բոսը (?), ձեռքերի զարմացական նշանով խօ-
սում է նորա հետ, թերևս Տիրոջ արարքի
նկատմամբ։ Միւս կողմը հնացեալ կինը ձեռ-
քերը ծալած՝ գլխիկոր կանգնած, կէս ևրոպա-
կան զգեստով-վերջինիս և առաքեալների մէջ-
տեղը քահանայապետը իւր բոլոր կրօնական
հագուստով, օրէնսգիրքը ձեռքին, կասկա-
ծով ունքերը կիտած և զայրոյթով նայում է
դէպի Փրկչի գործը, իսկ եռևը կամարակապ
սրահ է ներկայացնում։* Մեծութիւնն է՝
40×32 սմ։ Սոյն պատկերի միւս երեսին
հազիւ երևում է Տիրոջ խաչելութիւնը, մի-
անգամայն եղծուած է այս երեսը, ներքևի
մասից միայն հասկացուում է, որ նկարած է
եղել և սոյն երեսը։ Ըստ երևոյթին խաչ-
վառի միջի պատկերն է եղել սա։

* Այս պատկերի մէջ Յիսուսը եւ առաքեալները լու-
սոյ պսակ ունին։

4. Երրորդ պատկերը՝ Յիսուսը փշեայ պսակը գլխին, խաչի ծանրութեան տակ ընկճուած ընկած, իսկ շուրջը երեւում են զինուորների եղծուած պատկերներ։ Այս պատկերը միւս երկու պատկերներից աւելի շատ է եղծուած. փշեայ պսակի շուրջը լուսոյ պլսակի ճառագայթներ են ցոլանում։ Մեծութիւնն է 23×20 սմ։ Այս երեք պատկերն էլ վերածնութեան հետևող եւրոպական ոճով արդիւնք են երևում։ Մասնագէտներին ենք թողնում աւելի ճիշդ որոշումը։

5. Երկու փայտեայ տախտակների վրայ նկարուած պատկերներ. սոցանից միևը ներկայացնում է Սուրբ Թադէոս Առաքելոյ, միւսը Սանդուխտ կոյսի պատկերը։ Թադէոս առաքելոյ պատկերը ներկայացնում է մի հասակաւոր անձն, լուսոյ պսակով և հայրապետական կապագոյն վերարկու ուսերին, վերարկուի տակ շագանակագոյն հագուստ, իսկ վերջինիս տակ կարմրագոյն ծիրանի. աջ ձեռքին խաչաձև գաւազանանման սուրը խրած գետնին, իսկ ձախ ձեռքով սուրբ գիրքը գրկած. մի համեստաբարոյ Հրէայի կերպարանք։ * Իսկ պատկերի շուրջը երևումեն վանքեր, մատուռներ և դամբարաններ։ Պատկերի երկու կողմի գրութիւնն է՝ «Սուրբ առաքեալն Թադէոս». Իսկ պատկերի տակի մի տող գիրն է՝ «Ցիշատակ է Մինաս վարդապետին ի գուռն Սուրբ Թադէոսի առաքելոյն Թվ. ՌՃՀՉ-ին»։
Սոյն գրութիւնը այնքան եղծուածէ, որ մի այն խոշորագոյցով է կարդացուում։ Մեծութիւնն է 23×30 սմ։ Տախտակը թեւերևս ընկուզեայ լինի։

6. Սանդուխտ կոյսի պատկերը ներկայացնում է մի չքնաղ գեղեցկուհի արքայական ընդելուզեալ թագը գլխին, վարդագոյն ծիրանի ուսերին, հեռաձակ գանգուր մազերով, կարմրայտ, խոշոր և սև աչքերով և սնդիրով պարթև հասակով. երկու ձեռքին սուրբ գիրքը բռնած, երեսը փոքր ինչ մի կողմ թեքած, դիտում է և մտածում. իսկ երեսին դէմ առ դէմ լուսոյ ճառագայթներ են ցոլանում։ Ծիրանիի տակ բաց կանաչագոյն կապայաձև հագուստ, իսկ բազուկները կարմրագոյն թևնոցներով։ Երկու կողմին երեւում են վանքերի, մատուռների և դամբարանների պատկերներ։ Այս երկու պատկերները թերևս լուսեղեն տեսակի մի գործ համարուին։ Պատկերի հիւսիս-արևմտեան անկիւնը կտորած է։ Պատկերի վրայի երկու կողմի գիրն է՝ «Սուրբ կոյսն Սանդուխտ». իսկ պատկերի տակի գիրը՝ «Ցիշատակ է Մինաս վարդապետին ի գուռն սուրբ Թադէոսի առաքելոյն Թվ. ՌՃՀՉ-ին»։ Նոյն Մեծութեամբ։

7. Մի զոյգ պղնձեայ քշղոց, որոնցից մինը կոտրած՝ երկաթով կարկատած և երկաթէ կոթով, 24 եղրաձակերով՝ բոժոժներ համար։ Երկու երեսների անճաշակ նկարները ձևով միանման են և ներկայացնում վեց թևեայ սերոբէներ, իսկ թևերի արանքներում խաչեր նկարած։ Առաջին երեսի յիշատակագրութիւնն է՝ «Յիշատակ է սարգիսի որդի յարութեին և թամամին սառային ի գուռն սուրբ աստուած աստուածածնին». Մեծութիւնն է՝ 23×23 սմ։ կոթի երկարութիւնը 19 սմ։ ծակերում երեք օղակներ։

8. Միւս քշղոցը առանց պատկերի՝ 18 եղրաձակերով, մէյն եղերքից 2 1/2 սմ. լուսանցք թողած և երեք սմ. լայնութեամբ ժապաւէնաձև փորագրած։ Կոթը պղնձեայ և հագցրած։ Յիշատակագրութիւնն է առաջին երեսի վրայ «Ցիշատակ է Դանէլի որդի գրիգոր ի գուռն սուրբ Մեծոր աստուածածնին Թվ. ՌՃԼՉ վանեցի»։ Միւս երեսի գիրն է. «Գրիգորի որդի Սարօն Քրիստուց եսիր գնեց և յիշատակեց ի գուռն փիրվայ սուրբ սահակի Թվին ՌՄՀՐ»։— Մեծութիւնն է 25 1/2 սմ×25 սմ։ կոթի երկարութիւնը 12 սմ։ հաստութիւնը 11 սմ։ կոթի մէջ հագցրած է մի ձուլածոյ Յիսուս, ուղիղ մէջ տեղը. սոյն երեսի վրայ հագցրած է չորս կապոյտ խամքար։ Իսկ միւս երեսին չորս կապոյտ թեւերի վրայ, մի կարմիր էլ մէջ տեղը. խաչի թևերի կռնակներում ամրացրած է չորս կանաչ լոբիայի մեծութեամբ խամ քար։ Յիշատակագրութիւնն է՝ կոթի վրայ գրած. «Ցիշատակ է սուրբ խաչս Սէվուկի որդի «դի Հարտպետին և եղպօր Նազպարէին և «օվանէսին որ եռ ի գուռն սուրբ Թումա «առաքելին Թվ ՌՃՂՉ ին»։ Մեծութիւնն է՝ բարձրութիւնը 27 սմ։ թևերի փռուածքի լայնութիւնը 12 սմ։ կոթը պատուակով։

* Գլխի մազերը ծակատի կողմից թափած, ճաղատ, իսկ ականջների շուրջը գեղեցիկ գանգուր եւ թաւ մազեր. լայն ճակատ, խոշոր աչքեր, արծուաքիթ. թաւ միրուք եւ բեխեր, պարթև եւ հասակ. ոտնամանները թերևս փայտեայ սղոցը։

10. Փոքրագիր խաչը առաջին երեսի վերայ մէջ տեղը ունի մի ապակէ ուռոյցք, որի տակն անյայտ մասունքներ։ Մասունքի շուրջը գրութիւնն է՝ «Յիշատակ է սուրբ խաչս Մշկերացի ոճնապետին եւ որդուն գէորքին ձեռամբ կարապետ վարդապետին ի դրանն կենդանագիր ոսկրբք պատկերին 1221 (?)»։ Խաչի միւս երեսին ամենանուրբ կերպով քանդակած է Տիրոջ յարութիւնը, խաչի մէջ տեղը, իսկ թեւերի վերայ չորս աւետարանիչները իւրեանց նշանաբաններով։ Թեւերի կռնակներում հագցրած կան չորս բուսա։ Մեծութիւնն է քառակուսի $8^1/_2 \times 8^1/_2$ սմ։ իսկ կոտրած կոթի երկարութիւնը 10 սմ։ խաչը ոսկեզօծած, իսկ կոթը ոչ. կոթը արճիճով և երկաթեայ լարերով է ամրացրած։

11. Մի եպիսկոպոսական խոյր՝ մոգ կապոյտ աթլասի վրայ ոսկեթել ասեղնագործած. ճաճանչաւոր արեգակի մէջ նկարէն ասեղնագործութեամբ Աստուածածինը աթոռի վրայ բազմած, մանուկ Յիսուսը իր ծնկանը, աջ ձեռքով խաչակնքում է առաջևը ասեղնագործած կաթուղիկէի վրայ։ Յիսուսը արծաթաթել պատմուճան հագած, գլխին մարգարտաշար լուսոյ պսակ, ձախ ձեռքը սրտին։ Աստուածամայրը նոյնպէս մարգարտաշար լուսոյ պսակով, բայց դեղնագոյն վերնազգեստը հագին, իսկ տակը մոգ կարմիր շապիկ. երևում է ձախ բազուկը և կրծքի կարմիրը։ Գլխի ծամերը ոլորած և գլխաշոր ծածկած պսակի տակին։ Կուրծքը նմանապէս մարգարիտներով զարդարուն։ Յիսուսի պսակի երկշարք մարգարիտները թուով 71 են կարեակի մեծութեամբ, Աստուածամօր պսակի եռաշարքը 210, նոյն մեծութեամբ, իսկ կրծքի շարքը 65 հատ նոյն մեծութեամբ մարգարիտներից։ Ոսկեթել ասեղնագործի միջոցները ոսպաչափ ոսկիկներով զարդարած, թագի եռանկիւնի ծայրում, ճաճանչաւոր գործուածքի մէջի փոքրիկ եռանկիւնիի մէջ, գործած է «Է» տառը, իսկ նրանից բարձր փոքրիկ խաչ։ Թագի բոլոր լուսանցքի ծալկատերև և ծալկակոկոն գեղեցիկ ասեղնագործ ժապաւէն՝ ոսկեթել, արծաթաթել և մետաքսաթել, կապոյտ և դեղին գոյներով։ Աստուածամօր ոտների տակ քիչ ներքև ասեղնագործած է երկու խոյրաձև պսակներ, կարմիր և ոսկեթել՝ առաջին պսակի մէջ գործած է «Ե» և «Վ» տառերը, մէջ տեղը վարդապետական գաւազան, իսկ պսակի կողքին ոսկեթելած է 1787։ Միւս կողմի պսակի մէջ «Մ» և «Մ» գրերը, մէջ տեղը աստղ, միայն պսակի կողքին 172 թուանշան գործած։ Ջասպուէնաձև լուսանցքաղարդի տակի մի տող գրութիւնն է՝ «Յիշատակ Զուպաթեցի Էմիրազի որդի մելիք Նազին նկարեալ»։ Թագի միւս երեսի ճաճանչաւոր արեգակի մէջ ներկայացրած է Տիրոջ մկրտութիւնը, Յիսուս Յորդանանում կանգնած ձեռքերը խաչած, իսկ Յովհաննէս Մկրտիչը մի ձեռքով ջուր է ածում Տիրոջ գլխին, միւսով, ձախով, դրօշակը բռնած գետի մէջ կանգնած. Յիսուսի և Յովհաննու մէջտեղը խաչապսակ արքայական գունդ, Յիսուսի միւս կողքին գառն Աստուծոյ. Յովհաննու միւս կողքին մի տերևկալած ծառ գետի ափին. գետի մէջ, ոտների տակ, լողում են երեք ձուկ, չոգին սուրբն էլ աղաւնակերպ իջնում է սուրբի միջից. թագի ծայրի ճաճանչաւոր եռանկիւնիից Աստուծոյ աջն է երևում. երկուքի գլխի լուսոյ պսակները մարգարտաշար՝ իւրաքանչիւրը 85 հատից, կորեկի մեծութեամբ։ Սոյն երեսի լուսանցազարդերը և պսակագրերը նոյն են ինչ որ միւս երեսինը. միայն տակի տոդի գրութիւնն է՝ «Մկրտիչ մելիք Նազն եւ էջմիածնի Նիկրակ եփրեմ վարդապետին»։ Թագի մեծութիւնն է՝ բարձրութիւնը 42 սմ, բերանքի լայնութիւնը 31 սմ. միջի լայնութիւնը 36 սմ իսկ թագի արտախուրակների ասեղնագործ ծալկեռնկարները նոյն են ինչոր թագի լուսանց քինը, միայն արտախուրակի վրան աւելի ծալրիկներ և աւելի պաճուճանք։ Մինի վրան ծալրիկների մէջ կոլորակ շրջանակի «Ե» «Վ» տառերը, մէջտեղը գաւազան, միւսին «Մ» «Մ» գրերը, տակը երկու եռանկիւնի իրար հագցրած։ Մեծութիւնը՝ երկարութիւնը 43 սմ. լայնութիւնը 9—7 սմ. (լայն և նեղ կողմեր)։ Գլուխը գնելու բերանքի աստառը բաց դեղնագոյն լսթ, իսկ թագի գլխի երկճիւղի միջի աստառը կարմիր վարդագոյն աթլասից։ — Ահա Ջեզ երջանկայիշատակ եփրեմ կաթուղիկոսի 108 տարեկան թագի նկարագրութիւնը։

12. Մի ղոյգ վակաս, երկուսն էլ մարգարտաշար, մինը 9, իսկ միւսը 13 պատկերներով։ Առաջնի մէջտեղի ասեղնագործ նկարը պատկերացնում է Յիսուս Քրիստոս մարգարտեայ լուսոյ պսակով սուրբ գիրքը գրկած ձախ ձեռքով, աջովը խաղաղութիւն է իաչակնքում։ Հագած ղգեստը բաց դեղին, կապոյտ և մխրճագոյն մետաքսեայ թելերով։ Քրիստի երեսն և ձեռքերը ցորենագոյն թելերով, մազերը մոգ։ Քրիստի աջ կողմին ասեղնագործած է Աստուածամայրը, մարգարտէ

լուսոյ պսակով, երեսը և ձեռքերը ցորենագոյն, աչքերը և յօնքերը սև, իսկ շորերը կապոյտ և մխրագոյն թելերով. երեսը կիսաթեք ուղղած դէպի փրկիչը կանգնած է, բազուկները տարածած դէպի Միածին Որդին։ Քիսուսի Ձախակողմեան պատկերը՝ Յովհաննէս, երեսը դէպի փրկիչը, նմանապէս բազկատարած. Յովհաննէսի մազերը, բեհեզը, աչքերը և յօնքերը և միրուքը նոյն, ինչպէս որ Յիսուսինը, միայն Յովհաննէսի մազերը գանգուր են։ Հագուստը՝ կանաչ, կապոյտ և մխրագոյն թելերով, իսկ պատմուճանը դեղին։ Յովհաննէսի կողքին ատեղնագործած է Պօղոսը, սուրբ գիրքը գրկած. մազերն և միրուքը կիսատպիատակ և կիսաթափ հագուստը կապոյտ, մխրագոյն. երեսը դէպի Յովհաննէսը կիսատ ուղղուած։ Պօղոսի կողքին էլ Ղուկասը, նոյնպէս սուրբ գիրքը ձեռին, նոյն թելերով հագուստ. աչք, ունք, բեխեր, մազեր սև և ոսկեգոյն դեղին թելերով։ Ղուկասի կողքին էլ Յովհաննէս (աւետարանիչ), սուրբ գիրքը ձեռին նոյն ոճով նկարուածքամբ կանգնած, սպիտակ միրուքով. հագուստը դեղին և բաց կանաչ գոյներով։ Միւս կողմը, Մարիամի կողքին՝ Պետրոսը, սուրբ գիրքը ձեռին. կանաչ կապոյտ և դեղին թելերով հագուստ. խոշոր աչքերով, կարճ կլոր միրուքով։ Պետրոսի կողքին Մատթէոսը երկու ձեռքով սուրբ գիրքը բռնած՝ միրուքը և մազերը կիսատպիտակ. երկար միրուք Պօղոսի և Յովհաննու նման կապոյտ մխրագոյն թելերով. իսկ սրա կողքին էլ Մարկոսը, ձախով սուրբ գիրքը բռնած, իսկ աջով խաչակնքում է. կարճ միրուք, դեղին կանաչ մխրագոյն թելերով հագուստ։ Նոյն վակասի բոլոր նկարները արտայայտիչ դէմքերով նուրբ գործուածքի հմուտ արհեստաւորի գործ են։ Բոլոր պատկերները բաժանուած են մարգարտաշար խորանիներով՝ ամենեքեանն էլ մարգարտեայ լուսոյ պսակով։ Վակասի վերևի լուսանցքի գրութիւնն է. «Մարկոս, Մաթէոս, Պետրոս, Մարիամ Քրիստոս, «Յովհաննէս, Պօղոս, Ղուկաս, Յովհաննէս»։ Իսկ տակի լուսանցքի յիշատակարանը՝ «Քիշատակ է վարշամակս՝ առաքեալ վարդապետին ի վայելումն անձին իւրոյ եւ յիշատակ բերի յեռ ելից աստի թվ. ՌՂԱ»։ Գործուածքի տեղը ոսկեթել. գրութիւնը նոյնպէս։ — Ահա Ձեզ Դավրիժեցի Առաքել պատմագրի վարշամակը և վակասը։ Ընդամենը վակասի վրայ խոշոր կանեփահատի չափ 1022 հատ մարգարիտ կայ։ Մեծութիւնն է՝ երկարութիւնը 57 սմ., լայնութիւնը 15 սմ. աստառը կտաւ և շագանակագոյն կաշի։ Վակասի թիկունքը շաղաշատեռ քաթան, նոյնը կտաւէ աստառ՝ ծիրանի, մանիշակի, դեղին, սպիտակ զոլերով. լայնութիւնը 57 սմ. երկարութիւնը նոյնպէս։ Սոյն վակասի ասեղնագործ նկարները օրինակելի են։

14։ Միւս վակասը պատկերացնում է Յիսուսին իւր երկոտասան աշակերտներով, բայց անճաշակ. նմանապէս մարգարտաշար նկարներով. խորաններ և լուսոյ պսակներ։ Յիսուսը աթոռին նստած խաչակնքում է։ Պօղոսի և Պետրոսի ձեռին մի մի բանալի։ Յակոբոս և Թադէոս առաքեալների ձեռքին սուրբ գիրք, մնայեալները մի մի գաւազան ձեռներին բռնած։ Նկարների ներքևի յիշատակագրութիւնն է. «Քիշատակ վկաս. ՄԹԷոս վարդապետն եւ ուր ծնողքն Դաւթին եւ ուր կնակցին աղջան և քոյ թվ. ՌՃԾ թ.»։ Մեծութիւնն է՝ երկարութիւն 55 սմ., լայնութիւն 16 սմ։ Մարգարիտները 1055 փոքրագիր։ 24 կանաչ քարեր, 5 սպիտակ, 7 կարմիր, 11 դեղին, 4 մխրագոյն. բոլորն էլ խամ քար, իսկ երկու քար ընկած են։ Թիկունքը կարմիր կտաւից 70 սմ. երկայն, լայնութիւնը վակասի երկարութեամբ։ Վակասի տակը շագանակագոյն կաշիից։

15։ Մի զոյգ ծոցուրար, որոնցից մինը կարմիր մեռաքսէ կտորի վրայ, միւսը կարմիր աթլասի վրայ ասեղնագործած։ Առաջին հնամաշ ծոցուրարը ծածկուած է 90 հատ 3 ½ սմ. տրամագիծ ունեցող ոսկեթել խրնձորադարդերով։ Ներքևի ծայրը 4 սմ. լայնութեամբ ժապաւինաձև ոսկեթել և արծաթաթել պաճուճանք։ Ծայրը արծաթեայ ծոպերով։ Մեծութիւնն է՝ երկարութիւնը 144 սմ. ներքևից, լայնութիւն 52 սմ., մէջ տեղինը 34 սմ., նեղ ծայրը կլոր ձուաձև։ Քիշատակագրութիւնն է՝ սրտի վրայ. «Քիշատակ է վար ? . Ռկ=ին»։ Աստառը կարմիր ներկած կտաւից։

16։ Միւս հնամաշ ծոցուրարը ներկայացնում է երեք մեխակի ծաղկաման, իրար գլխի, ասեղնագործած ոսկեթելերով, իսկ կոկոնների և բողբոջների վրայ գործ է ածած կանաչ, կապոյտ, դեղին, սպիտակ և մխրագոյն մեռաքսեայ թելեր։ Վերևի ծաղկամանի փրուած մեխակների մէջ ասեղնագործած է մի հաւասար քառաթև խաչ։ Լուսանցազարդերը ոսկեթել ժապաւէններով զարդարած՝ ներքևի լուսանցքը զառ դիսկակ կտորով կարկատած և ոսկեթել ծոպերով. աստառը կարմիր կտաւից, կանաչ մեռաքսէ եղերափակով։ Քիշատակագրութիւններ սրտի բացուածքի

շուրջը՝ «Ցիշատակ է եղինաբին վրդուհոյն ի «վայելումն եղբօրն եւսի վրդպետին· Թվին ՌՃԿԹ-ին» մեծութիւնն է՝ 142 սմ· երկարութիւն· 44—32 սմ· լայնութիւն· վղնոցի կոպմից 28 սմ· և ծայրը կլոր: Այս ծոցուածը իւր ժամանակուայ ձեռագործների մէջ օրինակելի կհամարուի, զուտ հայկական գործ:

16· Մի զոյգ ծածկոց միևնոյն սկհոյ միւսը աւանդատան: Ասանդատան ծածկոցը ներկայացնում է մի բարձի անասո 58 ծաոերից բաղկացած, ասկին և երկու կողերին լայն ոսկեթել լուսանցազարդ ծաղկենկար զարդարանք: Անասոը գործած է կարմիր աթլասի վրայ, իսկ լուսանցազարդն ու եզրազարդը մախրագոյն աթլասի վրայ: Ցիշատակագրութիւնն է, սասոաոից քարձր ծածկոցի վերևի մասում երեք տողից՝ «Ցիշատակ է ծածկոցս Մարիամին եւ որդոցն իւրոց Աթանդելին որ եասն թագէոս առաքելոյն սուրբ վանքին Թվ· ՌՄՃԹ·» մեծութիւնն է՝ երկարութիւնն 90 սմ· լայնութիւնը 50 սմ եզրանկարով հանգերձ:

17· Իսկ միւսը՝ սկհոյ քող· բաց սև ազլուխի վրայ ասեղնագործած մի արեգակ, մէջ տեղը մի խաչ, իսկ ազլուխի չորս ծայրին մի մի խաչ· արեգակի չորս կոզմը չորս հրեշ ոակ, ազլուխի շուրջը ժապաւէնաձև եզրազարդ, մէջտեղի պարապ տեղերում չինաձև զարդեր: Ձաճանչաւոր արեգակի շուրջը քոլորակ շրջանակ, իսկ սորա մէջ էլ ցիշատակագրութիւն, որ է այսպէս· «Ցիշատակ է Սիթինճի խոջատուրին ի դուռն սուրբ առաքելոյն թագէոսի ի իմմուրէ առքի Թվ· ՌՄԼ·» մեծութիւնն է՝ 90×90 սմ· քոլոր գործուածքը արծաթաթելիւով:

(Շարունակելի)

վեհափառ հայրապետի ուղեւորութեան մասին ստացած վերջին տեղեկութիւնները:

Հորժամ ժամանել է Ներսին Սրբութիւնը ամսոյս 4-ին, առ· 8½ ժամին, և նոյն օրը ժամը մօտ 2-ին այցելութիւն է գնացել Ներսին Հարգութիւն Մեծ իշխան ՆԻԿՈԼԱՅ ՄԻԽԱՅԼՈՎԻՉԻՆ, որև ժամը 6-ին փոխադարձ այցելութիւն է տուել Վեհափառին· տեսակցութիւնը տևել է 35 րոպէ: Յաջորդ օրը, ամսի 5-ին առաւօտեան, Վեհափառ Հայրապետը մեկնելով Հորժամից՝ ժամը 3-ին հասել է Ախալցխա և փառաւոր ընդունելութիւն է գտել: Ամսոյս 8-ին Վեհափառը գնացել է Ըբասթուման և յաջորդ օրը այցելել Ներսին Կայսերական Հարգութիւն Թագաժառանգ Գէորգի Ալեքսանդրովիչին:

Միևոդում ստացուած վերջին հեռագիրը հաղորդում է, որ Վեհափառ Հայրապետը ամսոյս 11-ին, առ· ժ· 9-ին Ախալցխայից մեկնել է դէպի Ախալքալաք:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ·

1· Թօմչի համաձայն գործ . . կ· վ· . . 225·
2· Մի նոր կրօնական թատերգութիւն· Գ· Ս· 226·
3· Մի ցիշողութիւն Անցեալից կ· վ· . . 229·
4· Նկնղեցական ջրոնիկոն 230

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ·

5· Մ· կաղանկատուացիոյ Պատմութեան ձեռագրերը· . . . Խ· վ· . . 235·
6· Սեհ գեծուածք . . Ս· Հայկունի . 239·

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ·

7· Բենեկ . . . Աբեղայ . . 245,
8· Գեղեցիկ Ընթերցանութիւն· Ս· ե· . . 245·
9· Մանրալուրք . . . . . 248·

ԱԶԴԱՅԻՆ·

10· Հայ հոգեւորականութեան մէջ կղեր· ոգի որոնողները . . կ· վ· . . 250·
11· Նկնղեցի հայաստանեայց . . . . 254·
Վեհափառ Հայրապետի ուղեւորութիւնը . . .
Կաթուղիկոս Ամենայն Հայոց . . . . . .
Մայր Աթոռ· . . . . . .
Պաշտօնական . . . . . .
1· Ռոհնսահայ . . . . . .
Բեսսարաբիոյ թեմ . . . . . .
Աստրախանի թեմ . . . . . .
2· Տաճկահայ· . . . . . .
3· Պարսկահայ· . . . . . .
Հնութիւններ· . . . . . .

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

Եւսեբիոսի ժամանակագրութեան հայերէն ձեռագիրները: —Այս վերնագրով մի հետաքրքրական յօդուած է տպուել լեզուագիտական Hermes թերթի վերջին՝ երեսներորդ հատորում, որի հեղինակն է մեծահռչակ պատմաբան պրոֆեսօր Մոմզէնը։ Նա յիշում է նախ և կարևոր ծանօթութիւններ տալիս Եւսեբիոսի ժամանակագրութեան հայկական թարգմանութեան մինչև այժմ յայտնի 3 ձեռագիրների մասին, որոնցից 2 առաջինները Վենետիկի Մխիթարեանց մօտ են և գործ են դրուել մինչև այժմ եղած հրատարակութիւնների համար, իսկ երրորդը, որ Մայր Աթոռի մատենադարանում է գտնուում՝ ծանօթ է եղել միայն Պետերմաննի տուած մի փոքրիկ նմուշով։ Ահա այս վերջին ձեռագիրն է, որի վերայ Մոմզէնի առաջարկութեամբ համեմատութիւններ է արել Մայր Աթոռիս միաբան Գալուստ Տէր Մկրտչեանցը, և մեծարժան գիտնականը ծանօթանալով այդ աշխատութեան արդիւնքի հետ Մարբուրգի համալսարանի արևելեան լեզուների Պրոֆեսոր Հայագէտ Ֆուտին թարգմանութեամբ, ներկայացնում է այս յօդուածի մէջ իւր հանած եզրակացութիւնը։ Երևան է գալիս, որ ս. Էջմիածնի ձեռագիրն է միայն հիմնական, իսկ միւս երկուսը լոկ արտագրութիւն են նորանից. այնպէս՝ որ մինն առանձնայատուկ ոչինչ չունի, իսկ միւսը թէ և ունի տարբեր շատ տեղեր, բայց դրա առհասարակ սըրբագրութիւն են արտագրողի կողմից՝ աւելի ճիշդ միտք դուրս բերելու նպատակով կատարուած։ Պէտք է ենթադրել, որ ս. Էջմիածնի ձեռագիրը 1696 թ. ին Թոխաթում է եղել, ուր այդ ժամանակ արտագրուել է Մխիթարեանց ձեռագիրներից մէկը, իսկ 1790 թ. ին Կ. Պոլսում՝ ուր նոյն միջոցին Մխիթարեանց միւս ձեռագիրն է արտագրուել։ Աւգերեան, որ հրատարակել է ժամանակագրութեան հայերէնը և լատիներէն թարգմանութիւնը, իւր 1802—1809 թ. Կ. Պոլսում գտնուած ժամանակ ձեռքի տակ է ունեցել դեռ մայր ձեռագիրը, և նորա թողած համեմատութիւններով կարելի է հաստատել, որ դա յիրաւի ուրիշ մէկը չէ եղել քան Մայր Աթոռի մատենադարանում գտնուածը։ Այդ պարզ երևում է նաև նորանից, որ երկուսն էլ բոլորագրով են գրած և ունեն իրենց վերայ մի Դէյէր կաթողիկէ կնիք, որ ըստ Աւգերեանի Գրիգոր Պահլաւունին է եղել, բայց ըստ Իւստիի աւելի հաւանական կարծեաց՝ Գրիգոր Տղան, Պետերմանը 1864 թ. ին այս ձեռագիրը շատ որոնել է Կ. Պոլսում և չէ գտել. ուրեմն արդէն փոխագրուած էր այնտեղից։ Իսկ երկք ձեռագիրների նոյն ծագումը յայտնի է նորանից, որ երեքի մէջ էլ պակաս և սխալ տեղերը նոյն են։ Այսպիսով պարզուում է, որ քննագատութեան համար նշանակութիւն ունի միայն ս. Էջմիածնի ձեռագիրը, և որովհետև Եւսեբիոսի ժամանակագրութիւնը նախնի պատմագրութեան ամենակարևոր գործերից է՝ Մոմզէն առաջարկում է մի նոր հրատարակութիւն ձեռնարկել այս ձեռագրի վրայով։

Բացի հայերէնից կան այս ժամանակագրութեան լատիներէն և ասորերէն թարգմանութիւնները և յունարէն բնագրից միայն հատուածներ։

—

Դրօշակ, պատմուածք Գ. Լեֆորի. Թարգ. Գէորգ ք. Մկրտումեանց։ Թիֆլիզ. 1895։—Մի փոքրիկ զրոյց է սա Ֆրանս—պրուսական պատերազմից, հայրենասիրական գաղափարով։ Թէ բովանդակութիւնը և թէ թարգմանութեան ոճը ընթերցանութեանը արգելք եղող ոչինչ չեն ներկայացնում, թէև յանձնարարելու համար էլ առանձին ոչինչ չունին։ Գինն է 8 կոպէկ։

—

Նոր Փնջիկ. խմբագրեց Գէորգ Բարուրեանց։ Թիֆլիզ 1895։ գինն է 5 կոպ։—Մի փոքրիկ ժողովածու դասագրքերից քաղուած հատուածների, որի համար կարելի էր գուցէ ընթերցողներ գտնել դպրոցում չեղած մարդոց մէջ և ներել, ինչպէս երևում է դեռ պատանի՝ խմբագրին, իւր անուն վաստակելու տենչը (նա խոստանում է շուտով ուրիշ նման գրքոյկներ էլ ընծայել), եթէ նա աւելի լաւ ուսեալներին իմացող աշխատակիցներ կունենայ այսուհետև, որոնք այսպիսի անմիտ բան չեն թարգմանի օր. «ես չեմ կարողանում նայել (наглядѣться) նրա հրաշալի փետուրներին, բայց ոտքերը ես չեմ էլ տեսել և ձայնն էլ չեմ լսել»։

—

Քամլեանց, Ս. Աստուած չճանաչողը։ Թիֆլիզ —Այս գրքոյկը, ինչպէս և հեղինակի միւս փոքրիկ զրոյցները, կարդացուում է հետաքրքրութեամբ, որովհետև ժամանակակից անցքերի վերաբերեալ մի դէպքի պատմութիւն է։ «Աստուած չճանաչողը» մի կարիճ տղամարդ է, որ իւր անվճռութեամբ ու քաջութեամբը սարսափ է գցում հարստահարին թիւրքերի վրայ և կարողանում է իւր ընտանիքի գոյքն ու պատիւը ապահովել նոցանից։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ս. Էջմիածնի Գէորգեան Ճեմարանի համար աշակերտ պատրաստողներին և պատրաստուածներին հրաւիրում ենք ի նկատի ունենալ, որ Մայր Եկեղեցու տպարանում տպագրուած պատրաստ է «Ծրագիրը այն առարկաների, որոնցից քննութեան են Մայր Եկեղեցու Գէորգեան Ճեմարանի էջմիածնի դասարանը մտնել ցանկացող աշակերտները» Ընդարատի անցեալ հաւարում լոյս տեսած «ընդունելութեան կանոնների» հետ միասին, և որ այդ ծրագրի համեմատ անաչառ և մանրակրկիտ քննութիւն կլինի։ Ճեմարանը ստիպուած լինելով շատ սակաւ թուով աշակերտներ ներս առնել այս տարի, ընդունել կարող է միայն ամենաընդունակներին և ամենալաւ պատրաստուածներին։ Թող նոքա, որոնք այդ հաշուի մէջ մտնելու յոյս չունին, յանձն չառնեն զուր տեղը նախապատրաստութեան և ճանապարհի ծախքերը։

Նոյն պղտարարութիւնն անել խնդրում ենք նաև հայ թերթերին։

ՕԳՆԱԿԱՆ ՏԵՍՉԻ

կարապետ վարդապետ.

ՄԱՄՈՒԼԻՏԱԿԵՆ

Ը. Պատկերազարդ Օրացոյց 1896 թ.

Ր. Յաճախապատում Ճառք Ս. Գրիգորի Լուսաւորչի.

Գ. Սոկրատ.

Դ. «Տեղագրութիւն Նոր—Բայազէտ գաւառի», աշխատ. Մ. Ընքեպս. Ս.

Ե. Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ.